

Ստեփան Դանիելյան, Արա Ղազարյան, Հովհաննես
Հովհաննիսյան, Արթուր Ավթանդիլյան

**ԿՐՈՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ**

Երևան- 2012

Սույն ուսումնասիրությունը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակում:

Այս ուսումնասիրության մեջ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որը պարտադիր չէ համընկնի ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ:

Սույն հետազոտությունը պատրաստել է «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնը: Այս ուսումնասիրության նպատակը, Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքներին համապատասխան, Հայաստանի դպրոցներում մոնիթորինգի իրականացումն է, որի համար ուսումնասիրվել են կրոնի և հավատքի ուսուցման ներպետական օրենսդրական բազան, դասագրքերի բովանդակությունը, դասավանդման մեթոդաբանությունը: Լայնորեն օգտագործվել են միջազգային իրավական փաստաթղթերը և հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները: Եղել են այցելություններ դպրոցներ և տեղում ուսումնասիրվել է իրավիճակը: Այդ ամենը վերլուծվել է սույն փաստաթղթում:

Բովանդակություն

Հապավումներ	4
Օգտագործված փաստաթղթեր.....	5
Ներածություն.....	7
Մեթոդաբանություն.....	9
1. Կրոնին առնչվող առարկաները հանրակրթական դպրոցներում.....	11
2. ՀՀ օրենսդրությունը կրոնական կազմակերպություններին, խղճի ազատությանը և կրոնին վերաբերող կրթության մասին	14
3. «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի նպատակը.....	32
4. Ուսուցիչների ընտրությունը և վերապատրաստումը	44
5. Կրոնական ծիսակատարություններ դասերի ժամանակ.....	70
6. Կրոնական քարոզներ դասերի ժամանակ.....	78
7. Կրոնական խտրականության և թշնամանքի սերմանում այլ կրոնական կազմակերպությունների դեմ	93
8. Եզրահանգումներ և առաջարկություններ ՀՀ իշխանություններին.....	124

Հապավումներ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ – Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն/ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գործակալություն

ՀԱՍԵ – Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի

ԿԳՆ – կրթության և գիտության նախարարություն

ՄԻԵԴ - Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՄԻԵԿ - Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

Թուլեդոյի ուղեցույց - Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ

ՔԴԿ - Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

Առարկա - «Հայոց եկեղեցու պատմություն» հանրակրթական դպրոցների առարկան

Օգտագործված փաստաթղթեր

- ՀՀ Սահմանադրություն
«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը
«Կրթության մասին» ՀՀ օրենքը
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը
Հավելված ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954 - Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392- Ն որոշման
«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը
ՀՀ ընտանեկան օրենսգիրքը
ՀՀ աշխատանքային օրենսգիրքը
ՀՀ քրեական օրենսգիրքը
Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ
1989թ. ԵԱՀԿ անդամ պետությունների ներկայացուցիչների՝ Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթուղթը, որը կազմվել է կոնֆերանսին հաջորդած եզրափակիչ ակտի սկզբունքների հիման վրա, Վիեննա, 17-ը հունվարի 1989թ
Եվրոպայի խորհրդի ժողովրդավարական հասարակարգում կրոնական հանդուրժողականության թիվ 1202(1993) հանձնարարականը, կրոնի և ժողովրդավարության վերաբերյալ թիվ 1396 (1999) հանձնարարականը և կրթության ու կրոնի վերաբերյալ թիվ 1720 (2005) հանձնարարականը
Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում, Ստեփան Դանիելյան, Վլադիմիր Վարդանյան, Արթուր Ավթանդիլյան, ISBN 978-92-9235-846-4, Երևան, 2010
ԱՄՆ պետական դեպարտամենտի Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույց-2009, Հայաստան

Վենետիկի հանձնաժողովի թ.թ. CDL-AD(2011)028 (17/10/2011),
CDL-AD(2010)054 (22/12/2010) և CDL-AD(2009)036 (23/06/2009)
փաստաթղթեր

Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի, թիվ 14807/88, ՄԻԵԴ,
25/05/1993թ., § 48

Կյելլսենը, Բուսկմադսենն ու Պեդերսենն ընդդեմ Դանիայի, թիվ
5095/71, 5920/72, 5926/72, 07/12/1976, § 53

Ֆուլգերն ընդդեմ Նորվեգիայի (ECtHR, App. No. 15472/02, 29 June
2007), para. 84 (h)

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Հասանն ու
Էյլեն Քենզինն ընդդեմ Թուրքիայի* գործով վճիռ. թիվ 1448/04,
09/10/2007թ., § 30-34

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային
դաշնագիր

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի թիվ 22 մեկնություն, § 6
«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի հիմնական դպրոցի
չափորոշիչները, ՀՀ ԿԳՆ

ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի «Տեղեկագիր» 5/2010

ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի «Տեղեկագիր» 5/2011

Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց –Մաս I,
2011թ., ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարա-
րություն

«Հայոց եկեղեցու պատմություն» դպրոցական դասագրքերը, 5-10
դասարաններ

Ներածություն

2002 թ. Հայաստանի հանրակրթական դպրոցներում սկսվել է դասավանդվել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան: Մի շարք ուսումնասիրություններում և զեկույցներում¹ կան փաստեր, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, որ այդ առարկայի դասավանդման ժամանակ խախտվում են ՀՀ Սահմանադրությամբ և Հայաստանի կողմից վավերացված և միջազգային համաձայնագրերով երաշխավորված իրավունքները: Հիմնական մտահոգությունները կապված են հետևյալ երևույթների հետ.

- դասերի ժամանակ կրոնական ծիսակատարությունների կամ կրոնական ծիսակատարության էլեմենտների կատարում,

- Հայաստանյայց առաքելական եկեղեցուց զատ այլ կրոնական կազմակերպությունների դեմ քարոզչություն և թշնամանքի սերմանում,

- կրոնական և ազգային պատկանելության նույնականացում:

Այս փաստաթղթի նպատակն է՝ ուսումնասիրել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման վերաբերյալ փաստաթղթերը, ուսումնական մեթոդիկան, դասավանդման պրակտիկան և դասագրքերի բովանդակությունը կրոնական հանդուրժողականության առումով:

Փաստաթղթում ներկայացված և վերլուծված են ՀՀ համապատասխան օրենսդրությունը, ԿԳՆ փաստաթղթերը և այս ուսումնասիրության հեղինակների՝ հանրակրթական դպրոցների «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի վերաբերյալ անցկացրած մոնիթորինգի արդյունքները:

Ուսումնասիրության վրա աշխատել են Ստեփան Դանիելյանը (աշխատանքային խմբի ղեկավար), Արա Ղազարյանը (իրավաբան), Հովհաննես Հովհաննիսյանը (կրոնագետ), Արթուր Ավթանդիլյանը (հարցազրույցները վարող):

¹ Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում, Ստեփան Դանիելյան, Վլադիմիր Վարդանյան, Արթուր Ավթանդիլյան, ISBN 978-92-9235-846-4, Երևան, 2010:

ԱՄՆ պետական ղեկավարամենտի՝ Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույց-2009, Հայաստան:

Ուսումնասիրության վերջում ներկայացված են առաջարկություններ ՀՀ կառավարությանը և ՀՀ կրթական ոլորտի պատասխանատուներին:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում ԱՄՆ-ի դեսպանատանն այս ուսումնասիրությանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար, ինչպես նաև «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպությանն ու Հայաստանում Նիդեռլանդների Թագավորության դեսպանատանը «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի «Կրոնական հանդուրժողակալությունը Հայաստանում» ծրագրին երկար տարիներ օժանդակելու համար, որի շնորհիվ կազմակերպությունը սույն ձեռնարկը կյանքի կոչելու համար համապատասխան ունակություններ է ձեռք բերել:

Մեթոդաբանություն

2012թ. ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի միջգերատեսչական հանձնախումբը մշակել է «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության» նախագիծ, որտեղ որպես նպատակ նշված է. «Կրոնի և հավատքի վերաբերյալ դպրոցական ուսուցման ծրագրերի վերանայումը դպրոցներում՝ Կրոնների և հավատքների դպրոցական ուսուցման Թուլեդոյի ուղղորդող սկզբունքներին համապատասխան»:

Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքների նախաբանում ասվում է, որ հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ այդ փաստաթուղթը պատրաստել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ խորհրդատվական խորհրդի՝ կրոնի կամ հավատքի ազատությունների գծով մասնագետները: Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքների նպատակը ԵԱՀԿ մասնակից երկրներին ընդառաջելն է, եթե նրանք կրոնական ազատություն խրախուսելու նպատակով ցանկանում են հանրային դպրոցում ուսուցանել կրոնների և հավատքների մասին: Սկզբունքները բացառապես կենտրոնանում են կրթական մոտեցումների վրա, որոնք ապահովում են տարբեր կրոնների և հավատքների մասին ուսուցումը, որը տարբերվում է առանձին կրոնի կամ հավատքի ուսուցման մոտեցումներից: Դրանք նաև նպատակ ունեն առաջարկել այնպիսի չափորոշիչներ, որոնք պետք է հաշվի առնվեն այնտեղ և այն ժամանակ, երբ ուսուցանվում են կրոններ և հավատքներ:

Թուլեդոյի ուղեցույցում պետություններին հանձնարարվում է տարածել այդ փաստաթուղթը, ինչպես նաև դպրոցներում իրականացնել մոնիթորինգ՝ պարզելու համար, թե որքան է համապատասխանում ուսուցումը անկողմնակալության և իրավունքների ապահովման մասին պետության պարտավորություններին:

Այս ուսումնասիրության նպատակը Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքներին համապատասխան՝ Հայաստանի դպրոցներում մոնիթորինգի իրականացումն է, որի համար ուսումնասիրել ենք կրոնի և հավատքի ուսուցման ներպետական օրենսդրական բազան, դասագրքերի բովանդակությունը, դասավանդման մեթոդաբանությունը:

Լայնորեն օգտագործել ենք միջազգային իրավական փաստաթղթերը և հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները: Այցելել ենք նաև Հայաստանի տարբեր մարզերի դպրոցներ, հանդիպել դպրոցների տնօրենների, ուսուցիչների, ծնողների, հանրակրթության մարզային պատասխանատուների, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Այդ ամենը վերլուծել ենք սույն փաստաթղթում:

Սույն ուսումնասիրության մեջ դասագրքերի բովանդակության վրա չենք կենտրոնացել, համարելով, որ դրանց անդրադառնալու համար հարկավոր է առանձին ուսումնասիրություն կատարել: Դասագրքերի բովանդակային վերլուծությունը ևս կարևոր է, քանի որ դա վեր կհանի ուսումնական գործընթացի կրոնականացման միտումները, որոնք այլ ուսումնասիրության առարկա են: Մյուս կողմից՝ ԿԳՆ պատասխանատուները պաշտոնապես հայտարարել են, որ 2012-2013թթ. ուսումնական տարում շրջանառության մեջ կդրվեն դասագրքերի խմբագրված տարբերակները:

Գործող դասագրքերում խնդրահարույց են ոչ միայն զուտ բովանդակային խնդիրները՝ կապված կրոնական հանդուրժողականության սկզբունքի հետ, այլև պատմական փաստերի, դրանց մեկնաբանության խնդիրները, որոնց պետք է անդրադառնան արդեն հմուտ պատմաբանները:

Փաստաթղթում հատվածաբար մեջբերումներ ենք անում մեր անցկացրած հարցազրույցներից: Մեջբերված բոլոր հարցազրույցները ձայնագրված են²: Հարցազրույցներն անցկացվել են 2011 թվականի երկրորդ և 2012-ի առաջին կիսամյակում: Ուսումնասիրության մեջ օգտագործված են նաև կրթության ոլորտին վերաբերող նախկինում արված ուսումնասիրություններն ու զեկույցները, որոնց կատարված են հղումներ:

Ուսումնասիրության հեղինակները հույս ունեն, որ սույն փաստաթուղթն օգտակար կլինի ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի միջգերատեսչական հանձնախմբի մշակված համապատասխան դրույթը կյանքի կոչելու գործում:

² Ձայնագրությունները կատարված են հարցազրույցին մասնակցած անձանց համաձայնությամբ:

1. Կրոնին առնչվող առարկաները հանրակրթական դպրոցներում

2002 թ. Հայ առաքելական եկեղեցու և ՀՀ կառավարության միջև կնքված համաձայնագրի հիման վրա 2003-2004թթ. ուսումնական տարվանից «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան մուտք գործեց հանրակրթական դպրոց: 2005թ. այն մտավ պետական պարտադիր առարկայացանկ՝ 4-10-րդ դասարանների ուսումնական ծրագրով:

2007թ. փետրվարի 2-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, որի հիման վրա ԿԳՆ-ի և ՀԱՍԵ-ի հարաբերություններն օրենսդրական կարգավորում ստացան, և ՀԱՍԵ-ն իրավունք ստացավ մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները:

Ըստ ԿԳՆ տեղեկատվության՝ 2012 ուսումնական տարում դպրոց մուտք կգործեն դասագրքերի խմբագրված տարբերակները: «2012թ. սեպտեմբերից «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան կդասավանդվի նոր դասագրքերով: Ընդ որում, ավագ դպրոցի դասագիրքը կվերահրատարակի Հայ առաքելական եկեղեցին, իսկ միջին դպրոցինը՝ դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամը: ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը հանձնարարել է նախապես «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ծրագրերը համաձայնեցնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ»³:

Կրոնին առնչվող առարկաների թիվը գնալով մեծանում է, ավելին, կրոնական ուսուցումը մուտք է գործում նաև մանկապարտեզներ, որտեղ երեխաներին արդեն սովորեցնում են աղոթել, կատա-

³ [1http://tsayg.am/krtutyun/249-ns-es-ulsns-i-s-s.html](http://tsayg.am/krtutyun/249-ns-es-ulsns-i-s-s.html).

րում են կրոնական ծիսակատարություններ, սակայն սույն ուսումնասիրության թեման սահմանափակվում է միայն դպրոցներով:

2011-12թթ. ուսումնական տարում որոշ դպրոցներում փորձնական «քրիստոնեական կրթություն» է սկսվել դասավանդվել, որը, ըստ ԿԳՆ պատասխանատուների, հետագայում պետք է դառնա պարտադիր առարկա:

«Նախընթաց տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի մասնագետների և «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի լավագույն ուսուցիչների անդամակցությամբ ձևավորվել էր մասնագիտական աշխատանքային խումբ, որը մշակել էր 2-4-րդ դասարանների համար քրիստոնեական կրթության ուսումնական փորձնական ծրագիր և հրատարակության պատրաստել դասագրքեր՝ հաշվի առնելով ՀՀ հանրակրթական դպրոցում տարրական քառամյա ուսուցման պահանջներն ու առանձնահատկությունները:

Ըստ ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի՝ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային առնչվող խնդիրները լուծելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին հրամանով ստեղծվել էր հանձնախումբ, որի երաշխավորությամբ հանրապետության մի շարք դպրոցների 2-4-րդ դասարաններում մեկ տարի փորձաշրջանով ուսումնասիրվելու է «Քրիստոնեական կրթություն» առարկան: Առարկայի դասավանդման համար Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի և ՀՀ կրթության և գիտության նախարարության համատեղ համաձայնությամբ ընտրվել են հանրապետության 25 դպրոցներ»⁴:

Եթե ԿԳՆ պատասխանատուները հավաստիացնում էին, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան համարվում է որպես պատմության առարկա, ապա այս նոր առարկան արդեն կրոնական ուսուցում է, և այն պետք է ուսուցանվի 7-9 տարեկան երեխաներին: «Ինչո՞վ է հիմնավորվում ևս 4 տարի առարկան մատուցելու անհրաժեշտությունը» հարցն այսպես է մեկնաբանում հանձնախմբի անդամ, Կրթության ազգային ինստիտուտի եկեղեցու պատմություն

⁴ <http://www.lragir.am/armsrc/society53013.html>.

առարկայի մասնագետ Հասմիկ Մարգարյանը. «Նախ՝ հանձնախումբը ստեղծվել էր դասագրքերը ճիշտ բեռնաթափելու նպատակով, մասնակցում են նաև Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակիցներ, իրենք էլ ծրագիրը ներկայացրեցին: Քանի որ կրտսեր դպրոցում է ձեւավորվում երեխայի մտավոր, ֆիզիկական եւ հոգեւոր կերտվածքը, ցանկալի է այդ տարիքից էլ դնել առարկայի նախահիմքերը: Եվ հետո, միանգամից եկեղեցու պատմություն չենք ուսուցանելու: Ձեր ասած 6 տարեկաններն անցնելու են խրատական, դաստիարակչական նյութեր ծնողներին սիրելու մասին եւ այլն: Լինելու են խաղեր, էքսկուրսիաներ, գործնական պարապմունքներ, գունազարդման նյութեր»⁵:

2005թ. սկսած՝ Հայաստանի հանրակրթական դպրոցներում դասավանդվում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան:

2011թ., որպես փորձնական առարկա, դասավանդվում է «Քրիստոնեական կրթություն»-ը, և ըստ ԿԳՆ և ՀԱՍԵ պատասխանատուների հայտարարությունների՝ հանրակրթական դպրոցների համար այդ առարկան դառնալու է պարտադիր:

Բացի այդ երկու առարկաներից, ԿԳՆ-ն հնարավորություն է տալիս ավագ դպրոցների համար պարտադիր առարկաների ցանկից որոշակի առարկաների ընտրություն կատարել: Այդ ցանկում ընդգրկված է «Կրոնի պատմություն» առարկան: Ըստ մեր տեղեկատվության, որը կներկայացնենք սույն փաստաթղթում, այդ առարկան արդեն ՀԱՍԵ հոգևորականներն են դասավանդում:

Այսպիսով, վերջին տարիներին կրոնի կրթությունը Հայաստանում լայն թափ է ստանում, որը Հայաստանի կառավարությունը կրթական քաղաքականության համար առաջնահերթ է դարձրել:

Այս ուսումնասիրությունը նվիրված է միայն «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային: Հանրակրթական դպրոցներ մուտք գործող նոր առարկաները կարիք ունեն առանձին ուսումնասիրության:

⁵ «Վեց տարեկան երեխաները եկեղեցու պատմություն սովորելիս», Գայանե Մկրտչյան, «Ժողովուրդ», <http://www.armlur.am/index.php?page=article&id=4691>:

2. ՀՀ օրենսդրությունը կրոնական կազմակերպություններին, խղճի ազատությանը և կրոնին վերաբերող կրթության մասին

Կրոնական ազատությունների մասին ՀՀ օրենսդրությունը մեծ մասամբ համապատասխանում է միջազգային չափանիշներին: Սակայն խնդիրներ է առաջացնում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ գործող օրենքը, որն ընդունվել է դեռևս խորհրդային շրջանում և չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը և միջազգային իրավունքին: Հետևաբար, այդ օրենքի բարեփոխման մեծ անհրաժեշտություն կա: Այս պահին կան այդ օրենքի փոփոխությունների երեք նախագծեր, սակայն երեքի մասին էլ Վենետիկի հանձնաժողովը ծավալուն և քննադատական կարծիք է հայտնել⁶:

Ստորև ներկայացնում ենք ներպետական և միջազգային նորմերը, որոնք առնչվում են սույն ուսումնասիրության խնդիրներին:

2.1. ՀՀ Սահմանադրությունը

2.2.

«Հոդված 8.1.

Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու, բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

⁶ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի թ.թ. CDL-AD(2011)028 (17/10/2011), CDL-AD(2010)054 (22/12/2010), CDL-AD(2009)036 (23/06/2009) փաստաթղթերը:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:»:

«Հոդված 14.1.

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:»:

«Հոդված 26.

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:»:

«Հոդված 27.

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:»:

«Հոդված 28.

Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու... և դրանց անդամագրվելու իրավունք:

Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ...միավորման:

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:»:

«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը

Ուսումնասիրության ընթացքում քանիցս դիմել ենք ԿԳՆ պատասխանատուներին, ինչպես նաև ԿԳ նախարարին՝ իմանալու համար, թե ինչպիսի պաշտոնական փաստաթղթեր կան, որոնք կանոնակարգում են ԿԳՆ-ի և ՀԱՍԵ-ի (այդ թվում՝ ՀԱՍԵ-ի կառույցում գործող և դպրոցների ու եկեղեցու հարաբերությունները կազմակերպող և համակարգող Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը) համագործակցությունը «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման և ուսուցիչների վերապատրաստման գործում: Մակայն բոլոր պատասխաններում (այդ թվում՝ ԿԳ նախարարին ուղղված մեր նամակի) նշվում է, որ այդ համագործակցությունը կարգավորվում է օրենսդրությամբ և ենթաօրենսդրական ակտերով: Մեր ուսումնասիրությունները նման միայն մեկ օրենք են հայտնաբերել, որի 2-րդ և 8-րդ հոդվածներում նկարագրվում է նման համագործակցությունը:

2007թ. փետրվարի 2-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, որի հիման վրա

դեռևս 2003թ. դպրոցներում դասավանդվող «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան ստացավ օրենսդրական կարգավորում:

«Հոդված 2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին

1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների նվիրապետական աթոռներով, և նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:»:

«Հոդված 8. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարությունը կրթական ոլորտում .

1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի՝ 1) հիմնելու կապ հովանավորելու նախադպրոցական հաստատություններ, տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում., 2) մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները., 3) պետական կրթական հաստատություններում կամավոր ուսումնական դասընթացներ կազմակերպելու օգտագործելով դրանց շենքերն ու ռեսուրսները այդ հաստատությունների հետ համաձայնեցնելով դասընթացների իրականացմանն առնչվող խնդիրները., 4) նպաստելու հասարակության հոգևոր կրթությանը կրթական հաստատություններում օրենքով սահմանված կարգով: 2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ստեղծած ուսումնական հաստատությունները պետք է ստանան այն աջակցությունը, որը պետությունը ցուցաբերում է մասնավոր հաստատություններին: 3. Պետու-

թյունը երաշխավորում է կրոնական կրթության իրավունքի իրացումը կամավորության հիման վրա:»:

2.3 Կրթության մասին ՀՀ օրենքները և այլ իրավական ակտեր «Կրթության մասին» ՀՀ օրենքը

«Հոդված 4.

3. Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին:»:

«Հոդված 5. Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները

1) ...անհատի ազատ և համակոդմանի զարգացման առաջնությունը, ...

3) կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը, ...

6) ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը:»:

«Հոդված 6. Կրթական իրավունքի պետական երաշխիքները

1. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով...»:

Կրթության աշխարհիկ բնույթի մասին ասվում է նաև «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության մեջ:⁷

⁷ Հավելված ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954 - Ն որոշման,

ՀՀ օրենքը « Հանրակրթության մասին»⁸

«Հոդված 4. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականությունը ...

3. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

4. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

8. Ուսումնական հաստատություններում արգելվում է նացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն: Կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»:

«Հոդված 5. Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների,... անհատի ազատ ...զարգացման առաջնայնությունը, ...անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, ...հանդուրժողականությունը, ...

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը:»:

2.4 Խղճի և կրոնի ազատությանն ուղղակի կամ անուղղակի առնչվող դրույթները ՀՀ օրենքներում

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում ամրագրված է հետևյալ դրույթը.

«Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Երեխայի հայացքները, համոզմունքները

Հավելված N 3 ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392- Ն որոշման:

⁸ Ընդունվել է 10.07.2009:

և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Ղավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:»:

Խղճի և դավանանքի ազատության տեսանկյունից կարևոր է նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածում ամրագրված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների որդեգրման, հոգաբարձության, խնամակալության վերաբերյալ դրույթը, որը սահմանում է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին «... տեղավորելիս պետք է հաշվի առնվեն նրա էթնիկական ծագումը, որոշակի կրոնական ու մշակութային պատկանելությունը, մայրենի լեզուն, դաստիարակության ու կրթության գործում հաջորդականությունն ապահովելու հնարավորությունները...»:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, կարգավորելով գործատու-աշխատող իրավահարաբերությունները, անուղղակիորեն անդրադառնում է նաև խղճի և կրոնի ազատության հարցերին, մասնավորապես անձնական տվյալների գաղտնիության պահպանման իրավունքի լույսի ներքո, որը շատ կարևոր է դպրոցներում ուսուցիչների աշխատանքի ընդունման կամ ազատման ժամանակ: Օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետում մասնավորապես սահմանված է. «Գործատուն իրավունք չունի ձեռք բերելու և մշակելու

աշխատողի քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների կամ անձնական կյանքի վերաբերյալ տվյալներ...»:

ՀՀ քրեական օրենսգիրքը պարունակում է մի շարք նորմեր, որոնք ուղղված են կրոնի և խղճի ազատության պաշտպանությանը:

Քրեական օրենսգրքում սահմանված են խղճի և կրոնի ազատության պաշտպանությանն ուղղված հետևյալ հանցակազմերը. «Խղճի կամ դավանանքի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը» (հոդված 160), «Անձանց իրավունքների կամ անձի դեմ ոսնձգող միավորումներ կազմելը կամ դեկավարելը» (հոդված 162), «Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը» (հոդված 226): Օրենսգրքի 16-րդ հոդվածը, որը սահմանում է այլ պետության տարածքում հանցանք կատարած անձանց հանձնելու հիմքերը, արգելում է այլ պետությանը հանձնել ՀՀ տարածքում գտնվող այն օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ հանձնումը պահանջվում է կրոնական պատկանելության պատճառով հետաքննության կամ պատժի կիրառման համար:

Բացի նշվածից, ՀՀ գործող քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 63-րդ հոդվածում քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների շարքում ամրագրված է նաև «*հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության... շարժառիթներով կատարելը*», իսկ հատուկ մասում այս դրույթն իր արտահայտությունն է ստացել 104-րդ հոդվածում (սպանություն), 112-րդ հոդվածում (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 113-րդ հոդվածում (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, 119-րդ հոդվածում (խոշտանգում), 185-րդ հոդվածում (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը), 265-րդ հոդվածում (դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը) և 397¹ հոդվածում (Ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը»):

2.5 «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը

Խղճի, կրոնի և հավատամքի ազատության ոլորտում ՀՀ կենտրոնական օրենսդրական ակտը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ գործող օրենքն է, որն ընդունվել է 1991թ. հունիսի 17-ին:

Օրենքի 1-ին հոդվածում նշվում է. *«Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է քաղաքացիների խղճի և կրոնական դավանանքի ազատությունը: Յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր:»:*

Օրենքում ամրագրված են կրոնական կազմակերպությունների իրավունքները.

«Կրոնական կազմակերպությունների հոգևոր-կրոնական գործունեությունը իրականացվում է հետևյալ իրավունքների հստակ ընդգծված շրջանակներում.

ա) իրենց շուրջը համախմբել իրենց հավատացյալներին.

բ) ապահովել իրենց հավատացյալների հոգևոր-կրոնական բոլոր կարիքների ու պահանջմունքների բավարարումը.

գ) կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ աղոթատներում և դրանց պատկանող տարածքում, ուխտատեղիներում, կրոնական կազմակերպությունների հիմնարկներում, ինչպես նաև գերեզմանոցներում, քաղաքացիների տներում և բնակարաններում, հիվանդանոցներում, զառամյալների ու հաշմանդամների տներում, ազատագրկման վայրերում, զորամասերում՝ այնտեղ գտնվող և տվյալ կրոնական կազմակերպության անդամ հանդիսացող քաղաքացիների խնդրանքով, մնացած դեպքերում՝ հրապարակային ժամասությունները, կրոնական ծեսերն ու արարողությունները կատարվում են ժողովների, հանրահավաքների, ցույցերի ու երթերի համար սահմանված կարգով.

դ) ստեղծել համապատասխան կրոնական ուսուցման խմբեր իրենց անդամների ու նրանց երեխանների կրոնական կրթության համար ծնողների համաձայնությամբ, այդ նպատակով օգտագործելով իրենց պատկանող կամ հատկացված շինությունները.

ե) զբաղվել աստվածաբանական, կրոնական, պատմամշակութային ուսումնասիրություններով.

զ) պատրաստել հոգևորական ծառայության կամ գիտական ու մանկավարժական կադրեր իրենց հոգևոր կենտրոնների կրթական հաստատություններում.

է) ձեռք բերել և օգտագործել կրոնական նշանակության առարկաներ ու նյութեր.

ը) օգտվել զանգվածային լրատվության միջոցներից՝ օրենքով սահմանված կարգով.

թ) կապեր հաստատել այլ երկրների եկեղեցական կազմակերպությունների հետ՝ անկախ ազգային կամ դավանական պատկանելությունից, հրավիրել նրանց ներկայացուցիչներին, իրենց հավատացյալներին գործուղել արտասահման՝ ուխտագնացության, ժողովների և կրոնական այլ միջոցառումների մասնակցելու, ինչպես նաև ուսման կամ հանգստի նպատակով.

ժ) զբաղվել բարեգործությամբ:

Կրոնական կազմակերպությունների հրատարակչական գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

Վերոհիշյալ իրավունքներն առաջանում են տվյալ կրոնական կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում գրանցվելու պահից»:

Այդուհանդերձ, չնայած վերը նշված ձևակերպումներին, անհասկանալի է այն, թե օրենքում ամրագրված իրավունքների ցանկն սպառիչ է, թե ոչ:

Օրենքի 8-րդ հոդվածով արգելվում է «հոգևորությունը»՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է հոգևորությունը: Որպես հոգևորություն չի կարող դիտվել սույն օրենքի

7-րդ հոդվածում նշված իրավասությունների սահմանում ծավալված որևէ գործողություն»:

Այս հասկացությունը գործող օրենք է ներմուծվել 1991թ.⁹ դեռևս խորհրդային շրջանում: «Հոգեորսություն» եզրը հաճախ թարգմանում են որպես դավանափոխություն, սակայն այն ավելի մոտ է «*ոչ պատշաճ դավանափոխությանը*»: Դավանափոխության իրավունքը խղճի և կրոնի հիմնարար ազատության բաղկացուցիչ մասն է: Այս իմաստով, հոգեորսությունը շարունակում է համարվել կրոնի ազատության հիմնական արտահայտությունը: Որևէ մեկին իր կրոնից շեղելու փորձն ինքնին չի կարող համարվել այլ անձանց ազատության և համոզմունքների նկատմամբ ոտնձգություն կամ նրանց իրավունքների խախտում: Այլ խնդիր է «*ոչ պատշաճ դավանափոխությունը*» («*improper proselytism*»-ը): Այս հասկացությունը ներմուծվել է միջազգային իրավունք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, որը, օգտվելով 1956թ. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հովանու ներքո ներկայացված հաշվետվությունից, սահմանել է հետևյալը. «*Եկեղեցու համար նոր անդամներ գրավելը կարող է իրականացվել նյութական կամ հասարակական արտոնություններ տրամադրելու խոստումների միջոցով, կամ ծանր հոգեկան ու նյութական վիճակում գտնվող անձանց վրա ոչ պատշաճ ճնշման գործադրման միջոցով, այս դեպքում հնարավոր են նաև բռնության և հրահանգավորման կիրառումը: Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ այն համատեղելի չէ մտքի, խղճի և կրոնի ազատության նկատմամբ հարգանքի հետ*»⁹:

Խղճի, կրոնի և հավատամքի ազատության լիակատար իրագործման տեսանկյունից խնդիրներ է առաջացնում օրենքի 17-րդ հոդվածում ամրագրված ՀԱՍԵ-ի մենաշնորհների ցանկը, ըստ որի՝

«...Պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու մենաշնորհի հանդիսացող հետևյալ առաքելությունների իրագործմանը.

- ազատ քարոզել ու տարածել իր դավանանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դավանաբանության պաշտոնական լուսաբանումը զանգ-

⁹ Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի, ֆիլ 14807/88, ՄԻԵԴ, 25/05/1993թ., § 48:

*վածային լրատվության միջոցներով կամ զանգվածային միջոցա-
նումների ժամանակ կարող է իրականացվել միայն Հայաստանյայց
Առաքելական եկեղեցու հավանությամբ.*

*- վերստեղծել իր պատմական ավանդույթները, կառուցվածքը,
կազմակերպությունները, թեմերն ու համայնքները.*

*- կառուցել նոր եկեղեցիներ, գործող դարձնել իրեն պատկանող
պատմական հուշարձան-եկեղեցիները ինչպես հավատացյալների
խնդրանքով, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ.*

*- նպաստել հայ ժողովրդի հոգևոր կրթությանը, օրենքով սահ-
մանված կարգով՝ նաև պետական կրթական հաստատություն-
ներում.*

*- գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կա-
տարելագործմանը.*

- ծավալել բարեգործական և բարեխնամ գործունեություն.

*- ունենալ մշտական հոգևոր ներկայացուցիչ հիվանդանոցն-
երում, զառամյալների և հաշմանդամների տներում, գորամա-
սերում, ազատագրկման վայրերում, ներառյալ՝ քննչական մեկու-
սարաններում...»:*

Այնքանով, որքանով վերը նշված նորմերը հասարակական կյանքում որոշակի գործունեություն ծավալելը սահմանում են որպես ՀԱՍԵ-ի մենաշնորհ, բարձրացնում են այդ դրույթների սահմանադրականության մասին հարցը: Ավելին, այդ դրույթներն արդեն իսկ իրենց առկայությամբ, այդ թվում նաև ներպետական իրավակիրառ պրակտիկայում այդ հասկացություններին տրված մեկնաբանությամբ լուրջ հակասությունների մեջ են նաև ստորև նշված միջազգային իրավական փաստաթղթերի հետ:

2.6. Միջազգային իրավունքի փաստաթղթերը և համեմատա- կան վերլուծությունն օրենքի հետ

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է.

*«Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են
հարգել ծնողների և համապատասխան դեպքերում օրինական*

խնամակալներին ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան:»:

Նշված դրույթը մեկնաբանվել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի թիվ 22 ընդհանուր մեկնության մեջ, ըստ որի՝ կրոնի կամ հավատքի ազատությունը *«հանրային դպրոցներին թույլատրում է կրոնների ընդհանուր պատմություն և էթիկա առարկաների ուսուցանումը, եթե դա իրականացվում է չեզոք և օբյեկտիվ եղանակով»:* Ավելին, ընդհանուր մեկնությունը նշում է, որ հանրային դպրոցներին թույլատրելի է կրոնագիտական կրթություն տալը, սահմանելով, որ այն պետք է համապատասխանի մարդու իրավունքների հետ կապված պարտավորություններին և *«կատարվի անխտրական ու համապատասխանի ծնողների և խնամակալների ցանկություններին»:*¹⁰

Օրենքի 17-րդ հոդվածի այն դրույթը, ըստ որի՝ հանրակրթական դպրոցներում հոգևոր կրթության գործունեությամբ զբաղվելը ՀԱՄԵ-ի մենաշնորհին է, անհամատեղելի է Դաշնագրի վերը նշված դրույթների հետ և հակասության մեջ է վերջինիս հետ: Հակասություններ են առաջանում նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի և թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածի համակցությամբ:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը նշում է.

«Խտրականության արգելում

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիա-

¹⁰ ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի թիվ 22 մեկնություն, § 6: Ամբողջական տեքստը հասանելի է <http://www.unhcr.ch/tbs/doc.nsf/0/9a30112c27d1167cc12563ed004d8f15>:

լական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

Կոնվենցիայի 9-րդ հոդվածը նշում է.

«Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

Մեկական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների»:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածը սահմանում է.

«Կրթության իրավունք

Ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը: Պետությունը կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը»:

Եվ, վերջապես, հակասություններ են առաջանում նաև կրոնական կրթության վերաբերյալ եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի հետ, համաձայն որի՝ կրոնական կրթության ցանկացած պարտադիր համակարգ հակասում է թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածին, և պետություններն այս

առումով պարտավոր են ապահովել այլընտրանքային հնարավորություններ¹¹: Պատահական չէ, որ Վենետիկի հանձնաժողովը, ողջունելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության կողմից փորձաքննության ներկայացված վերջին նախագծում վերջապես երաշխավորվել է ծնողների և խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան, միաժամանակ իր տարակուսանքն է հայտնում 17-րդ հոդվածի այն դրույթի վերաբերյալ, ըստ որի՝ ՀԱՍԵ-ի մենաշնորհների շարքում է դասվել պետական կրթական հաստատություններում հայ ժողովրդի հոգևոր կրթության զարգացմանն ուղղված գործունեությունը¹²:

Բացի վերը նշված փաստաթղթերից, միջազգային կառույցները հանրակրթական դպրոցներում կրոնական կրթության մասին միջազգային ուղեցուցային չափանիշներ են մշակել, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը: Խոսքը, առաջին հերթին, ԵԱՀԿ կառույցի ներքո ընդունված փաստաթղթերի մասին է, որոնց մեջ առանձնահատուկ կարևորություն ունեն Թուլեդոյի սկզբունքները, որոնք ուղեցուցային փաստաթուղթ են ԵԱՀԿ անդամ պետությունների համար հանրակրթական դպրոցներում կրոնների և հավատքների ուսումնական ծրագրերի մշակման, զարգացման և ուսուցիչների վերապատրաստման ուղղությամբ:

¹¹ Տե՛ս, օրինակ, Եվրոպական դատարանի հայտնի նախադեպը *Հասանն ու Էյլեմ Չանգինն ընդդեմ Թուրքիայի* գործով (թիվ 1448/04, 09/10/2007), որում դատարանը քննության է առել հանրակրթական դպրոցներում կրոնի առարկայի պարտադիր ուսուցման համակարգի իրավաչափության հարցը և արձանագրել խախտում, ինչպես նաև *Լաուցին ու այլք ընդդեմ Բուլղարիայի* գործով Մեծ պալատի վճիռը (թիվ 30814/06, 18/03/2011թ.), որով դատարանը վերացրել է Ստորին պալատի որոշումը և սահմանել, որ Բուլղարիայի իշխանությունները չեն խախտել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածը հանրակրթական դպրոցների դասասենյակներում կախված խաչերի համար, քանի որ դրա փոխարեն կրթական համակարգն առաջարկում էր լայն այլընտրանքային հնարավորություններ այլ համոզմունքներ դավանող աշակերտների համար:

¹² Վենետիկի հանձնաժողովի թիվ CDL-AD(2011)028 (17/10/2011) փաստաթուղթ, կետ 96:

Թուլեդոյի փաստաթղթի համար ուղեցույց է ծառայել 1989թ. Վիեննայի եզրափակիչ փաստաթուղթը,¹³ որը սահմանում է կրոնի և հավատքի ազատության իրագործմանը վերաբերող մի շարք հիմնական սկզբունքներ, մասնավորապես պետության պարտավորությունը կրոնի կամ հավատքի հողի վրա անհաստների կամ համայնքների դեմ խտրականությունը կանխելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, անհատական կամ այլոց հետ կրոնական կրթություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը և այլն:

Եվրոպայի խորհրդի շրջանակում նույնպես ընդունվել են մի շարք փաստաթղթեր, մասնավորապես ժողովրդավարական հասարակարգում կրոնական հանդուրժողականության թիվ 1202(1993) հանձնարարականը, կրոնի և ժողովրդավարության վերաբերյալ թիվ 1396 (1999) հանձնարարականը և կրթության ու կրոնի վերաբերյալ թիվ 1720 (2005) հանձնարարականը: Վերջինով ԵԽ անդամ պետությունների կառավարություններին հանձնարարվում էր խրախուսել հանրային կրթության տարրական ու միջին մակարդակներում կրոնագիտության ուսուցանումը¹⁴: Այս փաստաթղթերը թեև իրավաբանորեն պարտադրող չեն, սակայն իրենց բնույթով պարտադրող են որպես քաղաքական փաստաթղթեր:

2.7. Կրոնական ուսուցման պրակտիկան Եվրոպայի խորհրդի երկրներում

Եվրոպական պետություններում կրոնական կրթությունը սերտորեն կապված է աշխարհիկության սկզբունքի հետ: ԵԽ 47 պետու-

¹³ 1989թ. ԵԱՀԿ անդամ պետությունների ներկայացուցիչների՝ Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթուղթը, որը կազմվել է կոնֆերանսին հաջորդած եզրափակիչ ակտի սկզբունքների հիման վրա, Վիեննա, 17-ը հունվարի 1989թ., http://www.osce.org/documents/mcs/1989/01/16059_en.pdf:

¹⁴ Հանձնարարություն հ. 1720 (2005) կրթություն և կրոն, Խորհրդարանական վեհաժողովում 2005թ. հոկտեմբերի 4-ին տեղի ունեցած քննարկումը (27-րդ նիստ) (տե՛ս Փաստաթուղթ 10673, Մշակույթի, գիտության և կրթության կոմիտեի զեկույցը, զեկուցող՝ պրն Շնայդեր), տեքստն ընդունվել է Վեհաժողովի կողմից 2005թ. հոկտեմբերի 4-ին (27-րդ նիստ), <http://assembly.coe.int/main.asp?Link=/documents/adoptedtext/ta05/erec1720.htm> .

Ավելի մանրամասն տե՛ս մշակութային համագործակցության Եվրոպայի կայքը, http://www.coe.int/t/e/cultural_co-operation/education/intercultural_education/overview.asp:

թյուններից 44-ում հանրակրթական դպրոցներում տրամադրվում է կրոնական ուսուցման առարկա: Բացառություն են Ալբանիան, Ֆրանսիան (Ալզասի և Մոսելլի շրջաններից բացի) և Մակեդոնիան: Սլովենիայում հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում տրամադրվում է ոչ հարանվանական (կոնֆեսիոն) կրթություն:

47 պետություններից 25-ում (այդ թվում՝ Թուրքիայում) կրոնի առարկան պարտադիր է: Այդուհանդերձ, տարբեր պետություններում պարտադրելիության շրջանակները տարբեր են: Հինգ պետություններում, մասնավորապես Ֆինլանդիայում, Հունաստանում, Շվեդիայում, Նորվեգիայում և Թուրքիայում դասընթացներին մասնակցելու պարտավորությունը բացարձակ բնույթ է կրում: Այն աշակերտները, ովքեր դավանում են այն կրոնական ուսմունքը, որը դասավանդվում է, պարտավոր են ամբողջությամբ կամ մասամբ հաճախել այդ դասընթացներին: Այդուհանդերձ, տասը պետություններում՝ Ավստրիայում, Կիպրոսում, Դանիայում, Իռլանդիայում, Իսլանդիայում, Լիխտենշտեյնում, Մալթայում, Մոնակոյում, Սան Մարինոյում և Միացյալ Թագավորությունում, թույլատրվում է չմասնակցել դասընթացներին: Այս պետությունների մեծ մասում կրոնական կրթությունը հարանվանական է: Տասը պետություններում՝ Գերմանիայում, Բելգիայում, Բոսնիա-Հերցեգովինայում, Լիտվայում, Լյուքսեմբուրգում, Նիդեռլանդներում, Սերբիայում, Սլովակիայում և Շվեյցարիայում, աշակերտներին հնարավորություն է տրվում պարտադիր կրոնական առարկայի փոխարեն ընտրել այլ առարկա: Այս պետություններում հարանվանական կրթությունը ներառված է դասընթացների ծրագրում, որը կազմվում է համապատասխան նախարարությունների կողմից, և աշակերտները պարտավոր են հաճախել այդ դասընթացներին, եթե առաջարկվող այլ առարկա դրա փոխարեն չեն ընտրել:

Ի տարբերություն վերը նշվածների, պետությունների երրորդ խմբում աշակերտներին չեն պարտավորեցնում հաճախել կրոնական կրթության դասերին: Այդ պետություններում կրոնական առարկան ընդհանուր առմամբ ներառված է դպրոցական ծրագրերում, սակայն աշակերտները հաճախում են միայն այն դեպքում,

երբ նրանք հատուկ ցանկություն են հայտնում մասնակցելու այդ դասերին: Այս կարգը տիրում է պետությունների մեծ մասում՝ Անդորայում, Ադրբեջանում, Բուլղարիայում, Խորվաթիայում, Իսպանիայում, Էստոնիայում, Վրաստանում, Հունգարիայում, Իտալիայում, Լատվիայում, Մոլդովայում, Լեհաստանում, Պորտուգալիայում, Չեխիայում, Ռումինիայում, Ռուսաստանում և Ուկրաինայում: Պետությունների երրորդ խմբում աշակերտները պարտավոր են հաճախել կրոնական դասընթացներին կամ փոխարինող առարկայի դասընթացներին, բայց միևնույն ժամանակ տրվում է աշխարհիկ առարկա ընտրելու հնարավորություն:

Հաշվի առնելով բազմաթիվ պետությունների էթնիկական բազմազանությունը՝ այլ առարկա ընտրելու հնարավորությունը էականորեն նվազեցնում է կոնֆլիկտը դպրոցում ու դպրոցից դուրս, որը կարող է իր ուղղակի կամ անուղղակի ազդեցությունն ունենալ կրթության որակի, մտփվացիայի ու ներգրավվածության վրա:

Կրոնական ուսուցման վերոնշյալ համառոտ նկարագիրը թույլ է տալիս եզրահանգել, որ, չնայած կրթական մեթոդիկաների բազմազանությանը, գրեթե բոլոր անդամ պետությունները առաջարկում են առնվազն մեկ մեխանիզմ, որով աշակերտները կարող են շրջանցել կրոնական ուսուցման դասընթացները (դասընթացից հրաժարվելու կամ կրոնական դասընթացի փոխարեն այլ դասընթացի մասնակցելու հնարավորություն կամ էլ դասընթացին մասնակցելու համար գրանցվելու կամ չգրանցվելու հնարավորություն)¹⁵:

¹⁵ Համեմատական վերլուծությունը վերցրել ենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Հասանն ու Էյլեմ Քենգինն ընդդեմ Թուրքիայի* գործով վճռից, Թիվ 1448/04, 09/10/2007թ., § 30-34:

3. «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի նպատակը

Այս պահին գործող դասագրքերի համար ԿԳՆ-ի մշակած՝ հիմնական դպրոցի չափորոշիչում (V-XI դասարաններ) այս առարկայի նպատակն այսպես է ներկայացված.

«Հիմնական դպրոց

-ծանոթացնել քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքներին և դրանց հաղորդակից միջոցով նրա մեջ դաստիարակել բարություն, ընկերասիրություն, հավատարմություն, հարգանք ծնողների և ավագների նկատմամբ,

-աջակցել կարևոր հոգևոր-ազգային կառույցի դերը հայոց պատմության մեջ,

-իմանալ և հարգել սեփական ավանդույթները, տոները,

-ձևավորել աշխարհայացքային պատկերացումները, ընդլայնել մտահորիզոնը,

-ձևավորել հայրենիքի, պետության և հասարակության առջև պարտքի գիտակցության, սեփական արարքների նկատմամբ պատասխանատու կեցվածք,

-հաղորդել գիտելիքներ հայոց եկեղեցու համակարգված պատմության, ազգային գրականության հիմնական ուղղությունների վերաբերյալ,

-հարգել համաքաղաքացիներին և հայրենակիցներին, օգնել կարևորելու ընտանեկան և հասարակական կյանքում իրավունքների և պարտականությունների փոխկապվածության, քաղաքացիական հասարակության մեջ իրավունքների և պարտականությունների գիտակցման նշանակությունը»:

«Ավագ դպրոց

-սովորողի մոտ ձևավորել մշակութաբանական գիտելիքներ հայոց ավանդական արժեքների, հոգևոր ազգային մշակույթի վերաբերյալ,

-հոգևոր ազգային մշակույթի պատմական տարածության մեջ նպաստել անհատի ինտեգրմանը, որը կնպաստի նրա պատմական գիտակցության ձևավորմանը,

-սովորողի մոտ դաստիարակել հարգանք նախնիների, հայրենիքի պատմական անցյալի նկատմամբ,

-ձևավորել աշակերտի մեջ հարգանք, բարեխիղճ վերաբերմունք աշխատանքի նկատմամբ,

-նպաստել աճող սերնդի հոգևոր, ազգային, բարոյական նկարագրի ձևավորմանը,

-միջնակարգ դպրոցի սովորողներին պատրաստել հետագա հայագիտական կրթություն ստանալու և համապատասխան մասնագետ դառնալու ուղղությամբ:»:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան ԿԳՆ-ի փաստաթղթերում որակվում է որպես պատմության առարկա, ինչի մասին մեզ հուշում է նաև առարկայի անվանումը, սակայն ծանոթանալով 5,6,9-րդ և հատկապես 10-րդ դասարանների դասագրքերի բովանդակությանը՝ դժվար է համաձայնել այդ որակմանը: Դասագրքերում ներկայացված են Նոր և Հին կտակարանների բովանդակությանը վերաբերող հատվածներ, քրիստոնեության ուսմունքի մասին որոշ դրվագներ, փիլիսոփայական, բարոյաէթիկական պնդումներ: Ըստ այս ուսումնասիրության հեղինակների՝ հայոց եկեղեցու պատմությանն առնչվող փաստերը և դրանց մեկնաբանությունները պատմագիտական առումով վիճելի են, և կարիք կա, որ դրանք պրոֆեսիոնալ պատմագետների շրջանում քննարկման առարկա դառնան: Սակայն այս ուսումնասիրության նպատակը պատմագիտական փորձաքննությունը չէ: Այդ իսկ պատճառով մենք պատմագիտական առումով դասագրքերի բովանդակությանը չենք անդրադարձել:

Թուլեղոյի ուղեցույցում այսպես է ներկայացվում կրոնին վերաբերող առարկաների ուսուցումը. «ՄԱԿ-ի մարդու իրավունքների

կումիտեն իր թիվ 22 ընդհանուր մեկնության մեջ եզրակացնում է, որ կրոնի կամ հավատքի ազատությունը «հանրային դպրոցներին թույլատրում է կրոնների ընդհանուր պատմություն և էթիկա առարկաների ուսուցանումը, եթե դա իրականացվում է չեզոք և օբյեկտիվ եղանակով»: Ավելին, ընդհանուր մեկնությունը նշում է, որ հանրային դպրոցներին թույլատրելի է կրոնագիտական կրթություն տալը, սահմանելով, որ այն պետք է համապատասխանի մարդու իրավունքների հետ կապված պարտավորություններին և «կատարվի անխտրական ու համապատասխանի ծնողների և խնամակալների ցանկություններին»¹⁶:

«Չնայած նրան, որ հավատքային հարցերը անձնական ընտրության որոշելիքն են, այնուամենայնիվ որևէ կրթական համակարգ չի կարող անտեսել կրոնների և հավատքների դերը պատմության և մշակույթի ընթացքում: Անտարբերությունն այս հարցում կարող է հանգեցնել անհանդուրժողականության, խտրականության և բացասական կարծրատիպերի ձևավորման: Ավելին, այն կարող է հանգեցնել աճող թշնամության, հակամարտության և բռնության: Մա կարող է վտանգել ԵԱՀԿ տարածաշրջանի անվտանգությունն ու կայունությունը, որը բավական հստակ երևում է պատմական վերջին զարգացումների լույսի ներքո»¹⁷:

Փաստաթղթում կրոնի ուսուցման նպատակներից է. «Դրա բանական բացատրությունը հիմնված է երկու հիմնական սկզբունքների վրա. նախ, որ կրթության դրական դերն ազատորեն կրոն կամ հավատք դավանելու յուրաքանչյուրի իրավունքի նկատմամբ հարգանքի սերմանումն է, և երկրորդ, որ կրոնների և հավատքների ուսուցումը կարող է նվազեցնել վնասակար տարրմբռնումներն ու կարծրատիպերը»:

ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից հրատարակվող «Տեղեկագիր» ամսագիրը ուղեցուցային է հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար: Ամսագրում այսպես է ներ-

¹⁶ Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ: Տե՛ս նաև տողատակի ծանոթագրություն 8:

¹⁷ Նույն տեղում:

կայացված առարկայի ուսուցման նպատակը. «Հանրակրթական այս առարկայի նպատակն է՝ վեր հանել Հայոց եկեղեցու դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, ազգային-ազատագրական պայքարի, ազգային-հոգևոր նկարագրի պահպանման, հոգևոր մշակութային արժեքների ստեղծման ու սերունդներին փոխանցման, ազգային համախմբման ու ազգապահպանության գործում: Այն սովորողներին հաղորդակից է դարձնում ազգայինին և համամարդկայինին, նպաստում է նրանց ազգային-հոգևոր նկարագրի ձևավորմանն ու ամրադրացման, աշխարհայացքային պատկերացումների, հոգևոր-բարոյական ըմբռնումների ներդաշնակ ձևավորմանը: Առարկայի ուսումնադաստիարակչական կարևորագույն խնդիրներից է՝ ամրապնդել սեր և հարգանք մայր եկեղեցու և ազգային-եկեղեցական ավանդույթների, արարողությունների հանդեպ»:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ծրագրի հիմքում ընկած է կրթության աշխարհիկ սկզբունքը, առարկան պարտադիր է բոլոր սովորողների համար՝ անկախ ազգային և կրոնական-դավանական պատկանելությունից»¹⁸:

Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրատանը 2012թ. փետրվարի 18-ին Հայաստանյայց առաքելական եկեղեցու կաթողիկոս Գարեգին Բ-ի և կրթության ու գիտության նախարար Արմեն Աշոտյանի մասնակցությամբ կազմակերպվել էր կյոռ սեղանաքննարկում՝ նվիրված «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային:

Հանդիպմանը ներկա են եղել հոգևորականներ, կրթական գերատեսչության, կրթական հարցերով զբաղվող պետական կառույցների, դպրոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Անդրադառնալով դպրոցներում այդ առարկայի դասավանդմանը, Գարեգին Բ-ն նշել է. «Դպրոցից սկսվելով՝ հավատքի գրագիտությունը պիտի դառնա մեր կյանքի անբաժանելի մասը՝ զորացնելով մեր հայ քրիստոնյա ինքնությունը, հաստատելով մեր ժողովրդին հոգևոր-բարոյական արժեքների ու հայրենական ավանդների մեջ»¹⁹:

¹⁸ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի «Տեղեկագիր», 5/2010:

¹⁹ <http://news.am/arm/news/94076.html>.

ՀԱՄԵ-ն կազմակերպում է այդ առարկան դասավանդող ուսուցիչների որակավորման բարձրացումը, և, ինչպես կտեսնենք հետագայում, նաև ընտրում այդ առարկան դասավանդող ուսուցիչներին: Այս առումով կարևոր է կաթողիկոսի այն տեսակետը, թե ո՞րն է առարկայի ուսուցման նպատակը: Փաստորեն, կաթողիկոսի համար այդ առարկան ուսուցանում է «հավատքի գրագիտությունը»: Այստեղից կարելի է հետևություն անել, որ առարկայի նպատակներից առաջնային են դիտարկվում հավատքի քարոզչությունն ու ամրապնդումը, որն ուղղակիորեն արգելված է ՀՀ օրենսդրությամբ:

Նույն հանդիպման ժամանակ քննարկման մասնակիցներին ողջունեց նաև կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը. «...Ուզում եմ մեկ անգամ ևս շեշտել այն պարզ ճշմարտությունը, որ արձանագրված է մեր սրտերում և ամրագրված է հայոց Սահմանադրության մեջ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի բացառիկ առաքելություն մեր ազգային ինքնության պահպանման, հոգևոր մշակութային արժեքների զարգացման գործում: ...Դպրոցը նաև դաստիարակության վայր է, դպրոցը հայի ինքնության պահպանման վերարտադրման, հայոց պետության քաղաքացի կերտելու վայր է: Եվ այստեղ ո՞ւմ ապավինել, եթե ոչ Մայր Աթոռի, մեր սուրբ եկեղեցու աջակցությամբ: Եկեղեցու հետ համագործակցությունը թույլ է տալիս մեզ, մեր երեխաներին ներմուծել բարոյականություն, բարոյագիտություն և արժեքներ, թույլ է տալիս մեր աշակերտներին կոփել որպես հայեր և թույլ է տալիս առաջին անգամ իրենց համար թակել հոգևոր իմաստության դռները», - ընդգծեց ԿԳ նախարարն իր խոսքում²⁰:

Ըստ Թուրքոյի ուղեցույցի՝ «կրոնների և հավատքների ուսուցումը չպետք է կրոնական ուղղվածություն ունենա: Այն պետք է ծառայի ուսանողներին կրոնների և հավատքների մասին տեղեկություններ տալուն, սակայն չպետք է պարտադրի նրանց ընդունել դրանցից որևէ մեկը: [Թուրքոյի] սկզբունքները խրախուսում են կրոնների կամ հավատքների ուսուցումը, սակայն ոչ

²⁰ http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20120221_21&flag=am.

դրանց կիրառումը գործնականում: Այն ուսանողներին կամ աշակերտներին հնարավորություն է տալիս ունենալ կրոնական և ոչ կրոնական բազմազան հայացքներ, սակայն չի պարտադրում որևէ տեսակետ: Այն կրթում է՝ առանց խրախուսելու կամ սնացնելու այդ կրոններից և հավատքներից որևէ մեկին, այն տեղեկացնում է ուսանողներին կամ աշակերտներին տարբեր կրոնների և հավատքների մասին, սակայն չի փորձում ուսանողներին կամ աշակերտներին շրջել դեպի այդ կրոններից կամ հավատքներից որևէ մեկի կողմը: Կրոնների և հավատքների ուսուցումը պետք է հիմնված լինի խոր գիտելիքների վրա, որը էական նախապայման է ուսանողների կամ աշակերտներին մեջ տարբեր կրոնների մասին ճիշտ ըմբռնողություն ձևավորելու համար»²¹:

Վերը նշվածի լույսի ներքո ստորև ներկայացնում ենք տարբեր մարզերի դպրոցների ուսուցիչների, կրթական ոլորտի պատասխանատուների, ծնողների տեսակետները առարկայի նպատակի վերաբերյալ: Բուն կրթական ոլորտին մասնակցողների տեսակետներն ավելի ամբողջական են դարձնում առարկայի դասավանդման իրական նպատակները և այն, թե ինչպես են դա պատկերացնում այդ առարկան դասավանդող ուսուցիչները, դպրոցների տնօրենները և տեղական ինքնակառավարման մարմինների կրթության բաժնի պատասխանատուները:

«Ո՞րն է առարկայի նպատակը» հարցի պատասխանները ներկայացնում ենք առանց մեկնաբանությունների:

-Նպատակն այն է, որ աշակերտներին հենց դպրոցից ծանոթացնեն մեր եկեղեցու, մեր կրոնի պատմությանը, և երբ աշակերտն արդեն գիտի պատմությունը, նրա հետ հավատի, կրոնի մասին խոսելը ճիշտ ուղու վրա դնելն ավելի հեշտ կլինի²²:

-Եթե եկեղեցու պատմությունն է, ուրեմն աշակերտներին ներկայացնել Հայ առաքելական եկեղեցու ողջ պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը և նաև ինչ-որ տեղ քրիստոնեական դաստիա-

²¹ 1-ին բաժին, Բ ենթաբաժին, վերջին պարբերություն:

²² Ջեմա Ավետիսյան, Շիրակի մարզպետարանի կրթության վարչության գլխավոր մասնագետ:

րակություն է, որը չգիտեմ՝ որքանով կհաջողվի եկեղեցու պատմության դասաժամերին կազմակերպելը, և եթե ուզում եք իմանալ, երեխայի դաստիարակության արժեհամակարգում շատ կարևորվում է հոգևոր դաստիարակությունը, որը , չգիտես ինչու, մեզ մոտ չգիտեմ՝ ով պիտի կատարի այդ դերը. հավանաբար եկեղեցին²³:

-Հաշվի առնելով աշակերտների ծանրաբեռնվածությունը՝ իմ կարծիքով, այս առարկան պետք է մտցվեր հայ ժողովրդի պատմության մեջ: Առանձին առարկաների դեպքում խախտվում է նաև ժամանակագրությունը: Մենք երբեք աշակերտներին կրոնամտության չենք հանգեցնում, որովհետև սա կրոնի դաս չէ, այլ եկեղեցու պատմության: Շարժվում ենք սահմանադրությամբ՝ դպրոցը որևիցե պրոպագանդայի տեղ չէ²⁴:

-Մեր երեխաները դաստիարակվեն, կրթվեն, քրիստոնեական հավատ ունենան²⁵:

-5-րդ դասարանում անցնում ենք Աստվածաշնչի թեմաները և ծնողներին թվում է, որ առարկան կրոնի պատմությունն է, բարձր դասարաններում երեխաները սկսում են հասկանալ, որ դա ոչ միայն կրոնի, այլև պատմության առարկա է: Մեր պատմությունը եկեղեցուց առանձնացված չէ: Կրոնական դաստիարակություն կարելի է ասել, ինչ առումով, օրինակ, մենք երեխաներին սովորեցնում ենք Հիսուս Քրիստոսի խրատները, ինչպիսին պետք է լինի մարդը: ...6-րդ դասարանում արդեն անցնում ենք մեր ավանդույթները, մեր աղոթքները, խորհուրդները, տոները, ավանդույթները...²⁶:

-Նախքան ողջ տարածքում առարկայի ներդրվելը մենք այն դասավանդում էինք միայն մեր դպրոցում: Մա մեզ համար առավելություն էր, որովհետև իրոք եկեղեցու դերն ու հեղինակությունը ժողովրդի մեջ չէինք տեսնում: Նպատակը՝ ժողովրդին կապել եկե-

²³ Երևանի թիվ 119 ավագ դպրոցի տնօրեն Հ. Կարապետյան:

²⁴ Միսիանի թիվ 2 միջն. դպրոցի ուսմասվար Ֆելիքս Դովլաթյան:

²⁵ Գորիսի թիվ 14 միջն. դպրոցի տնօրեն Թելման Աբրահամյան:

²⁶ Արթիկի թիվ 4 դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցչուհի Կարինե Մատինյան:

դեցու հետ, ուղղորդել լինել ճիշտ քրիստոնյա, որովհետև ժողովուրդը եկեղեցուց բավականին հեռացել է²⁷:

-Երևի ուզում են հայրենասիրություն և հավատ քարոզեն, բայց ավելի շատ խոսվում է եկեղեցիների, քան քրիստոնեության մասին²⁸:

-Բուն առարկայի նպատակը կրոնի պատմությունը ներկայացնելն է: Բնականաբար, գրքի հեղինակներն այդ են մտածել, և դրա համար էլ այն հրատարակվել է: Իսկ իրականում այն շահարկվում է Հայ առաքելական եկեղեցու կողմից՝ ՀԱՍԵ-ի ուսմունքի, վարդապետության քարոզչության նպատակով²⁹:

-Նախ երեխաներին զերծ պահել ավելորդ աղանդավորական կազմակերպություններից, որովհետև ամբողջ Հայաստանով մեկ տարածված է այդ աղանդավորությունը, և գոնե ծանոթ լինեն մեր եկեղեցուն³⁰:

-Հայ առաքելական եկեղեցու պատմության, սովորությունների ուսուցումը դպրոցում, հատկապես ավագ դպրոցում, որովհետև այսօր, որքան բոլորիս հայտնի է, տարածված են աղանդավորական շարժումներ, և դրա համար շատ կարևոր է երեխաներին, առանձնապես դեռահասության շրջանում, անցնել այն: Աշակերտը պետք է պատկերացնի՝ ուր է գնում, որ եկեղեցին է ընդունում, որ քարոզներն են իր համար ընդունելի և հանկարծ շեղումներ չունենա³¹:

-Քրիստոնեական գաղափարախոսությունն աշակերտներին հասու դարձնելը: Սա եկեղեցու այբուբենն է³²:

-Երեխայի հոգևոր-մշակութային դաստիարակության զարգացմանը նպաստելը, երեխաների մեջ քրիստոնեական դաստիարա-

²⁷ Գորիսի թիվ 1 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Ֆլորա Խաչատրյան:

²⁸ Մերի Մարության, Գորիսի թիվ 3 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

²⁹ «Վերածնունդ» Ավետարանական-Մկրտական եկեղեցու հովիվ Սամիկոն Համբարյան, Գյումրի:

³⁰ Կապանի թիվ 3 միջն. դպրոցի տնօրեն Էդուարդ Բեգլարյան:

³¹ Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի տնօրեն Արմինե Շեգունց:

³² Սիսիանի թիվ 5 միջն. դպրոցի տնօրեն Հովիկ Ալեքսանյան:

կություն ներարկելը և Հայ առաքելական եկեղեցու դերի, նշանակության ցուցադրումը³³:

-Օրինակի համար ես եղա 4-րդ դասարանում, երեխաները անցնում էին Քրիստոսի հարությունը: Հարության թեման խաչելությունն է, և երեխաները ուղղակի որպես դաս պատասխանում են, բայց ասում եմ. դու հավատո՞ւմ ես Քրիստոսի խաչելությանը, ինքը պատկերացում չի կազմում: Հենց այդ Լմբատ թաղամասի 8-րդ դպրոցում, որտեղ աղանդավորներ են: Աղանդավորների, հարանվանությունների մեջ էլ կա Քրիստոսի հարության գաղափարը, բայց իրենք էլ դեռ այնպես չեն տալիս երեխային, որ երեխան պատկերացում ունենա: Երեխան մոտենում է առարկային, ջրի նման սովորում է, անգիր ասում է, բայց չի պատկերացնում և խաչակնքելու ձև չի սովորեցնում գիրքը, չգիտի երեխան խաչակնքել, «Հայր մեր» աղոթքն աղոթելու ձևը չգիտի: Նման բաներ ես ավելի շատ եմ կարևորում և ասենք տեսնելով, որ դա չկա առարկայի մեջ ես հավելյալ իրենցից ժամանակ եմ խնդրում, տնօրեններից³⁴:

-Երեխաներին ծանոթացնել քրիստոնեական արժեհամակարգին, Հայ առաքելական եկեղեցու ծեսերին, տոնակատարություններին և երեխաներին ճիշտ ուղղորդել դեպի եկեղեցու գաղափարների ուսուցանմանը³⁵:

-Հայ երեխային հոգևոր դաստիարակություն տալը³⁶:

-5-րդ դասարանում անցնում ենք Աստվածաշնչի թեմաները և ծնողներին թվում է, որ առարկան կրոնի պատմությունն է, բարձր դասարաններում երեխաները սկսում են հասկանալ, որ դա ոչ միայն կրոնի, այլև պատմության առարկա է: Մեր պատմությունն եկեղեցուց առանձնացված չէ: Կրոնական դաստիարակություն կարելի է ասել, ինչ առումով, օրինակ մենք երեխաներին սովորեցնում են Հիսուս Քրիստոսի խրատները, ինչպիսին պետք է լինի

³³ Սյունիքի մարզպետարանի կրթության բաժնի պետ Արսեն Գրիգորյան:

³⁴ Լմբատավանքի վանահայր, Արթիկի հոգևոր հովիվ տեր Լևոն քահանա Հովհաննիսյան:

³⁵ Միսիանի թիվ 5 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Աիդա Առաքելյան:

³⁶ Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի տնօրեն Կարինե Հովսեփյան:

մարդը: ...6-րդ դասարանում արդեն անցնում ենք մեր ավանդույթները, մեր աղոթքները, խորհուրդները, տոները, ավանդույթները³⁷:

-Երեխաները հասկանան եկեղեցու կենդանի խոսքը, աստծո նպատակն աշխարհի վրա³⁸:

-Երեխաներն ավելի մոտ լինեն եկեղեցուն, իմանան տերմինները, ծիսակատարությունները, որպեսզի հեռու մնան տարբեր տեսակի աղանդավորական շարժումներից³⁹:

Հաջորդ հարցը, որ մենք ուղղել են հարցման մասնակիցներին, այն էր, թե՞ ինչպե՞ս են այդ առարկան ընկալում աշակերտները. որպես պատմությա՞ն, թե՞ որպես կրոնի առարկա:

-Այն նախ և առաջ ընկալվում է որպես կրոնական առարկա: Բհարկե, ինքնին այն պատմություն է, որը նաև մեր այսօրվա կյանքն է: Մենք պետք է հասկանանք՝ ի՞նչ է տալիս մեզ եկեղեցին: Բհարկե, շատերի մոտ ոչ խորքային պատկերացումներ են. դա մի առարկա է, որը պարզապես պետք է սովորել: Բայց աստիճանաբար պետք է կարողանալ անցնել ավելի բարձր հարթությունների վրա. դա սովորական պատմություն չէ, այլ ազգապահպան պատմություն, որը մարդն իմանալով՝ իր կամքից անկախ սկսում է փոխվել և կրել այն արժեքները, որոնք մեզ տալիս է Հայ եկեղեցու պատմությունը⁴⁰:

-Բնականաբար, դպրոցում իմ նշանակվելուց հետո ավելի շատ՝ իբրև կրոնական, որովհետև ես ավելի շատ փորձում եմ երեխային ցույց տալ, թե ինչ դեր ունեն կրոնն ու եկեղեցին այս կյանքում⁴¹:

-Երեխաները հիմնականում այն կապում են պատմության հետ: Մակայն աշխատում ենք, որ երեխաները նաև հավատ ունենան: Տեր

³⁷ Մատինյան Կարինե, Արթիկի թիվ 4 դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցչուհի:

³⁸ Քրիստինե Մանոյան, Աճանա գյուղի դպրոցի աշակերտի ծնող, «Աստծո ժողովուրդ» ավետարանական համայնք:

³⁹ Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Գայանե Նարինյան:

⁴⁰ Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

⁴¹ Նուբարաշեն համայնքի հոգևոր հովիվ տեր Նիկողոս քահանա Հովհաննիսյան, Երևանի թիվ 119 ավագ դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչ:

հոր հետ մենք հաճախ այցելում ենք եկեղեցի, և իրենք խոսում են. կապը եկեղեցու հետ միշտ պահպանում ենք⁴²:

- Որպես կրոնի առարկա՝ և՛ երեխաների, և՛ ծնողների կողմից⁴³:

- Ավելի շատ՝ պատմության: Քանի որ մեզ մոտ, ցավոք սրտի, դեռ կան աղանդավորական շարժումներ և երեխաների թվում էլ կան: Ճիշտ է, մենք ձգտում ենք այնպես անել, որ այդ երեխաները չտարբերվեն. նրանք լավ են ուսումնասիրում այդ առարկան, պրոբլեմներ չունենք, բայց իմ կողմից ես ձգտում եմ, որ նրանք դավանեն մեր պետական կրոնը⁴⁴:

- Կան բաներ, որոնք կարող են դրական ազդեցություն թողնել երեխաների վրա: Եթե նկատի ունենանք, որ ցանկանում ես Աստվածապաշտություն սերմանել, կան բաներ, որոնք չեն համապատասխանում Աստվածաշնչում: Այստեղ վերցված է և՛ նախնիների սովորույթներ, և՛ որոշ բաներ Աստվածաշնչից, և մենք չենք կարող մաքուր երկրպագություն մատուցել աստծուն: Դրականն այն է, որ երեխաները որոշ չափով հասկանում են, որ գոյություն ունի արարիչ, որին պետք է երկրպագել⁴⁵:

-Մեր դպրոցում կա 2 երեխա, որոնց ծնողներն աղանդավորականներ են, դասերի ժամանակ չեն ընդվզել, աղոթում են, ծնողներն էլ չեն բողոքել: Մենք թեմաներ ենք անցնում, որտեղ սովորոցնում ենք, որ սխալ են այդ աղանդավորական շարժումները: Բարձր դասարաններում երեխաները սովորում են, որ, ասենք, ավետարանական, կաթոլիկ ...երեխաները հասկանում են, որ դա ազգը երկպառակտում է: Երբ անցնում ենք պավլիկյան, թոնդրակյան շարժումները, ես միաժամանակ մեջ եմ բերում հիմիկվա, այս մեր ժամանակվա աղանդավորական շարժումները՝ եհովականներ,

⁴² Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Գայանե Նարինյան:

⁴³ «Մեծ շնորհ» Ավետարանական-Սկրտական եկեղեցու հովիվ Վահան Պողոսյան, Գյումրի:

⁴⁴ Կապանի թիվ 3 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Մարինա Ղազարյան:

⁴⁵ Կապանի թիվ 7 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

հիսունականներ, հոգեգալստականներ, չգիտես ինչեր, լսել եմ իրենց մասին ...⁴⁶:

Այս տեսակետներն արտահայտում են ուսուցիչներ, դպրոցների տնօրեններ և կրթության ոլորտի մարզային ու քաղաքային պատասխանատուներ: Պատասխանները հարցականի տակ են դնում կրթության աշխարհիկ բնույթի վերաբերյալ կրթության մասին օրենքի պահանջը, ինչպես նաև կրոնների և հավատքների ուսուցման կրոնական ուղղվածության անթույլատրելիության մասին Թուլեդոյի սկզբունքները: Հետևաբար, ինդրո առարկա հարցն այն է, թե կրոնի պատմության առարկան հանրակրթական դպրոցներում պատմությա՞ն, կրոնի պատմությա՞ն, թե՞ ուղղակի կրոնական առարկա է: Մեր հետագա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման անորոշությունը պայմանավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից վարվող քաղաքականությամբ:

⁴⁶ Արթիկի թիվ 4 դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցչուհի Կարինե Մատինյան:

4. Ուսուցիչների ընտրությունը և վերապատրաստումը

Թուլեդոյի ուղեցույցում կան մի շարք սկզբունքային մոտեցումներ ուսուցիչների ընտրության, վերապատրաստման, ինչպես նաև կրոնին առնչվող առարկաների ուսուցման վերաբերյալ: Թուլեդոյի ուղեցույցից մեջբերվող հատվածներն ընդունելով որպես ուղեցուցային սկզբունքներ՝ կներկայացնենք մեր անցկացրած մոնիթորինգի արդյունքները, որոնք վերաբերում են ուսուցիչների ընտրությանը և վերապատրաստմանը:

«Նույնիսկ ամենալավ կրթական ծրագրերը, գաղափարները և քաղաքականություններն աննշան ազդեցություն կունենան, եթե ուսուցիչները չունենան կրթական ծրագրերն իրենց աշխատանքում համապատասխան ձևով գործածելու ունակություններ: Մա առավել ևս վերաբերում է կրոններ և հավատքներ ուսուցանելուն, քանի որ այդ ուսուցման կրթական ծրագրերը մեծ պահանջներ են սահմանում ուսուցիչների գիտելիքների, վերաբերմունքի և իրավասությունների վերաբերյալ»⁴⁷:

«Կառավարությունները պետք է հաստատեն վերահսկողական մեխանիզմներ, եթե նման մեխանիզմ գոյություն չունի, մոնիթորինգի ենթարկեն և արժևորեն այն եղանակը, որով ընտրվում և վերապատրաստվում են ուսուցիչները (թե՛ մինչև ուսուցանելը, թե՛ ուսուցանելու ընթացքում) կրոնների ու հավատքների մասին ուսուցանելու համար: Անդամ պետությունները գնահատման ընթացքում պետք է ամեն ինչ անցկացնեն այս ուղեցուցային սկզբունքների և այլ միջազգային մարմինների սահմանած սկզբունքների պրիզմայով»⁴⁸:

«Հաշվի առնելով կրոնների ու հավատքների մասին ուսուցմանն ու կոնֆլիկտներին վերաբերող առանձնահատուկ մարտահրավեր-

⁴⁷ Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ, էջ 55:

⁴⁸ Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ, էջ 56:

ները՝ ուսուցիչների վերապատրաստման յուրաքանչյուր ծրագիր պետք է համապատասխանի ժողովրդավարական և մարդու իրավունքների սկզբունքներին, ինչպես խորհուրդ է տրվում այս փաստաթղթում»⁴⁹:

2012թ. փետրվարի 12-ին Օշական գյուղում (որտեղ գտնվում է հայկական տառերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը) կազմակերպվել էր կյոթ սեղան՝ նվիրված «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային, որին մասնակցել են Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն և ԿԳ նախարարը:

ԿԳ նախարարը հայտարարել է. «Ուստի պայմանավորվել ենք, որ այս տարվանից Հայոց եկեղեցու պատմություն դասավանդող ուսուցիչները հանրակրթական դպրոցներում աշխատելու իրավունք են ստանալու միայն Մայր Աթոռի թույլտվության դեպքում: Առարկան դասավանդողներն էլ վերապատրաստում կանցնեն Մայր Աթոռում»⁵⁰:

Իր հերթին, Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն էլ լրագրողների հետ զրույցում ընդգծել է, թե Հայ առաքելական եկեղեցին մտավախություն և առավել ևս երկյուղ չունի աղանդավորական գործունեությունից:

«Ավելին, մենք նկատել ենք, որ վերջին տարիներին հոգևոր սպասավորների աշխատանքի արդյունքում աղանդավորների գործունեությունն, ընդհակառակը, նվազում է», - ասել է նա⁵¹:

Կրթության և գիտության նախարարն այդ առարկայի ուսուցիչների ընտրությունը և վերապատրաստումը ամբողջովին վստահում է ՀԱՍԵ-ին, իսկ մեր հետագա ուսումնասիրությունները ցույց կտան, որ, ըստ էության, ԿԳՆ-ն չի միջամտում այդ գործընթացին: Ուշագրավ է նաև կաթողիկոսի հայտարարությունը «աղանդավորների» գործունեության «նվազման» մասին, որ արվել է նախա-

⁴⁹ Թուրքոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ, էջ 56:

⁵⁰ Ռադիոլուր, Լիանա Եղիազարյան, 18.02.2012 15:39:
<http://www.armradio.am/arm/news/?part=soc&id=46818>.

⁵¹ Ռադիոլուր, Լիանա Եղիազարյան, 18.02.2012 15:39:
<http://www.armradio.am/arm/news/?part=soc&id=46818>.

րարի ներկայությամբ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային նվիրված կլոր սեղանի ընթացքում: Կարելի է եզրակացնել, որ այդ առարկան ուղղակիորեն դիտվում է որպես «աղանդների»⁵² դեմ պայքարի միջոց, որտեղ կարևոր դերակատարություն են ստանում ուսուցիչները: Ուսուցիչների ընտրության ժամանակ կարևորվում են ուսուցիչների անձնական կրոնական հայացքները, որոնք չպետք է կասկածի տեղիք տան հոգևորականության ներկայացուցիչների մոտ: Եղել են դեպքեր, երբ ուսուցիչը չի կարողացել անցնել որակավորումը որևէ կրոնական կազմակերպության անդամ կամ աթեիստ լինելու կասկածանքով: Այս ուսումնասիրության հետագա ընթացքում կներկայացնենք բազմաթիվ օրինակներ, թե ինչպես են ուսուցիչները պայքարում «աղանդավորականների» դեմ: Փաստորեն, ուսուցիչների ընտրության չափորոշիչներից մեկն էլ հենց դա է, որն ընդգրկված է ԿԳՆ-ի կողմից վարվող քաղաքականության մեջ: Այստեղ կարևոր է այն հարցը, թե «աղանդ» ասելով ինչ նկատի ունեն: «Աղանդը» խոր միջնադարում օգտագործվող բառ է, որն սկզբնական շրջանում կիրառվել է ոչ քրիստոնյաների նկատմամբ, բայց հետագայում այն ձեռք է բերել «սեկտա»-ի իմաստ, որը, սակայն, Հայաստանում ունի ուրույն երանգավորում: «Աղանդ» եզրը հիմնականում գործածվում է այն կրոնական ուղղությունների հանդեպ, որոնց անդամներն ազգությամբ հայ են: Հայաստանում ամենամեծ ազգային փոքրամասնությունն համարվող եզդիների կրոնը քրիստոնեության, իսլամի, գրադաշտականության տարրեր է պարունակում, սակայն հայկական մամուլում որևէ դեպք չի եղել, որ նրանց նկատմամբ գործածվի աղանդ բառը, այնինչ Հայ կաթողիկե եկեղեցու մի սպասավոր մեզ բողոքում էր, որ իրենց գրասենյակի շրջակայքի բնակիչները երբեմն իրենց «աղանդավորականների» տեղ են դնում: Նման քարոզչությունն արդեն արմատավորվել է հասարակական գիտակցության մեջ»⁵³:

⁵² Հայաստանում «աղանդ» տերմինը հաճախ օգտագործում են ՀԱՄԵ-ից բացի Հայաստանում գործող մյուս կրոնական կազմակերպությունների նկատմամբ:

⁵³ Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում, Ստեփան Դանիելյան, Վլադիմիր Վարդանյան, Արթուր Ավթանդիլյան, ISBN 978-92-9235-846-4, Երևան, 2010:

Եվս մեկ ուշագրավ օրինակ բերենք, որը վկայում է ՀՀ կառավարության պաշտոնական փաստաթղթերում «աղանդ» եզրի վերոնշյալ իմաստով օգտագործելու մասին:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պատվիրած «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց – Մաս I»⁵⁴ փաստաթուղթը, որն սկսվում է ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանի ողջույնի խոսքով, երիտասարդության շրջանում հարցումների հիման վրա կատարված հետազոտություն է: Հետազոտության մեջ կան հարցեր՝ նվիրված կրոնական խնդիրներին: Չնայած նրան, որ Հայաստանում կան մեկ տասնյակից ավելի հարանվանություններ, մի հարցաթերթիկում դրանք ներկայացվում են որպես «աղանդավոր հայ»: Մյուս հարցաթերթիկում ներկայացվում են «աղանդավոր հայր» և «կաթոլիկ հայր»: Փաստորեն, կառավարությունը Հայաստանում գործող կրոնական կազմակերպություններին պաշտոնապես որակում է որպես «աղանդներ»:

ՀԱՄԵ-ի կազմում գործում է Քրիստոնեական դաստիարակության կենտրոն կառույցը, որի ենթակառույցները գործում են բոլոր մարզերում և իրականացնում են ՀԱՄԵ-ին օրենքով տրված գործառնությունները՝ կապված հանրակրթական դպրոցների հետ, այդ թվում՝ ուսուցիչների ընտրությունը և որակավորման բարձրացումը: ՔԴԿ-ի գործունեությունը ներկայացնում է կենտրոնի տնօրեն Վարդան արեղան. «Կենտրոնը սկսել է իր գործունեությունը Վազգեն վեհափառի⁵⁵ օրոք՝ 1991թ.: Աստիճանաբար Սփյուռքից ներմուծվել է կիրակնօրյա դպրոցների հասկացությունը, և 2 տարվա ընթացքում Հայաստանի տարբեր մարզերում շուրջ 250 կիրակնօրյա է հիմնադրվել և 1000-ից ավելի ուսուցիչ է վերապատրաստվել: 1996թ. Գարեգին Առաջին⁵⁶ կաթողիկոսը ստեղծում է Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոն (ՔԴԿԿ): Կենտրոնը համակարգում է թեմի քրիստոնեական կառույցները, որոնք ղեկավարում էին կիրակնօրյաները: Կենտրոնի

⁵⁴ «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, Մաս I», Երևան, 2011, ISBN 978-99941-2-656-9:

⁵⁵ Վազգեն Ա - Հայ Առաքելական եկեղեցու 130-րդ կաթողիկոս (1955-1994):

⁵⁶ Գարեգին Ա - Ամենայն հայոց 131-րդ կաթողիկոս (1995-1999):

գործունեության միակ ոլորտը կիրակնօրյա դպրոցն էր: Երբ Գարեգին Երկրորդն արդեն գահի վրա էր, նա տեսավ մի մեծ մարտահրավեր, որ մեր սերունդը կրոնական առումով դաստիարակության պետք ունի, և անշուշտ, եկեղեցի-պետություն հարաբերություններն ավելի խորացան, ու այդ առարկան պետք է ներդրվեր դպրոց: Դրանից առաջ Կենտրոնը վերակազմավորվեց և «քարոզչություն» բառը դուրս եկավ, այսինքն՝ դարձավ կրթական համակարգում գործող մի կենտրոն, որը պետք է իր գործունեությունը ծավալեր 4 ուղղություններով.

նախադպրոցական ոլորտ (մանկապարտեզներում քրիստոնեական դաստիարակության հարց),

դպրոցներ (նույն հարցը),

կիրակնօրյա դպրոցներ,

հատուկ դպրոցներ և մանկատներ:

Կենտրոնը դարձավ ԿԳՆ-ի հետ համագործակից մի կառույց, որը պետական կրթական համակարգում պետք է զբաղվեր եկեղեցական, քրիստոնեական դաստիարակության հարցերով: Դրանից հետո մեր թեմակալ առաջնորդները (Սյունիքի և այլն) Կրթության ազգային ինստիտուտի հետ պատրաստեցին ուսումնական ծրագրեր, դասագրքեր»⁵⁷:

ԿԳՆ իրավասությունները և գործառույթները հայր Վարդանը այսպես է ներկայացնում. «Մենք իրավունք ունենք դասալսում իրականացնել, ուսուցչին որոշակի օժանդակություն ապահովել, մասնակցում ենք ուսումնական ծրագրերի վերամշակման ու հրատարակության գործին, ուսուցիչների վերապատրաստման և որակավորման գործընթացին, կարող ենք ուսուցիչ երաշխավորել դպրոցում (ըստ այդմ, նաև հակառակը): Այս ամենն իրականացվում է ԿԳՆ-ի հետ համագործակցաբար. մեր յուրաքանչյուր գործառույթ համաձայնեցնում ենք ԿԳՆ-ի հետ»⁵⁸:

⁵⁷ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

⁵⁸ Մբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու քահանա տեր Վահան Ազարյան, Վանաձոր:

Հիշեցնենք, որ Օշականում կազմակերպված կլոր սեղանի ժամանակ ԿԳ նախարարը հայտարարել էր. «Ուստի պայմանավորվել ենք, որ այս տարվանից հայոց եկեղեցու պատմություն դասավանդող ուսուցիչները հանրակրթական դպրոցներում աշխատելու իրավունք են ստանալու միայն Մայր Աթոռի թույլտվության դեպքում»: Այսինքն՝ ուսուցիչների ընտրության, աշխատանքից ազատելու և, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, որակավորումը միանձնյա որոշում է ՀԱՍԵ-ն: Փաստորեն, կառավարությունը հրաժարվում է Թուլեդոյի ուղեցույցի այն հանձնարարականից, համաձայն որի՝ կառավարությունը պետք է իրականացնի առարկայի դասավանդման վերահսկողություն, իսկ նման մեխանիզմի բացակայության դեպքում ապահովի ուսուցիչների ընտրության և վերապատրաստման եղանակների մոնիթորինգ: Նման հանրակրթական առարկայի ուսուցիչների պատրաստումը միայն որևէ առանձին կրոնական կազմակերպության իրավասությանը վերապահելը ուղղակի նշանակում է այլ կրոնական կազմակերպությունների իրավունքների ոտնահարում, որն էլ հաճախ տեղի է ունենում գործնականում: Նման որոշմամբ խախտվում է եկեղեցու ու դպրոցի տարանջատվածության սահմանադրական դրույթը:

4.1 Առարկան վերահսկող տեսուչները

Առարկան վերահսկող տեսուչները նշանակվում են ՔԴԿ-ի կողմից: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, առարկայի ուսուցումը վերահսկող տեսուչների ընտրության հետ կապված կան խնդիրներ: Համապատասխան որակավորում ունեցող տեսուչներ հաճախ չեն կարողանում գտնել:

ՔԴԿ տնօրենի բնորոշմամբ՝ «Մեզ համար ամենաառաջնային խնդիրն է՝ ով է դասավանդում այդ առարկան դպրոցում: Տեսուչները պարբերաբար այցելում են դպրոցներ և արդեն բավական պատկերացում ունեն: Մեկ խնդիր ունենք՝ Սյունյաց մարզում չենք կարողանում համապատասխան մասնագետ գտնել, որ տեսուչ

դառնա: Նրանք, ովքեր կարող են տեսուչ դառնալ, արդեն դասավանդում են ու չեն ուզում դպրոցից դուրս գալ, իսկ համատեղությունն անթույլատրելի է»⁵⁹:

Մի քանի տարի առաջ ՔԴԿ-ի ներսում կառուցվածքային բարեփոխումներ են կատարվել, և ներմուծվել է աշխարհիկ տեսուչների ինստիտուտը: Առաջ տեսուչներ էին աշխատում միայն հոգևորականները: «Նախկինում կիրակնօրյա ոլորտը պատկանում էր թեմերին, որտեղ կային քրիստոնեական դաստիարակության կենտրոններ: Երբ առարկան մտավ դպրոց, ի հայտ եկավ պահանջ, որ լինեն մասնագետներ, որոնք կզնան մարզեր և խնդիրներ կֆիքսեն և կփորձեն լուծել դրանք: Եվ այդ պարագայում աշխարհական մասնագետներ ընտրվեցին, որոնք որ տիրապետում են առարկան, համապատասխան մեթոդական գիտելիքներ ունեն դասալսում անցկացնելու և այլնի համար: Մենք ունենք այսօր 18 մարզային պատասխանատու և նրանք հիմնականում մեր հանձնարարություններն են կատարում ու ամեն կիսամյակի վերջին հաշվետվություններ են ներկայացնում թեմի առաջնորդին: Եթե պատասխանատուն տեղական նշանակության խնդիրների է հանդիպում, ուրեմն անձամբ գնում է թեմի առաջնորդի մոտ: Թեմերն էլ, պատասխանատուներն էլ ենթարկվում են Մայր Աթոռին: Մարզերից մեկում, օրինակ, լուրջ խնդիրներ կային, և թեմի առաջնորդին դիմեցինք այդ հարցով: Առաջնորդը դիմեց մարզպետարանի կրթության վարչության պետին, և մեր ներկայացուցչի մասնակցությամբ խնդիրը լուծվեց: Թեմակալ առաջնորդը նաև այդ գործառույթն է կատարում, որովհետև, ի վերջո, իր մարզում նա մեծ հեղինակություն է և կարող է շատ խնդիրներ լուծել»⁶⁰:

ՔԴԿ-ի աշխատակիցների հավաստմամբ իրենց տրված լիազորագրերում նշված են «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների

⁵⁹ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

⁶⁰ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

մասին» ՀՀ օրենքի հոդված 8-րդը և ՀՀ ԿԳՆ 12.10.2005թ. թիվ 0743139 գրությունը:

«Որևէ թելադրանք չկա Մայր աթոռի կողմից, Մայր աթոռն ունի իր աշխատողները բոլոր տեղերում, նաև Արթիկ քաղաքում կա, որ պարտադիր վերահսկում են դպրոցները և ուսուցիչներին: Մեր մոտ՝ Շիրակի մարզում, երկու հոգի են կարծեմ (ՔԴԿ տեսուչներ-հեղինակների կողմից): Իրենք պարտադիր կերպով, պարտադրված ծրագրով ... և իրենք են ծրագրեր բերում Մայր Աթոռից, իրականացնում այստեղ և հաշվետվություններ ներկայացնում, կարծեմ, եռամսյակը մեկ»⁶¹:

Փաստորեն, առարկայի վերահսկողությունը, ուսուցման մոնիթորինգը իրականացնում են ՔԴԿ-ն, նրա մարզային ենթակառուցվածքը և ՀԱՍԵ-ի թեմերը: Ըստ էության, ԿԳ նախարարությունը աշխատում է չմիջամտել առարկայի ուսումնական գործընթացներին:

4.2 Ուսուցչի կրոնական հայացքները

Ըստ Թուլեդոյի ուղեցույցի՝ անհատի կրոնական (կամ ոչ կրոնական) հավատքները չեն կարող բավարար պայման լինել այդ անձին կրոնների կամ հավատքների մասին ուսուցանելուց զրկելու համար: Այս առումով, ամենակարևոր նկատառումները վերաբերում են պրոֆեսիոնալ պատրաստվածությանը, ինչպես նաև մարդու իրավունքների (ընդհանրապես) ու կրոնի կամ հավատքի ազատության (մասնավորապես) նկատմամբ նրա հիմնական վերաբերմունքին կամ պարտավորություններին, քան թե նրա կրոնական պատկանելությանը կամ համոզմունքներին: Բացի այդ, ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետի՝ *«Գործատուն իրավունք չունի ձեռք բերելու և մշակելու աշխատողի քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների կամ անձնական կյանքի վերաբերյալ տվյալներ...»*:

⁶¹ Տե՛ր Լևոն քահանա Հովհաննիսյան, Լմբատավանքի վանահայր, Արթիկ քաղաքի հոգևոր հովիվ:

Այս բաժնում չենք քննարկելու ուսուցչի մասնագիտական պատրաստվածության խնդիրը, որով պետք է զբաղվեն համապատասխան մասնագետները: Մեր նպատակը ուսուցչի համոզմունքների ազատության խնդիրը դիտարկելն է և այն հարցը, թե նրանց աշխատանքի ընդունելիս դա ինչ նշանակություն է ունենում:

Մեր կողմից հարցման ենթարկված անձանց մեծ մասն այն կարծիքին է, որ այդ առարկան դասավանդող ուսուցիչները պետք է լինեն ՀԱՄԵ-ի հետևորդներ:

«Կրոնական պատկանելիության առումով՝ բոլորն էլ Հայ առաքելական քրիստոնյաներ են: Չկան այլակրոններ»⁶²: Իսկ այն հարցին, թե աթեիստը, ազնոստիկը կամ այլ կրոնի հետևորդը կարո՞ղ է այդ առարկան դասավանդել և եթե՞ ոչ, ապա ինչպե՞ս են ստուգում հավատքի պատկանելությունը, ո՞վ է ստուգում և ինչպե՞ս է ձևակերպվում մերժումը, Լոռու մարզի կրթության ոլորտի պատասխանատուն պատասխանում է. «Ես այդ հարցին տեսական, փիլիսոփայական պատասխան կտամ: Իհարկե, աթեիստը չի կարող դասավանդել: Այստեղ դասավանդող մարդու ներքին զգացողությունը պետք է ճառագայթի, որևէ գործ անելիս հոգի պետք է դրվի առհասարակ, առավել ևս եթե դու հայ եկեղեցու պատմություն ես դասավանդում: Եթե դու Եհովայի վկա ես ու Հայ եկեղեցու պատմություն ես տալիս, իհարկե, դու հոգի չես կարող դնել: Իսկ եթե դու հոգի չես դնում, արդյունքն էլ չկա: Մենք չունենք դեպք, երբ մեզ աթեիստ է դիմել: Երբ մարդը ցանկանում է դասավանդել այդ առարկան, և դու նրան հարցնում ես՝ աթեի՞ստ ես, թե՞ թեիստ, նա պարզ է, պետք է պատասխանի, որ թեիստ է: Այստեղ ինդիկատոր չկա, որ կիրառենք ու ասենք՝ դու խաբում ես: Եթե նա պատասխանի, որ աթեիստ է, նման դեպքերում պետք է փնտրել դրա այլընտրանքը»⁶³:

Այս հարցի վերաբերյալ Լոռու մարզկենտրոնի եկեղեցիներից մեկի քահանան նույն տեսակետն է արտահայտում. «Պատկերացրեք՝ հայոց լեզվի ուսուցիչը տարված չի գրական ժանրով,

⁶² Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

⁶³ Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

անգիր չգիտի այս կամ այն երկր: Այդպես էլ ենթադրում եմ՝ չարժե, որ համոզումով անաստված մեկը փորձի ուղղակի մակերեսորեն, այն, ինչ գրված է գրքում, ներկայացնել՝ առանց ներքին համոզվածության: Այստեղ մենք միշտ տանուլ կտանք:

...Հարանվանությունները, իհարկե, այս առումով լուրջ դիտավորություններ կխաղան, որովհետև նրանք ճիշտ չեն մատուցի պատմական նրբերանգները, միշտ կփորձեն շատ ավելի վատ երանգներով նկարագրել, որովհետև մենք պատմության մեջ այնպիսի դեպքեր ենք ունեցել, որոնք ոչ թե ցավ կպատճառեն աշակերտի սրտին, թե ինչու է այդպես եղել, այլ նա ավելի շատ կնսեմացնի և դիտավորություն կստեղծի: Որովհետև ունեցել ենք այնպիսի փաստեր, որ ոչ թե եկեղեցու պատմության ուսուցիչն է այդպիսին եղել, այլ հայ ժողովրդի պատմության, հայոց լեզվի ուսուցիչն է աղանդավոր եղել, և նա իր ժամերն օգտագործել է, օրինակ Սբ Գր. Նարեկացու «Մասյան ողբերգության» խոսքին հարևանցիորեն, քամահրանքով կամ այլ երանգներ է օգտագործել, որ եթե ներկա չլինես դասին, բացարձակ չես իմանա՝ ինչ տեղի ունեցավ, ինչ լցվեց աշակերտի հոգու մեջ: Դրա համար էլ գտնում ենք, որ իհարկե, ցանկալի չէ ...Դպրոցներում շատ ուսուցիչներ կան, որոնք այս կամ այն կերպով հարում են որևէ կազմակերպությանը, բայց ես իրոք չեմ պատկերացնում, եթե այդպիսի ուսուցիչն հանձնվի առարկան, ինչ տեղի կունենա: Մենք ժամանակին ուղղակի ինդրում էինք տնօրեններին, որ «Քանի որ ձեր ձեռքում է այդ ամբողջը, մենք որևէ դերակատարում չունենք ուսուցիչ նշանակելու հարցում, եթե կան ուսուցիչներ, որոնց դուք ճանաչում եք որպես աղանդավորականների, լավ կլինի խուսափել նման ուսուցիչից»: Ու բացատրում էինք ինչի համար: Կարծում եմ՝ երևի դա էլ ազդել է, որպեսզի իրենք մի փոքր այդ առումով զգուշավոր լինեն»⁶⁴:

Ինչպես նշել էինք վերը, ուսուցիչների ընտրության և վերապատրաստման գործում որոշիչ դեր ունի ՔԴԿ-ն. «Օրենքում չկա առանց երաշխավորագրի աշխատելու արգելք: Մենք փորձում ենք

⁶⁴ Սբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու քահանա տեր Վահան Ազարյան, Վանաձոր:

այդ բացը լրացնել ուսուցչի հետ պարբերական հանդիպումների միջոցով: Ապագայում նախատեսել եմ ԿԳՆ-ին առաջարկել մի որոշման միջոցով այս վերապատրաստումները համարվեն այն վերջակետը, որով ուսուցիչն իրավունք ունի դասավանդելու: Եթե չունի վկայական, չպետք է դասավանդի: Վերապատրաստումից հետո բոլոր նրանք, ովքեր կանցնեն, ուսուցիչները կորակավորվեն և կզնան աշխատելու: Եթե ուսուցիչը հեռանա երկրից կամ ֆիզարձակուրդ վերցնի, նրա տեղը բաց կմնա: Մենք ծրագրել ենք մնայուն վերապատրաստման ծրագրեր. յուրաքանչյուր կիսամյակում, օրինակ, 10-օրյա վերապատրաստում, բայց Երևանում: Եթե տվյալ մարզում, օրինակ, 20 հոգի հավաքվի, վերապատրաստումը մարզում կանենք: Հետագայում, եթե վերապատրաստումներն անցածներին ևս մեկ վերապատրաստում անենք, արդեն կարող ենք նրանց տալ վերապատրաստողի որակավորում, և արդեն նրանք կկարողանան այդ բացը լրացնել: Դա շատ հետագայի հարց է: Մենք վերապահ ենք որևէ չվերապատրաստված ուսուցչի երաշխավորություն տալուց, չնայած ունենք լավ ուսուցիչներ»⁶⁵:

Իսկ ինչպես են բացահայտվում ուսուցիչների կրոնական հայացքները. «Բացահայտվում են դասալսումների միջոցով, որովհետև մեր ներկայացուցիչները նաև ուսումնասիրում են աշակերտների վարքը և գրառումները: Երևանի դպրոցներից մեկի տնօրենը հայտնաբերել էր, որ մի դասարան էապես տարբերվում է մյուսներից: Նա ասում էր, որ այդ երեխաների հայացքների մեջ կյանք չկար: Միջոցառումներ չէին անում, էքսկուրսիաների և խնջույքների չէին մասնակցում: Մեր ներկայացուցիչն այցելեց դպրոց և պարզեց, որ իրենց դասդեկն այլ կրոնական հարանվանության ներկայացուցիչ է, ում ազդեցությունն ամբողջապես երևում էր աշակերտների վրա: Եվ դասդեկին փոխեցին: Հայտնաբերելը շատ դժվար է, իսկ ապացուցելը՝ ավելի դժվար: Նորից պետք է բերեմ նույն օրինակը. եթե մարդն անգլերեն չգիտի և որակավորում չունի, ինչպես կարող է դասավանդել: Մենք ունենք

⁶⁵ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

չմկրտված ուսուցիչներ, այնպես որ դավանական խտրության հարց չկա: Պարզապես պետք է այդ արժեքների գիտելիքներն ունենա, որպեսզի կարողանա փոխանցել: Մի ուսուցիչ եմ ունեցել, որ մտել է դասարան և երեխայի հարցին պատասխանել է, որ ինքն այդ պարապ բաներին չի հավատում, հիմար բաներ են գրված: Դրանով ուսուցիչն արդեն ոչնչացրել է այդ առարկան: Մենք ո՞նց կարող ենք հանդուրժել, որ այդ ուսուցիչը երկրորդ անգամ էլ մտնի նույն դասարան: Այս վտանգը կա»⁶⁶: Հայր Վարդանի կարծիքով՝ ուսուցիչների շրջանում այլ կրոնական հայացքներ և համոզմունքներ ունեցող անձինք չկան. «Ես կարծում եմ, որ չկան, որովհետև մեր ուսումնասիրությունները դա են ցույց տալիս: Եթե կան ծպտյալներ, նրանց մասին տեղյակ չեմ»⁶⁷:

«Ես չեմ հանդիպել, բայց մեր հսկիչը, մեր տեսուչ Աննան, այո, ունեցել է նման դեպքեր և իրազեկել է ինձ այդ մասին, որ էսինչ դպրոցում էսինչ պատմության ուսուցչուհին կամ էսինչ առարկայի ուսուցչուհին այլադավան է, և փորձել ենք դեմն առնել, ասենք, տնօրենին ենք տեղեկացրել, կրթության բաժնին ենք տեղեկացրել, և իրենք հարցին լուծում են տվել: Եղել է դեպք, որ հեռացրել են աշխատանքից»⁶⁸: Մեր այն հարցին, թե հեռացված ուսուցչուհին դասերի ժամանակ կրոնական քարոզչություն իրականացրե՞լ է, տեր Լևոնը պատասխանել է, որ տեղյակ չէ:

ՔԴԿ-ի տնօրեն հայր Վարդանը պարզաբանում է այդ կառույցի աշխատանքի ընթացակարգը. «Ես դիմում չեմ գրում, որովհետև աշխատանքային ու անձնական առումով ճիշտ չեմ համարում միանգամից գործից ազատելը: Ի վերջո, նաև Աշխատանքային օրենսգրքի հետ կապված հարցեր կան: Ես ամենասկզբում փորձում եմ իմ ներկայացուցչին ուղարկել ուսուցչի մոտ՝ պարզելու համար՝ ինչ հնարավորություն ունենք նրան շտկելու: Եվ ես համբերատար

⁶⁶ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

⁶⁷ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

⁶⁸ Տեր Լևոն քահանա Հովհաննիսյան, Լմբատավանքի վանահայր, Արթիկ քաղաքի հոգևոր հովիվ:

եմ: Սևանում մի հոգեգալստական ուսուցիչ հերքում էր մեր փաստարկները և հայտարարում, որ դասերի ժամանակ չի քարոզում: Մենք փաստերը դնում էինք նրա դիմաց (ընդհուպ իր աշակերտներին ժամադրում էր հավաքատեղիում): Ես ուղարկեցի մի 3 հոգանոց հանձնախումբ՝ դասալսման, որի արդյունքները տարան տնօրենին, որը չուզեց լսել, որովհետև այդ ուսուցչուհին ինչ-որ պատգամավորի ազգականուհին էր: Ես գնացի ու հանդիպեցի մարզպետարանի աշխատակցի հետ՝ նրա առաջարկությունները լսելու համար: Դժբախտաբար կրթության վարչության պետն էլ չկարողացավ ընթացք տալ գործին, և թեմի առաջնորդը միջամտեց: Երբ պարզվեց, որ պատգամավորը խոչընդոտում է, մենք գրեցինք նախարարին և բարձրաձայնեցինք մեր հրապարակային ելույթներում: Ի վերջո, չիմացա ինչպես հարցը լուծվեց, և այդ մարդը դպրոցում այլ պաշտոնի անցավ: Կան այլ խնդիրներ: Կա դպրոց, որտեղ կա այդ առարկայի 9 ժամ և 9-ը ուսուցիչ: Մեր ներկայացուցիչը խնդրում է տնօրենից կրճատել ուսուցիչների քանակը՝ դասավանդման որակը բարձրացնելու համար: Մեծ մասամբ, 100-ից ավել դպրոցում տնօրեններն ուսումնական տարվա սկզբին ուսուցիչների քանակը նվազեցրել էին: Նախարարության միջոցով լուծված որևէ գրանցված միջադեպ չեմ հիշում: Ոչ մի դեպք չի եղել, երբ դեպքն ընթացք չի ստացել:

Արագածոտնի մարզում մեր 6 տարվա խիստ ակտիվ ուսուցչին ցանկանում էին հեռացնել և ինչ-որ ծանոթ մեկի բերել, ընդհուպ մինչև վախեցնելու փորձեր: Ես ասացի, որ իմ ուսուցչի պաշտպանն եմ և զգուշացրեցի մարզպետարանի ներկայացուցչին, որ եթե այդ ուսուցիչը հեռացվի, ես դատի եմ տալու և ադմուկ եմ բարձրացնելու մինչև ՀՀ նախագահ: Այդ զգուշացումից հետո բոլոր լուրերը դադարեցին: Ուսուցչին պաշտպանելու դեպքեր շատ են եղել»⁶⁹:

2012թ. փետրվարի 18-ին «Շանթ» հեռուստաընկերության նորությունների թողարկման ժամանակ տեղեկացվել է, որ շուրջ երկու

⁶⁹ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

տասնյակ ուսուցիչներ հեռացվել են աշխատանքից դպրոցներում կրոնական քարոզներ կատարելու համար: Հաղորդման ընթացքում նախարարը ասում է, որ այդ ուսուցիչները եղել են այլ կրոնական կազմակերպությունների հետևորդներ: Այս ուսումնասիրությունը պատրաստող «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի կողմից նախարարին ուղղվել է գրություն, որով խնդրել էինք մեզ տրամադրել տեղեկություններ այդ ուսուցիչներին աշխատանքից հեռացնելու պատճառների և այդ կապակցությամբ նախարարության ծառայողական քննության արդյունքների մասին, սակայն նախարարը պատասխան գրությամբ հրաժարվեց մեզ տրամադրել նման տեղեկություններ այն պատճառաբանությամբ, թե մեր կենտրոնի և նախարարության միջև համագործակցության որևէ պայմանավորվածություն չկա⁷⁰: Նման պատասխանը խախտում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, քանի որ սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել միայն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում: Ո՛չ Սահմանադրությամբ և ո՛չ էլ օրենքներով որևէ նորմ չի սահմանված, համաձայն որի՝ հանրային տեղեկատվության տրամադրումը կարող է կարգավորվել տեղեկատվությունը խնդրողի և տեղեկատվությունը տնօրինող հանրային մարմնի միջև համագործակցության մասին հատուկ պայմանավորվածությամբ: Նույն օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է տեղեկատվության տրամադրման մերժման հիմքերի սպառիչ ցանկը: Կազմակերպության խնդրանքը մերժելիս նախարարը, եթե գործեր իրավաչափորեն, պետք է հղում կատարեր այդ հիմքերից որևէ մեկին (տե՛ս նաև հոդված 11): Քանի որ նշված հիմքերից ոչ մեկին հղում չի կատարվել, նշանակում է նախարարը գործել է կամայականորեն՝ տեղեկատվության տրամադրման մերժման համար ընտրելով անիրավաչափ հիմք: Ավելին, նախարարը խախտել է ոչ միայն նեգատիվ, այլև պոզիտիվ պարտավորությունը տեղեկատվության տրամադրումը մերժելով այնպիսի պայմաններում, երբ տեղեկատվության տրամադրումը չէր կարող մերժվել

⁷⁰ Ա. Աշոտյանի պատասխան նամակի համարը՝ N 01/01/2860-12, 23/03/2012:

ելնելով հանրային գերակա շահից: Մասնավորապես, նույն 8-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության դեպքում տեղեկատվության տրամադրումն արգելվում է մերժել, այդ թվում, եթե տեղեկությունը *«ներկայացնում է Հայաստանի Հանրապետության...կրթության...բնագավառում տիրող իրական վիճակը»*: Վերոհիշյալի հիման վրա ակնհայտ է, որ նախարարը գործել է ՀՀ Սահմանադրության 5-րդ և 27-րդ հոդվածների խախտումով:

4.3 Որակավորում կամ վերապատրաստում

Թուլեղույի ուղեցույցում նշված են ուսուցիչների վերապատրաստման և այդ գործընթացի՝ կառավարության դերակատարության մասին. կառավարությունները պետք է հաստատեն վերահսկողական մեխանիզմներ, եթե նման մեխանիզմ գոյություն չունի, մոնիթորինգի ենթարկեն և արժևորեն այն եղանակը, որով ընտրվում և վերապատրաստվում են ուսուցիչները: Վերապատրաստման ծրագրերը պետք է համապատասխանեն ժողովրդավարական և մարդու իրավունքների սկզբունքներին: Կրոնների կամ հավատքների ազատությանը վերաբերող պարտավորությունը, մարդու իրավունքների կրթությանը վերաբերող հարցերի նրբությունը, ինչպես նաև փոխադարձ հարգանքին ու փոխըմբռնմանն ուղղված կրթությունը պետք է կրոնների ու հավատքների մասին ուսուցանող բոլոր ապագա ուսուցիչների համար դառնան նախապայման:

«Փոխադարձ հարգանքի մշակույթի խթանումը, ժողովրդավարական հասարակություններում արդյունավետ մասնակցության համար հավասար հնարավորությունների ստեղծումը, հավասարությունը և փոխըմբռնումը պահանջում են համակարգված, բազմակողմանի ու երկարաժամկետ մոտեցում»⁷¹:

Հայաստանում ուսուցիչների վերապատրաստումը, ըստ օրենքի, պետք է կազմակերպեն կառավարությունը և ՀԱՄԵ-ն, սակայն

⁷¹ ԵԱՀԿ նախարարական խորհրդի որոշում հ. 13/06, նախաբան, op.cit. note 1:

գործնականում այդ գործընթացն ամբողջովին դրված է եկեղեցու վրա, որը, ըստ էության, որոշումներ է կայացնում:

«Եթե ուսուցիչը վնասում է ն՝ առարկային, ն՝ աշակերտին, ն՝ դպրոցին ընդհանուր առմամբ, մենք այդ բոլոր ուսումնասիրություններն ու զեկուցագրերը կցում ենք մեր նամակին, որը գնում է առաջին հերթին ԿԳՆ, կամ մենք անձամբ հանդիպում ենք կրթության վարչության մարզային պետին և հարցը նրա հետ ենք քննարկում: Երկու տարի առաջ Արարատի մարզում ունեինք բողոքական քարոզիչ, որը եկեղեցու պատմություն էր դասավանդում և տնօրենի ազգականն էր. դրա համար չէինք կարող ձեռք տալ նրան: Երևի 5-6 ամիս տևեց, մինչև նրան հեռացրեցինք: Ավետարանականը չի կարող Հայ առաքելական եկեղեցու պատմություն պարապել, ինչպես որ ռուսերենի մասնագետը չի կարող անգլերեն պարապել: Դա պարզ տրամաբանություն է: Մեր տեսուչը բազմիցս հանդիպեց տնօրենի հետ, ցույց տվեց դասալսումների արդյունքները, երեխաների տետրերը: Ի վերջո, «Կրթության մասին» օրենքով դպրոցում որևէ կրոնական քարոզչություն արգելված է: Հիմա եթե քահանան մտնի դպրոց, ու ոչ թե հանդիպի հարցերին պատասխանելու նպատակով, այլ մոլեռանդ քարոզ անի, և երեխաները բոլորը մոլեռանդ դառնան, նորմալ էք համարում: Տնօրենի մոտ անհաջողության մատնվելուց հետո մենք այս հարցը բարձրացրեցինք մարզպետարանում, և, ի վերջո, տնօրենին ազատեցին աշխատանքից»⁷²:

Հայր Վարդանը ներկայացնում է ՔԴԿ-ի դերը ուսուցիչների վերապատրաստման գործում. «2.5 տարի է, որ վերապատրաստումները դադարել են, այն բանից հետո, երբ ես անձամբ ուսումնասիրեցի և տեսա, որ դրանք ինքնանպատակ են, և դրանց արդյունքում որակավորում են ստանում եկեղեցու պատմությունից տարրական գիտելիքներ չունեցող անձինք: Իմ պատասխանատուների հաշվետվություններում դրա բազմաթիվ ապացույցներ ու փաստեր կան: Դրա համար ես առաջարկեցի, որ վերա-

⁷² Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

պատրաստման մոդուլը փոխվի: Այն ժամանակ 60 ժամ էր տրված դրա համար, և դրա գերակշիռ մասը մեթոդաբանություն էր: Բայց այդ ուսուցիչն արդեն նման կրթություն ստացել է ինստիտուտում և բազմաթիվ տարիների փորձ ունի: Դրա փոխարեն պետք է առարկայի նյութի վրա կենտրոնանալ: Այդ պատճառով Կրթության ազգային ինստիտուտի հետ փոքրիկ անհամաձայնություն եղավ: Այսօր մարզերում իրավիճակը բավականին տխուր է, որովհետև քիչ են նույնիսկ այն ուսուցիչները, ովքեր գոնե անցել են այն 20-30% վերապատրաստումը, որ արվել էր նախկինում: Ես պետք է մեր հանձնախմբի նիստին առաջարկեմ, որ քանի որ առջևում ատեստացիայի հարց կա, վերապատրաստումն ավելի նպատակային լինի: Կրթության ազգային ինստիտուտի կայքում դրված է վերապատրաստման ծրագիրը, բայց դա ամբողջությամբ այն չէ: Մենք փորձեցինք մի միջանկյալ ծրագիր պատրաստել և Երևանի մի քանի համայնքների ուսուցիչների վերապատրաստում անել և արեցինք: Արդյունքում տեղեկանքներ տվեցին, ոչ թե լիազորագրեր՝ ասելով, որ այդ գործընթացը ժամանակավորապես կասեցվել է»⁷³:

Շիրակի մարզի կրթության պատասխանատուներից տիկին Ավետիսյանը նույնպես փաստում է, որ վերապատրաստման գործը եկեղեցու վրա է դրված. «Մի անգամ վերապատրաստվել են, վկայական ստացել և վերջ: Վերապատրաստումները կարծեմ երկուերեք անգամ են եղել՝ տարբեր տարիների ընթացքում: Չեմ կարող ասել, որ նույն ուսուցիչը երկու անգամ վերապատրաստվել է, բայց եղել են ուսուցիչներ, որ փոխվել կամ գնացել են, նրանք նորից գնացել են վերապատրաստման: Վկայականները առաջնորդարանի կողմից տրված են»⁷⁴:

«Մի ժամանակ ուսուցիչները պետք է անցնեին Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի դպրոցը, և մեծ մասն այդ դպրոցն էլ անցել է ու ստացել են հատուկ հավաստագրեր: Իրենք չունեն համապատասխան միջին մասնագիտական, նաև բարձրագույն

⁷³ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

⁷⁴ Ջեմմա Ավետիսյան, Շիրակի մարզպետարանի կրթության վարչության գլխավոր մասնագետ:

կրթություն, և այդ հավաստագրերը ստացել են դասընթացն ավարտելուց ու ստուգարքը ստանալուց հետո: Այդ կապը եղել է և աշխատում է: Հիմա էլ անհրաժեշտության դեպքում այդ կապը նորից պետք է աշխատի: Բացի սերտիֆիկացիա ապահովելուց, այդ մարմինը յուրաքանչյուր տարի մրցույթ է կազմակերպում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչների շրջանում: Մենք այստեղ դրա մարզային փուլն ենք ամփոփում՝ անպայման իրենց ներկայությամբ և հովանավորությամբ, այնուհետև այն շարունակվում է Էջմիածնում, որտեղ բազմիցս մեր ներկայացուցիչները լավագույն տեղեր են զբաղեցրել»⁷⁵:

«Մոտ 4-5 տարի է՝ քրիստոնեական դաստիարակության կենտրոնները կենտրոնացված են՝ իբրև կենտրոնացված գործող մարմին, որպեսզի նախարարության հետ համագործակցությունը, դասագրքերի խնդիրները, մի քանի նման բաներ կարողանան կենտրոնացված կատարել: Այլևս կարծես թե ամեն թեմ յուրովի չմտածի կամ յուրովի չառաջնորդվի: Հիմա արդեն շուրջ երկու տարի է՝ մի նոր համակարգ է մտել՝ հիմնականում քաղաքներում կան արդեն պատասխանատուներ, այսպես ասած Մայր Աթոռի ներկայացուցիչներ: Նրանք հիմնականում նոր նշանակված աշխարհիկ անձինք են, ովքեր հիմնականում աստվածաբանության ֆակուլտետից են, ովքեր արդեն իրավունք կստանան Մայր Աթոռի ՔԴԿ-ից դասալսումներ անցկացնելու, առարկայի որակը ստուգելու, ուսուցչի կոմպետենտությունը ստուգելու. հիմնականում ավելի շատ ոչ թե ստուգումներ անցկացնելու՝ վարչարարական առումով, այլ ավելի շատ առարկան թարմացնելու, ուսուցչին ու առարկան կարևորելու գործընթաց է գնում: Ինչի կարիք կա առարկայի համար: Ի՞նչն է անհանգստությունը: Այսօր Մայր Աթոռը՝ իբրև Հայաստանում քրիստոնեության պաշտոնական ներկայացուցիչ, այս առումով «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ամենաառաջին շահագրգիռ կողմն է: Այլապես մենք յուրաքանչյուրս խորապես գտնում ենք, որ «Հայ եկեղեցու պատմություն» առարկան,

⁷⁵ Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

որ կոչված է լավ քաղաքացի՝ քրիստոնյա, ազնիվ, ձևավորելուն լրջագույնս ուղղված առարկաներից մեկն է»⁷⁶:

Սակայն, բացի ՔԴԿ-ից, եկեղեցիները նույնպես ակտիվորեն ներգրավված են ուսուցիչների վերապատրաստման գործընթացին. «Երբ 2003թ. արդեն կառավարության և Ամենայն հայոց կաթողիկոսի միջև համաձայնություն ստորագրվեց, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան պետք է մտնի իբրև պետական դասավանդման առարկա՝ դպրոցական պարտադիր ժամերին, միանգամից հասկանալի է, որ ամբողջ իշխանությունը դպրոցին էր՝ կառավարությանը, որովհետև դպրոցը, այսպես ասած, կառավարության ներկայացուցիչն է: Մայր Աթոռն առարկայի մասով իր դերակատարությունն ունի միայն այնքանով, որքանով որ ինքը կարող է շատ ավելի լավ պատրաստել այդ առարկայի ուսուցչին: Բայց վերապատրաստումների ժամանակ մենք միշտ չէ, որ միայն մեր ուժերին ենք վստահում, այլ Կատարելագործման ինստիտուտում կան, օրինակ, հայ ժողովրդի պատմության մասնագետներ, կան մեթոդիստներ, որովհետև նոր մեթոդներ են մտնում, դասավանդման նոր տեսակներ, ձևեր: Նեղ մասնագիտացված թեմաների շուրջ նոր «վերապատրաստում է եկեղեցին», բայց այն էլ ասեմ, որ վերջին մի քանի վերապատրաստումները, որոնք տեղի ունեցան, կատարվում են մեր առաջարկով և մեր փոքրիկ ուսումնասիրությունների հիման վրա՝ հաշվի առնելով ուսուցիչների արձագանքը, այդպիսի վերապատրաստման կարիք ունեցող ուսուցչի խնդրանքը, մենք դիմում ենք նախարարություն և Մայր Աթոռ (եթե ինձ են ասել՝ իբրև հոգևորական, ես դիմում եմ Մայր Աթոռին և առաջնորդի միջոցով խնդրանքը փոխանցել): Կարող են դիմել նաև մի քանի տնօրեններ, եթե, օրինակ, հին ուսուցիչը դուրս է եկել աշխատանքից, կամ ինչ-որ այլ խնդիր կա, և ուզում են նոր ուսուցիչ ընդգրկել»⁷⁷:

«Մեր դերակատարումը՝ իբրև հոգևորական, եղել է զուտ վերապատրաստումներ առաջարկելով, և եթե անհրաժեշտ է եղել, նաև

⁷⁶ Սբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու քահանա տեր Վահան Ազարյան, Վանաձոր:

⁷⁷ Սբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու քահանա տեր Վահան Ազարյան, Վանաձոր:

մեր դասավանդման առաջարկությունը բերելով, որովհետև նեղ մասնագիտացված առարկաներն անգամ դասավանդվել են Հայ աստվածաշնչյան ընկերակցության կողմից, որը ոչ մեկին չենթարկվող կառույց է և համագործակցում է բոլոր տեսակի կրոնական կազմակերպությունների հետ: Վերջին վերապատրաստումը տեղի ունեցավ 2010թ. օգոստոսին (որքան հիշում եմ): Երկու թե երեքշաբաթյա վերապատրաստումներ էին՝ երեք-երեք օրով, որտեղ մի հոգի ընդգրկված էր Մայր Աթոռից, որ պիտի դասավանդեր զուտ եկեղեցու խորհուրդները, մնացյալ բոլորը գալիս էին Կրթության ազգային ինստիտուտից, նախարարությունից, դպրոցներից, մեթոդիստներ: Պատկերը, սակայն, միայն Վանաձորի հետ կապվեց. դեռ շրջանները մնացել են: Գյուղերում դեռ մի փոքր կաղում են ուսուցիչները»⁷⁸:

Նման իրավիճակ է նաև Սյունիքի մարզում. «Թող Հայ առաքելական եկեղեցին և համալսարանը համատեղ ծրագիր մշակեն, որ դպրոցներում առարկան դասավանդեն աստվածաբանական ֆակուլտետի շրջանավարտները: Ես հարիր չեմ գտնում, որ հայոց եկեղեցու պատմության մասնագետը պետք է եկեղեցու պատմություն դասավանդի դպրոցում: Ժամանակին երկու հոգի մեզ մտա եղել են, երկուսն էլ դուրս են եկել, հավանաբար և՛ ֆինանսական, և՛ ժամերի քչության պատճառներով: Վերապատրաստումները պետք է լինեն շատ բարձր մակարդակի վրա: Գուցե դրանք շատ միջոցների հետ են կապված, սակայն բոլոր ուսուցիչները վերապատրաստման կարիք ունեն: Ամեն տարի յուրաքանչյուր դպրոց 20%-ի չափով ուսուցիչներ է ուղարկում վերապատրաստման, բայց արդյունավետության աստիճանը գոհացուցիչ չէ»⁷⁹:

Եկեղեցու դերը ազդեցիկ է ոչ միայն կրոնին առնչվող առարկաների ուսուցիչների ընտրության և վերապատրաստման գործում: Եկեղեցին փորձում է վերահսկել նաև այն ուսուցիչների աշխատանքը, ովքեր կարող են լինել այս կամ այն եկեղեցու հետևորդ. «ՔԴԿ-ից

⁷⁸ Սբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու քահանա տեղ Վահան Ազարյան, Վանաձոր:

⁷⁹ Հարցազրույց Սյունիքի մարզպետարանի կրթության բաժնի պետ Արսեն Գրիգորյանի հետ:

մեզ տեղեկացրել են ուրիշ ուսուցիչների՝ աղանդավոր լինելու մասին: Կոնկրետ դեպք ասեմ, Միսիանում ուսուցիչը մտել է բնակարան և քարոզչություն է ծավալել: Երբ ես գրուցեցի տնօրենի հետ և պահանջեցի նրա վերաբերյալ բնութագիր, տնօրենը շատ դրական բնութագիր գրեց: Երբ սկսեցի խոսել նրա աշխատանքային ընկերների հետ, նրանք պատճառաբանեցին, որ տվյալ ուսուցիչը շատ պարտաճանաչ և պատասխանատու աշխատող է և ընդհանրապես դպրոցում նման բան չի անում: Ես հավաստիացա, որ տվյալ մարդը շատ արժանավոր աշխատել է: Նման բան եղել է նաև Կապանում, երբ բոլորը մի աղջկա մասին, որը պետք է ընդունվեր աշխատանքի, ասում էին, որ նա աղանդավոր է: Ես ինքս օժանդակեցի, որ նա ընդունվի աշխատանքի: Հետո հավաստիացանք, որ աղջկա մասին թյուր կարծիք էր կազմվել»⁸⁰:

«Ուսուցիչները, իբրև անհատներ, ունեն մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք և կարող են չթաքցնել իրենց կրոնը կամ հավատքը մարդու իրավունքների ընդհանուր շրջանակներին համահունչ: Այնուամենայնիվ, ճշմարիտ է, որ կրթական միջավայրում գործունեություն ծավալելու առումով նրանք ենթակա են մի շարք օրինական սահմանափակումների, երբ աշխատում են դպրոցում, երաշխավորելով, որ դպրոցին համապատասխան կրթական միջավայրը պահպանվում է, և անհրաժեշտության դեպքում հաշվի է առնվում դպրոցի յուրահատուկ բնույթը, և հարգվում են ծնողի ու երեխայի իրավունքները: Կրոնների և հավատքների մասին կամ որևէ առարկա ուսուցանելիս ուսուցիչները պետք է իրենց խնդրին մոտենան հավասարակշռված ու շատ պրոֆեսիոնալ և որպես ուսուցիչներ՝ չպետք է օգտագործեն իրենց դիրքը՝ աշակերտների հավատքների վրա ազդելու համար»⁸¹:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս առարկայի դասավանդման ժամանակ խախտվում են ՀՀ օրենսդրության,

⁸⁰ Հարցազրույց Մյունիքի մարզպետարանի կրթության բաժնի պետ Արսեն Գրիգորյանի հետ:

⁸¹ Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ:

Սահմանադրության և միջազգային իրավունքի մի շարք հիմնարար սկզբունքներ ու դրույթներ:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ դպրոցներում կրոնի պատմության դասավանդման բացարձակ արտոնությունը տրամադրված է միայն ՀԱՄԵ-ին, ապա այս առումով միջազգային նորմերը, մասնավորապես Եվրոպական դատարանը, սահմանում են, որ պետության կողմից առանձին կրոնական համայնքի հետ վերջինիս համար հատուկ ռեժիմ սահմանող համաձայնագրի կնքումը սկզբունքորեն չի հակասում Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 9-րդ և 14-րդ հոդվածներին, պայմանով, եթե տարբերակված վերաբերմունքի համար տրամադրվում են օբյեկտիվ և ողջամիտ հիմքեր, և եթե նման համաձայնագրեր կնքելու հնարավորությունը տրամադրվում է նաև այլ կրոնական համայնքների, եթե վերջիններս նման ցանկություն դրսևորում են⁸²: Այսպիսով, Կոնվենցիան սկզբունքորեն դեմ չէ, եթե առանձին կրոնական համայնքներ, որոշակի պատմական կամ մշակութային նախապայմաններից ելնելով, պետության կողմից ստանում են հատուկ արտոնություններ: Այդուհանդերձ, եվրոպական դատարանը գտնում է, որ *«կախված արտոնությունների քանակից և բնույթից, կրոնական համայնքները ձեռք են բերում էական առավելություն և պետության կողմից նման ընդգծված վերաբերմունքը որոշ կրոնական համայնքների նկատմամբ անկասկած նպաստում է, որ կրոնական համայնքը կատարի իր առջև դրված խնդիրները: Հաշվի առնելով կրոնական համայնքների համար նման արտոնությունների էական նշանակություն հանդիսանալու հանգամանքը, Կոնվենցիայի 9-րդ հոդվածով պետական մարմինների վրա դրված իրենց գործառույթներն այս տիրույթում իրականացնելիս չեզոքություն պահպանելու պարտավորությունը պահանջում է, որ եթե պետությունը ստեղծում է կրոնական խմբերին իրավաբանական անձի կարգավիճակ տալու իրավական կառուցակարգ, որի հիման վրա կրոնական խումբը ձեռք է բերում հատուկ կար-*

⁸² Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Մավեզ Մրկավա Ռիջեչ Ժիվոտան ու այլք ընդդեմ Խորվաթիայի* գործով, թիվ 7798/08, 09/12/2010թ., § 85:

զավիճակ, ապա բոլոր կրոնական խմբերին, որոնք նույնպես ցանկանում են ստանալ հատուկ կարգավիճակ, պետք է տրամադրվի արդարացի հնարավորություն նման կարգավիճակ ձեռք բերելու նպատակով դիմելու համար, և սահմանված չափանիշները պետք է կիրառվեն առանց խտրականության»⁸³:

Որպես ուղեցույց ընտրելով վերը շարադրված մոտեցումները, որոնք ունեն պարտադիր նշանակություն ՀՀ դատական համակարգի⁸⁴ բոլոր իրավակիրառողների, օրենսդիր և գործադիր իշխանությունների համար, քանի որ նշված նախադեպերը Կոնվենցիայի հետ մեր օրենսդրության բաղկացուցիչ մասն են համարվում, կարելի է վստահաբար պնդել, որ օրենքի ուժով ՀԱՄԵ-ին տրամադրված հատուկ կարգավիճակը ինքնին չի խախտում միջազգային սկզբունքները, քանի դեռ նման կարգավիճակը բացարձակ բնույթ չի կրում: Սակայն հաշվի առնելով ներկա իրողությունը, ըստ որի՝ ՀԱՄԵ-ն պետության հետ կնքած համաձայնագրի հիման վրա ստացել է հանրակրթական դպրոցներում կրոնի պատմության դասավանդման բացարձակ իրավունք, և կրոնական մյուս համայնքները, որոնք օրինական գրանցված են ՀՀ-ում և ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, զրկված են նման արտոնություն ստանալու համար դիմելու և արդարության պահանջների ներքո իրենց դիմումը վիճարկելու հնարավորությունից, կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության՝ որպես Կոնվենցիայի մասնակից պետության, խախտում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը:

Խնդրահարույց է նաև կրոնի առարկայի մատուցման եղանակը: Կրոնի առարկան դպրոցներում մատուցվում է Հայ առաքելական եկեղեցու դավանաբանության դոկտրինացման ուղղությամբ: Այս հանգամանքը կարող է լուրջ համակարգային հակասություններ առաջացնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության հետ,

⁸³ Մավեզ Մրկավայի գործով վճիռը, վկայակոչված վերը, § 87: Տե՛ս նաև *Religionsgemeinschaft der Zeugen Jehovas-ն ու այլք ընդդեմ Ավստրիայի*, թիվ 40825/98, 31/07/2008, § 92:

⁸⁴ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս:

համաձայն որի՝ «պետությունը կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ջանկացած գործառույթ իրականացնելիս հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական և փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը»: Նախադեպային իրավունքում այս դրույթը մեկնաբանվում է այնպես, որ պետությունը կաշկանդված չէ հանրակրթական դպրոցների ուսուցողական ծրագրերում կրոնի և փիլիսոփայության ուսուցման ծրագրեր ներմուծել, և այս իմաստով Կոնվենցիան իրավունք չի սահմանում ծնողներին առարկել դպրոցական ծրագրերում նման առարկաների դեմ: Հարցն այն է, որ իր գործառույթներն այս հոդվածի ներքո իրականացնելիս պետությունը պետք է ապահովի, որ դասացուցակներում ներառված գիտելիքները և տեղեկությունները մատուցվեն օբյեկտիվության, քննադատության թույլատրման և բազմազանության սկզբունքների հիմունքներով: Այս հոդվածը պետություններին արգելում է կրոնի և փիլիսոփայության առարկաների մատուցումն իրականացնել դոկտրինացման եղանակով, քանի որ այդ դեպքում չեն հարգվի ծնողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքները: Այս սահմանափակումը, ըստ Եվրոպական դատարանի, արգելվում է խախտել, և նման մեկնաբանությունը համահունչ է և՛ թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասությանը, և՛ Կոնվենցիայով սահմանված այլ իրավունքների՝ անձնական կյանքի իրավունքի, խղճի և համոզմունքների, ազատ արտահայտվելու, ազատության իրավունքների և ընդհանրապես Կոնվենցիայի ընդհանուր ոգուն⁸⁵:

Ինչ վերաբերում է ուսուցիչների վերապատրաստման ու ընտրության կարգին, ապա այստեղ նույնպես կան լուրջ հակասություններ միջազգային սկզբունքների և ներպետական օրենսդրության հետ: Ուսուցչի ընտրության կամ նրան աշխատանքից ազատելու հիմքերը պետք է կապված լինեն նրա մասնագիտական գիտելիքների և հմտությունների, այլ ոչ թե կրոնական հայացքների

⁸⁵ *Կելդրսենը, Բուսկմադսենն ու Պեդերսենը ընդդեմ Դանիայի*, թիվ 5095/71, 5920/72, 5926/72, 07/12/1976, § 53:

և համոզմունքների հետ⁸⁶: Այնքանով, որքանով հարցն առնչվում է կրոնական հայացքներին և համոզմունքներին, ուսուցչին աշխատանքից ազատելը կարող է արդարացված համարվել միայն այն դեպքում, երբ վերջինս իրականացնում է կրոնական քարոզչություն: Մինչդեռ կրոնական համոզմունքները, որպես ինֆորմացիա, չեն կարող հիմք դառնալ անձի հարաբերությունները պետության հետ ընդգծելու,⁸⁷ առավել ևս անձին խարանելու⁸⁸ համար: Նշվածի լույսի ներքո, վերը շարադրված պրակտիկան, որը հաստատվում է բազմաթիվ վկաների հայտարարություններով, համարվում է կոպիտ միջամտություն դասատուների անձնական կյանքի, հավատքի ու խղճի ազատության, միավորումների ազատության և խտրականության արգելման սահմանադրական ու կոնվենցիոն իրավունքներին: ՀՀ Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը նաև սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնարար իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, իսկ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք⁸⁹: Կարծում ենք՝ իշխանությունները գիտակցում են վերը նշվածը, քանի որ տարածված պրակտիկայի համաձայն, որպես կանոն, աշխատանքից ազատելու դեպքերը ֆորմալ առումով ձևակերպված են անձանց սեփական դիմումների, այլ ոչ թե Աշխատանքային օրենսգրքի հիմքով գործատուի նախաձեռնությամբ հարուցված կարգապահական վարույթի շրջանակում:

Ինչ վերաբերում է այն տարածված պրակտիկային, համաձայն որի՝ կրոնի պատմության առարկայի դասատուներին համատարած կերպով հարցում է արվում նրանց կրոնական համոզմունքների և պատկանելիության մասին, ապա նման հարցումը նույնպես համարվում է անհարկի միջամտություն անձանց համոզմունքների և կրոնի ազատության իրավունքին, ինչպես նաև անձնական կյանքի

⁸⁶ Թուլեոյի սկզբունքներ, Բաժին 4, ենթաբաժին Դ, էջ 62:

⁸⁷ *Գրգելյակն ընդդեմ Լեհաստանի*, թիվ 7710/02, 15/06/2010, § 93:

⁸⁸ *Գրգելյակն ընդդեմ Լեհաստանի*, § 99:

⁸⁹ ՄՂՈ-991, § 5:

գաղտնիությանը: Դա է պատճառը, որ Աշխատանքային օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ «Գործատուն իրավունք չունի ձեռք բերելու և մշակելու աշխատողի քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների կամ անձնական կյանքի վերաբերյալ տվյալներ...»:

Այսպիսով, եթե ուսուցիչների ընտրության և վերապատրաստման օրենսդրական հիմքերը մեծ մասամբ համահունչ են միջազգային նորմերի, մասնավորապես Թուլեդոյի սկզբունքներին, ապա գործնականում կան լուրջ հակասություններ, որոնք գնալով խորանում են:

5. Կրոնական ծիսակատարություններ դասերի ժամանակ

Թուլեդոյի ուղեցույցում նշվում է կրոնական կրթության չեզոքության պահանջը. «Համաձայն միջազգային չափանիշների՝ պետությունները կրոնական կրթության առումով բավական ազատ են, սակայն կրթական համակարգի միջոցով չեն կարող աշակերտներին ուսուցանել որևէ կոնկրետ աշխարհայացք՝ հակառակ աշակերտների ծնողների ցանկությունների: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակորեն սահմանել է. «Կրթության և ուսուցման հետ կապված իր գործառույթներն իրականացնելիս պետությունը պետք է հոգ տանի, որ կրթական ծրագրերում առկա տեղեկատվությունը կամ գիտելիքներն իրենց բնույթով լինեն օբյեկտիվ, հիմնարար ու բազմախոհ: Պետությունը չի կարող հետամուտ լինել այնպիսի ուսուցման, որը կարող է անհարգալից դիտվել ծնողների կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքների նկատմամբ: Սա այն սահմանն է, որ չպետք է գերազանցվի»⁹⁰:

Ըստ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչների, որոնք մշակված են Կրթության ազգային ինստիտուտի կողմից, և որոնց հիման վրա կազմվել են դասագրքերը, *«Առարկայի մշակման հիմքում ընկած է կրթության աշխարհիկ սկզբունքը: Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրությունը ներկայացվող դասընթացի բովանդակության շրջանակներում հանդիսանում է աշխարհիկ կրթություն՝ կոնկրետ էթնոմշակութային, էթնոդավանական և քաղաքակրթական ուղղվածության կրոնագիտական կրթության տեսակ»:* Կրթության աշխարհիկ բնույթի մասին ասվում է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքում, սակայն «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի վերաբերյալ անցկացված մեր մոնիթորինգի արդյունքները փաստում են, որ կրթության աշխարհիկ լինելու մասին սկզբունքը հաճախ խախտվում է, և ժամանակի ընթացքում նման խախտումներն ստանում են համակարգային

⁹⁰ Տե՛ս Ֆուլգերն ընդդեմ Նորվեգիայի (ECtHR, App. No. 15472/02, 29 June 2007), para. 84 (h):

բնույթ: Կրթության աշխարհիկ բնույթը խախտվում է ՀԱՄԵ-ի՝ դպրոցական ծրագրերում, ուսուցիչների պատրաստմանն ու վերապատրաստմանը միջամտելու, ինչպես նաև կրթական գործընթացի վերահսկողությանը միջամտելու միջոցով: Այս բաժնում ներկայացնում ենք հանրակրթական դպրոցներում կրոնական ծիսակատարությունների վերաբերյալ մեր անցկացրած մոնիթորինգի արդյունքները:

Ըստ այդ արդյունքների՝ կառավարությունն այս հարցում որևէ հստակ քաղաքականություն չի վարում: Դպրոցներում դասերի ժամանակ կրոնական ծիսակատարությունը կատարվում է ըստ դպրոցի տնօրինության կամ ուսուցչի հայեցողության: Հաճախ ուսուցիչների կողմից դասն ադոթքով սկսելը համարվում է դասընթացի բաղկացուցիչ մաս, և ուսուցիչներից շատերը պատկերացում չունեն կրթության աշխարհիկ սկզբունքների պահպանության մասին: ՔԴԿ-ն կամ տեղի ՀԱՄԵ-ի հոգևորականները խթանում են նման երևույթները, սակայն համակարգված քաղաքականությունն այս հարցում բացակայում է:

ՔԴԿ-ի տնօրեն հայր Վարդանին մենք տեղեկացրինք, որ Վանաձորում ուսուցիչներն ադոթքներով են դասերն սկսում: Ի պատասխան՝ տնօրենը նշեց, որ շատ դեպքերում ուսուցիչներն իրենց նախաձեռնությամբ են կրոնական ծիսակատարություններ կատարում. «Ինձ շատ ուսուցիչներ ասում են, որ իրենք մինչև «Հայր մեր»-ը չասեն և Ավետարանից հատված չկարդան, դասը չեն սկսում: Ես նրանց ասում եմ, որ նրանք նախ դրա իրավունքը չունեն: Երկրորդը, ես գիտեմ, որ նրանցից շատերը նման բան չեն անում. իմ ներկայացուցիչը գնացել և երեխաներին խոսեցրել է ու պարզել է, որ նման բան չկա: Հիմնականում անհնար է, որ նման բան լինի, որովհետև ես այդ տարածաշրջանները շատ լավ գիտեմ: Ուրիշ տարածաշրջան լինել, գուցե համաձայնելի: Օրինակ, Էջմիածնի տարածաշրջանում կարող է, որովհետև շատ եկեղեցիներ կան և ավելի կապված են: Ծնողները երբեմն իրենք են խնդրում ուսուցիչներին դասից առաջ «Հայր մեր»-ն ասել: Սեպտեմբերի 1-ին տնօրենները գրավոր մեզ խնդրում են, որ գնանք,

օրհնությամբ սկսենք, և մենք բոլոր սարկավագներին ուղարկում ենք այդ դպրոցներ: Բայց ես ուզում եմ նաև ասել, որ այդ ինֆորմացիան հարյուր տոկոսանոց չէ. կան նման երևույթներ, բայց մենք դա քաջալերելի չենք համարում, իսկ նման դեպքերի մասին տեղեկանալուց միանշանակ նկատողություն եմ տալիս: Եղվարդում ուսուցիչներից մեկը ելավ և ասաց, որ ինքը դասերը սկսում է «Հայր մեր»-ով ու դասարանում ունի երկու Եհովայի վկա աշակերտ, որոնք որ «Հայր մեր» չեն ասում: Ես նրան ասացի, որ նախ՝ նա իրավունք չունի «Հայր մեր» ասելու: Եթե դպրոցում կստեղծվի այնպիսի մթնոլորտ, որ երեխաները զան ու նրան խնդրեն, որ «Հայր մեր» ասի, դա ուրիշ բան: Բայց նա իրավունք չունի դա որևէ մեկին պարտադրել, որովհետև սա հանրակրթական առարկա է: Մեր առաքելությունը քրիստոնեական դաստիարակությունն է: Քարոզչությունը կսկսվի այն ժամանակ, երբ երեխան կդառնա հասուն տարիքի և իր ընտրությունը կկատարի: Եթե կգա եկեղեցու երիտասարդաց համայնք, կքարոզենք իրեն: Բուհերի երիտասարդների հետ հանդիպելու տարբեր հրավերներ եմ ունենում և երեկոները գնում և քարոզում եմ: Բայց դպրոցում մենք քրիստոնեական դաստիարակություն և կրթություն ենք անում»⁹¹:

Շիրակի մարզի կրթության պատասխանատուներից մեկն այս խնդրով ընդհանրապես հետաքրքրված չէ. «Կարծեմ որոշ դպրոցներում աղոթում են: Մենք այդպես չենք հետաքրքրվել դրանով»⁹²: «Կային դեպքեր, երբ առաջին կիսամյակում այդ առարկային տալիս էին մի ժամ, երկրորդին՝ կես ժամ: Ես հիշում եմ դեպք, երբ առաջնորդն այնքան մանրակրկիտ է եղել, որ ինքը նաև հետաքրքրվել է՝ արդյո՞ք ճիշտ է բաշխվում այդ ժամաքանակը: Այսինքն՝ իր այցելությունները ոչ թե ձևական բնույթ են կրում, այլ՝ բովանդակային: Ես չեմ կարող ասել՝ արդյո՞ք որևէ մեկը դաս վարել է, բայց եկեղեցական տոների կապակցությամբ հոգևոր հայրերը լինում են դպրոց-

⁹¹ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

⁹² Ջեմմա Ավետիսյան, Շիրակի մարզպետարանի կրթության վարչության գլխավոր մասնագետ:

ներում, բայց թե դաս են վարում, թե միջոցառում անում, թե զրույց անցկացնում՝ դա տարբեր դպրոցներում տարբեր ձևով է լինում»⁹³:

Երևանի թիվ 119 դպրոցում որպես ուսուցիչ է աշխատում ՀԱՄԵ-ի հոգևորականը. «Դասաժամն սկսվում է «Հայր մեր»-ով: Ես գտնում եմ, որ այսօր յուրաքանչյուր դպրոցում պետք է հիմնարար կերպով դասավանդվի այս առարկան, որովհետև երեխան անհագ կարիք ունի այս առարկայի: Ոչ թե որպես պատմության առարկա, այլ իբրև հոգևոր դաս, որ երեխան ընկալի դա ինչ է: Որովհետև հիմա երբ ես իբրև հոգևորական մտնում եմ դասարան և աղոթք եմ ասում, իրենց ամբողջ օրը փոխվում է: Իրենք դրա կարիքն ունեն: Ճիշտ կլինի, որ մնացյալ դպրոցներում էլ հոգևորականներ դասավանդեն»⁹⁴:

Միսիանի դպրոցի ուսուցիչներից մեկն այսպես պատասխանեց դասերի ժամանակ աղոթելու մասին մեր հարցին. «Անպայման»⁹⁵:

Ներկայացնում ենք տարբեր դպրոցների ուսուցիչների և ծնողների պատասխանները:

-Մի 4 տարի առաջ բոլոր դասերից առաջ աղոթում էին, սակայն Եղեգնաձորում վերապատրաստման ժամանակ մեզ ասացին, որ դա այնքան էլ պարտադիր չէ, և պետք է Աստծո անունը ժամերին այդքան չկրկնել⁹⁶:

-Աղոթում են: Իմ երեխան այն աղոթքները չի արտասանում, ինչ այնտեղ գրված է, այլ իր մտքում աղոթում է իր աստծուն: Դա հաճախակի խնդիրներ է առաջացնում: Եղել են ուսուցիչներ, որ մեծ նշանակություն չեն տվել դրան, կան, որ ստիպում են միասին աղոթել: Նաև խաչակնքում են, բայց իմ երեխաներն իրենց ասելով

⁹³ Ջեմմա Ավետիսյան, Շիրակի մարզպետարանի կրթության վարչության գլխավոր մասնագետ:

⁹⁴ Նուբարաշեն համայնքի հոգևոր հովիվ տեր Նիկողոս քահանա Հովհաննիսյան, Երևանի թիվ 119 ավագ դպրոցի «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչ:

⁹⁵ Միսիանի թիվ 5 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Աիդա Առաքելյան:

⁹⁶ Գորիսի թիվ 1 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Ֆլորա Խաչատրյան:

չեն խաչակնքում: Նրանց հաճախակի հորդորում են անել այնպես, ինչպես բոլորը⁹⁷:

-Կրտսեր դպրոցն ավարտողը պետք է իմանա զինանշանը, պետական օրհներգը և, ինչու չէ, նաև «Հայր մերը»-ը⁹⁸:

- Աղջիկս աղոթում է առանց խաչակնքելու⁹⁹:

-Ուսուցիչն առաջարկել է «Հայր մեր» արտասանել, բայց չի ստիպել: Աշակերտի բացատրելուց հետո խնդիրներ չեն եղել¹⁰⁰:

-Յուրաքանչյուր դասաժամ մենք սկսում ենք աղոթքով: Ես անգամ նկատում եմ՝ ով է աղոթում, ով՝ ոչ¹⁰¹:

-Դասերի սկզբում և վերջում՝ պարտադիր աղոթում են¹⁰²:

-Պետությունը կարող է իր չեզոքությունը պահպանել այնպիսի կրթական ծրագրի մշակմամբ, որն անկողմնակալ է ու հավասարակշռված: Այն դեպքերում, երբ պետությունը որևէ կրոնի կամ հավատքի մասնավոր ուսուցում է ապահովում, հրաժարման իրավունք է տալիս հիմնավորված առարկության դեպքում: Եվ այս իրավունքը ոչ միայն տեսական հնարավորություն պետք է լինի, այլև պրակտիկայում իրագործելի: Ավելին, չեզոքության պահանջը կարող է փոխհատուցվել, եթե աշակերտները ենթարկվում են որևէ խտրականության, անարգանքի, երբ փորձում են իրականացնել նման դասերից կամ այդ դասերի որևէ մասից ազատվելու իրենց իրավունքը¹⁰³:

Ինչպես արդեն նշվեց վերը, միջազգային սկզբունքների համաձայն՝ կրոնների ու հավատքների մասին ուսուցումը թույլատրելի է և նույնիսկ պարտադիր է, եթե դա կատարվում է «չեզոք և օբյեկտիվ եղանակով», եթե դա չի արվում կոնկրետ կրոնի դոկտրինացման

⁹⁷ Կապանի թիվ 7 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

⁹⁸ Արմեն Մարաբյան, Վանաձորի թիվ 18 դպրոցի տնօրեն:

⁹⁹ Պեպելա Վարդանյան, Վանաձորի թիվ 24 դպրոցի աշակերտի ծնող, ավետարանական համայնքի անդամ:

¹⁰⁰ Ելենա Հովհաննիսյան, Գյումրու թիվ 41 դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

¹⁰¹ Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Գայանե Նարինյան:

¹⁰² Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի տնօրեն Արմինե Շեգունց:

¹⁰³ Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ:

եղանակով, և երբ տրամադրվում են այլընտրանքային մեխանիզմներ այլ հավատքի կամ կրոնի հետևորդ աշակերտների համար, որպեսզի չխախտվեն նրանց և նրանց ծնողների իրավունքները: Ինչպես հաճախ է նշվում, կրոնի ուսուցման ցանկացած պարտադիր համակարգ հակասում է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված կրթության իրավունքին¹⁰⁴:

Ինչ վերաբերում է դասերի ընթացքում ծիսակատարությունների, մասնավորապես աղոթքի կատարմանը, դա ինքնին խախտում է «Կրթության մասին» օրենքում ամրագրված հիմնարար մոտեցումը, ըստ որի՝ կրթությունը ՀՀ-ում աշխարհիկ բնույթի է¹⁰⁵: Կրոնական գործունեությունը և քարոզչությունը հանրակրթական հաստատություններում արգելված են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի¹⁰⁶: ՀՀ որևէ իրավական ակտով դեռ նման բացառություն կրթական հաստատությունների համար չի սահմանված: Քանի որ աղոթքը կրոնի կամ հավատքի դրսևորման, այլ կերպ քարոզչության եղանակ է, դրանով խախտվում է նաև աշխարհիկ հասարակությունում կրոնական կրթության նպատակը:

¹⁰⁴ Վերը նշվածի լույսի ներքո անհասկանալի է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Հասանն ու Էյլեն Ջենգինն ընդդեմ Թուրքիայի գործով* վճռում արտահայտված իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ համեմատական իրավունքի շրջանակում կատարված հետազոտության արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կրոնական կրթությունը ընդհանուր առմամբ թույլատրվում է դպրոցական համակարգում, սակայն աշակերտները կարող են հաճախել այդ դասընթացներին միայն այն դեպքում, երբ համապատասխան դիմում են ներկայացնում (Գանգատ թիվ 1448/04, 09/10/2007թ. վճիռ, ուժի մեջ է մտել 09/01/2008թ., § 33), մինչդեռ հայտնի է, որ ՀՀ-ում գործում է այս առարկայի հաճախելիության պարտադիր համակարգը:

¹⁰⁵ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ:

¹⁰⁶ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մաս, համաձայն որի՝ կրոնական գործունեությունն ու քարոզը ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Ի դեպ, նույն դրույթն ամրագրված է նաև ՀՀ կառավարության հաստատած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար նախատեսված օրինակելի կանոնադրության նախագծում (ՀՀ կառավարության 25/07/2002թ. թիվ 1392-Ն որոշման թիվ 3 Հավելված):

ԵՄԽՎ թիվ 1720 (2005) Հանձնարարականի¹⁰⁷ համաձայն, ԵՄ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կրոնական ուսուցումը հանրակրթական դպրոցներում իրականացվի այնպես, որ կրոնի ուսուցումը չվերածվի պաշտամունքի նույնիսկ այն պետություններում, որտեղ տվյալ կրոնն ընդունված է որպես պետական կրոն: Կրոնի ուսուցումը, ըստ նույն Հանձնարարականի, պետք է տարվի ոչ թե աշակերտի մեջ հոգևոր հավատք սերմանելու, այլ նրան սովորեցնելու, թե ինչու է կրոնը հանդիսանում միլիոնավոր մարդկանց հավատքի աղբյուր¹⁰⁸: Ուսումնական հաստատությունում կրոնական պաշտամունքի ցանկացած դրսևորում, դա լինի դասասենյակում խաչի տեղադրման,¹⁰⁹ թե կրոնական գլխաշոր կամ հագուստներ կրելու միջոցով,¹¹⁰ հանդիսանում են կրոնը կամ համոզմունքը հրապարակավ արտահայտելու միջոց: Հայաստանի Հանրապետության դպրոցներից շատերի դասասենյակներում կամ միջանցքներում հաճախ կարելի է հանդիպել կրոնական խորհրդանշանների, իսկ առավել հաճախ՝ քրիստոնեական խաչի: Բազմաթիվ դպրոցների բակերում կարելի է հանդիպել խաչքարերի, իսկ որոշ գյուղական դպրոցներում ուսուցիչը աշակերտներին դասաժամերի հաշվին կարող է տանել մասնակցելու տեղական նշանակության կրոնական ուխտի:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով ծնողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքները հարգելու պետության պարտավորությունը չի սահմանափակվում միայն ուսուցման բովանդակային մասով և դրա մեթոդիկայով, այլ ներառում է նաև պետության բոլոր ածանցյալ գործառույթները, որոնք վերջինս պարտավոր է իրականացնել վերը նշված կոնվենցիոն իրավունքներն ապահովելու նպատակով: Այդ գործառույթներից է նաև դպրոցի համապատասխան կրթական միջավայրի ապահովումը, եթե ներպետական օրենքն այդ գործառույթի իրա-

¹⁰⁷ ԵՄԽՎ թիվ 1720 (2005) Հանձնարարականը կրոնի և կրթության մասին, ընդունված 04/10/2005թ. ԵՄԽՎ 27-րդ նիստում:

¹⁰⁸ Հանձնարարականի 14.4-րդ կետ:

¹⁰⁹ *Լատվիան ընդդեմ Բոսալիայի (ՄՊ)*, թիվ 30814/06, 18/03/2011:

¹¹⁰ Դոգրուն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 27058/05, 04/12/2008:

կանացման պատասխանատվությունը հանձնարարում է հանրային մարմիններին¹¹¹: Այս առումով, կրոնական պաշտամունքի ցանկացած առարկա ի ցույց դնելը կամ կրոնի ու հավատքի հրապարակավ արտահայտումը (տվյալ դեպքում՝ քարոզի միջոցով) դպրոցական միջավայրում դժվար է համատեղել մոլեռանդության, այլոց նկատմամբ հարգանքի, բոլորի հավասարության և խտրականության արգելման այն սկզբունքների հետ, որոնք ժողովրդավարական հասարակարգում բոլոր դասատուները պարտավոր են մատուցել իրենց աշակերտներին¹¹²:

¹¹¹ *Լատուցին ընդդեմ Բտալիայի (ՄՊ)*, § 63:

¹¹² *Ղահլարն ընդդեմ Շվեյցարիայի (որոշ.)*, թիվ 42393/98, 15/02/2001, էջ 13:

6. Կրոնական քարոզներ դասերի ժամանակ

Ըստ Թուրքոյի ուղեցույցի՝ «Կրոնների և հավատքների ուսուցումը չպետք է կրոնական ուղղվածություն ունենա: Այն պետք է ծառայի ուսանողներին կրոնների և հավատքների մասին տեղեկություններ տալուն, սակայն չպետք է պարտադրի նրանց ընդունել դրանցից որևէ մեկը: Սկզբունքները խրախուսում են կրոնների կամ հավատքների ուսուցումը, սակայն ոչ դրանց կիրառումը գործնականում: Այն ուսանողներին հնարավորություն է տալիս ունենալ կրոնական և ոչ կրոնական բազմազան հայացքներ, սակայն չի պարտադրում որևէ տեսակետ»:

ՀԱՄԵ-ի և ՀՀ կառավարության սերտաճումը վերջին տարիներին մի քանի փուլով է տեղի ունեցել: 2005թ. ՀՀ Սահմանադրության մեջ տեղի է ունեցել փոփոխություն, որով ՀԱՄԵ-ն ձեռք է բերել «բացառիկ» դերակատարություն. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Փաստորեն, այդ փոփոխության հիման վրա 2007թ. ԱԺ-ն ընդունում է «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, որի հիման վրա եկեղեցին մուտք է գործում դպրոց: Եկեղեցու և կառավարության սերտաճումն էլ ավելի ուժեղացավ Տիգրան Սարգսյանի վարչապետության շրջանում¹¹³, իսկ եկեղեցու մուտքը դպրոց հատկապես համակարգված դարձավ կրթության նախարար Արմեն Աշոտյանի¹¹⁴ օրոք:

Այս ոլորտում վարած քաղաքականությունը լավագույն ձևով ինքը՝ վարչապետ Տ.Սարգսյանն է ձևակերպել. «Եկեղեցին տարանջատված է պետությունից» միտքը հնամաշ է: Եթե եկեղեցին

¹¹³ Վարչապետ է 2008թ. մարտից մինչև այս հոդվածը գրելու պահը՝ 2012թ. հունիս:

¹¹⁴ 2009թ. մայիսից ՀՀ կրթության և գիտության նախարար:

մենք ենք, ապա ես ինչպե՞ս և ո՞ր պահին տարանջատեմ իմ մեջ քրիստոնյա մարդուն»¹¹⁵:

Այս տեղեկությունները կարևոր էին հասկանալու համար, թե ինչի համար են «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ժամանակ կատարվում քարոզներ, որոնց մեխը ոչ այնքան հավատքն է, որքան «ազգի» և «եկեղեցու» նույնականացումը: «Փետրվարի 16-17-ը Ս. Ղևոնդյանց քահանայից տոնի առիթով Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ քահանաների ավանդական հավաքը, որին մասնակցում էին թեմակալ առաջնորդներ, Սայր Աթոռի միաբաններ և շուրջ 300 քահանաներ»: Եկեղեցու մամլո պաշտոնական տեղեկատվության մեջ նշվում է. «Երկօրյա նիստերի արդյունքում քննարկման առարկա դարձան ժամանակակից մարտահրավերները՝ աշխարհիկացման և անձնապաշտության գործընթացները, արարչաստեղծ աշխարհը խեղող զանազան մեղքերն ու մոլությունները, ազգային և կրոնական ինքնությունների սահմանների վերացման տենդենցները, որոնք վտանգում են դարերով թրծված և քրիստոնեական մեր սուրբ հավատով շաղախված ազգային ինքնության անաղարտ նկարագիրը»¹¹⁶:

Նույն մոտեցումն ունի նաև կրթության նախարարը. «Պետականության բացակայության ժամանակ հայ եկեղեցին մշտապես ստանձնել է կրթության կազմակերպման գործն ու արժանապատվորեն կրել այդ բեռը: Այժմ, պետականության վերականգնումից հետո, ավանդույթները շարունակելու, բարոյական նորմերով և Մահմանադրությամբ ամրագրված՝ Հայ առաքելական եկեղեցու բացառիկ առաքելությունը ճանաչելու խնդիր և պարտավորվածություն ունենք: Ես համոզված եմ, որ ինչպես մեր պատմության ողջ ընթացքում, այնպես էլ այսօր մեր եկեղեցին շաղախված է հայ մարդու ինքնության և արժեհամակարգի մեջ: Եկեղեցին մեր կյանքում ունի բացառիկ հոգևոր առաքելություն և ինչպես անց-

¹¹⁵ Տե՛ս «Ազգ» օրաթերթ, #167, 13-09-2008 (<http://azg.am/AM/2008091316>):

¹¹⁶ www.lragir.am, 19/02/2009:

յալում, այնպես էլ ապագայում որևէ մեկն այդ բացառիկությունը չի կարող կասկածի տակ դնել»¹¹⁷:

Ըստ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչների, որոնք մշակված են Կրթության ազգային ինստիտուտի կողմից, և որոնց հիման վրա կազմվել են դասագրքերը, «Առարկայի մշակման հիմքում ընկած է կրթության աշխարհիկ սկզբունքը: Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրությունը ներկայացվող դասընթացի բովանդակության շրջանակներում հանդիսանում է աշխարհիկ կրթություն՝ կոնկրետ էթնոմշակութային, էթնոդավանական և քաղաքակրթական ուղղվածության կրոնագիտական կրթության տեսակ»:

«Էթնոդավանական» բառի տակ, ըստ երևույթին, պետք է հասկանալ ազգի և կրոնի նույնականացման քաղաքականությունը, որն արտացոլվում է նաև դասագրքերի բովանդակությունում: Այս մտեցումը միարժեքորեն քարոզվում է հենց դասագրքերում, հատկապես 10-րդ դասարանի. «Այդ ընթացքում, ինչպես ցույց է տալիս մեր ժողովրդի պատմությունը, ձևավորվեցին և վերջնականապես կայացան ազգային քրիստոնեական հիմնարար արժեքները, որոնք կազմում են հայ մարդու աշխարհայացքի առանցքը»¹¹⁸, կամ «Հայոց եկեղեցու դավանանքը դարձավ հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության, ինքնահաստատման հզոր կռվանը»¹¹⁹, կամ «Հայոց եկեղեցին ու դավանանքը հանդիսացել են հայոց պետականության կրոնագաղափարական հիմքը»¹²⁰, կամ «Այսպիսով, ազգային եկեղեցու ամրապնդումը կենսական նշանակություն ունի ազգի էթնիկական նույնականության պահպանման և զարգացման համար»¹²¹ և այլն:

6-րդ դասարանի դասագրքի ներածության մեջ գրված է. «Հայոց եկեղեցին ստեղծել, պահպանել ու մեզ է հասցրել մշակութային

¹¹⁷ «Կաթողիկոսն ու նախարարը պարզևստրել են «Լավագույն ուսուցիչ» մրցույթի 2011 թվականի հաղթողներին», www.hetq.am 9.11.2011:

¹¹⁸ «Հայոց եկեղեցու պատմություն», 10-րդ դասարան, էջ 11, Երևան, 2005:

¹¹⁹ «Հայոց եկեղեցու պատմություն», 10-րդ դասարան, էջ 20, Երևան, 2005:

¹²⁰ «Հայոց եկեղեցու պատմություն», 10-րդ դասարան, էջ 37, Երևան, 2005:

¹²¹ «Հայոց եկեղեցու պատմություն», 10-րդ դասարան, էջ 38, Երևան, 2005:

բազմաթիվ արժեքներ, ազգային սովորույթներ, ծեսեր և տոներ: Անժխտելի է նրա դերը հայ ժողովրդի ազգապահպանման գործում: Եկեղեցու շնորհիվ քրիստոնեությունը դարձել է հայ մարդու ազգային նկարագրի անբաժանելի մասը»:

Դասագրքում հայրենասիրության ուշագրավ սահմանումներ են տրված. «Այդ հատկանիշների մեջ առաջին հերթին կարևորվում է հանուն հայրենիքի, ազգի և հավատի ինքնազոհաբերման պատրաստակամությունը, այն է՝ հայրենասիրությունը, ազատատենչությունը, քաջությունը և մարտունակությունը»¹²²: Դասագրքում սահմանվում են նաև պետության «պարտականությունները». «Աջակից ունենալով Հայոց եկեղեցուն, պետությունը պետք է ոչ միայն պահպանի քրիստոնեական-ազգային հիմնարար արժեքների անխաթարությունը, այլև կազմակերպի դրանք սերունդներին փոխանցելու (ժառանգականության) բնականոն ընթացքը»¹²³:

ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի «Տեղեկագիր»-ում այսպես է ներկայացվում առարկայի խնդիրներից մեկը. «Առարկայի ուսումնադաստիարակչական կարևորագույն խնդիրներից է մայր եկեղեցու և ազգային-եկեղեցական ավանդույթների, արարողությունների հանդեպ սիրո և հարգանքի ձևավորումը»¹²⁴:

Բոլոր դասագրքերում «ազգ» բառն օգտագործվում է էթնիկական, այլ ոչ թե քաղաքացիական իմաստներով, և հաճախ այն ներկայացվում է «ազգային-հոգևոր» և «քրիստոնեական-ազգային» բառակապակցությունների տեսքով: Նման ձևակերպումներ կարելի է գտնել 10-րդ դասարանի դասագրքի յուրաքանչյուր էջում, սակայն խղճի, կրոնական ազատության մասին ոչ մի տող չէք գտնի:

Սակայն կրթությունը Հայաստանում աշխարհիկ բնույթի է, քանի որ Հայաստանն աշխարհիկ երկիր է: Ինչպես արդեն նշվել է վերը, ԿԳՆ-ի մշակած պետական հանրակրթական դպրոցի աշակերտի ծնողի և հաստատության միջև կնքվող անվճար կրթական ծառայությունների մատուցման մասին տիպային պայմանագրի

¹²² «Հայոց եկեղեցու պատմություն», 10-րդ դասարան, էջ 50, Երևան, 2005:

¹²³ «Հայոց եկեղեցու պատմություն», 10-րդ դասարան, էջ 62, Երևան, 2005:

¹²⁴ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի «Տեղեկագիր», 5/2011:

հողված 26-ում նշվում է. «Դպրոցում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն: Կրոնական գործունեություն կամ քարոզչություն դպրոցում արգելվում է, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Նույնը նշված է նաև կառավարության հաստատած կրթական հաստատությունների օրինակելի կանոնադրության մեջ¹²⁵: Մակայն մենք չենք կարողացել գտնել մի օրենք, որտեղ սահմանված լինեն այն դեպքերը, երբ հանրակրթական դպրոցներում կարելի է կրոնական քարոզներ անել: Հակված ենք կարծելու, որ դրվում են հանրակրթական դպրոցներում ՀԱՄԵ-ի քարոզչությունը ապագա օրենսդրական փոփոխությունների միջոցով օրինականացնելու հիմքերը:

Այդուհանդերձ, մեր անցկացրած մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ կրթության աշխարհիկ լինելու մասին օրենքի պահանջը, ըստ էության, չի գործում:

- Արդեն 3 տարի է՝ մենք տարին մեկ անգամ մի միջոցառում ենք կազմակերպում մանկապարտեզում՝ ըստ մանկապարտեզների ցանկության: Լավագույն դեպքում էլ իրենց հրավերին ընդառաջ՝ երբեմն մեր թեմի հոգևորականներն այցելում են և մեր կողմից մի փոքրիկ նվեր են տանում: Դպրոցի պարագայում թեև եկեղեցու պատմություն առարկան ներդրվել է դպրոցում 2002թ. համաձայնագրի հիման վրա, 2005թ. այսօր լուրջ խնդիրներ ունի: Ինքը դեռ մեր երագած, կայացած առարկան չէ¹²⁶:

Եկեղեցու քարոզչությունը, ՔԴԿ-ի տնօրեն հայր Վարդանի կարծիքով, հիմնականում ուսուցիչների նախաձեռնությունն է. «Եթե նման բան կա, թող փաստեն: Դասագրքի մեջ վարդապետություն չկա: Միայն հավելյալ, լրացուցիչ նյութերից մեկի մեջ Հավատամքն է դրված, որ տիեզերական եկեղեցու՝ 325թ. հռչակված Հավատամքն է: Դավանական որևէ հարց առկա չէ: Ես ի պաշտոնե շատ հաճախ հանդիպում եմ նաև եկեղեցու պատմության ուսուցիչների հետ, սեմինարներ ենք անում նրանց հետ, և հիմնական բանը, և 3 տարի

¹²⁵ Տե՛ս տողատակի նշում 16:

¹²⁶ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

ես շեշտակիորեն ասել եմ՝ որևէ մի ուսուցիչ որևէ մի դպրոցում ոչ մի բարոյական և մարդկային իրավունք չունի որևէ երեխայի կրոնական հայացքներին ուղղություն տալ: Անգամ մենք փնտրում ենք նման կրոնական հարանվանությունների ուսուցիչներ, որոնք շատ են դպրոցներում, և ուսումնասիրում ենք՝ այս ուսուցիչն ի՞նչ կրոնական ազդեցություն է թողնում երեխայի վրա: Պետք է ուրախությամբ նշեմ, որ երբեք ես չեմ լսել որևէ ուսուցիչ կամ տնօրենից մի բողոք, որ հայ եկեղեցու պատմության ուսուցիչը նեղացնում է Եհովայի վկա կամ հոգեգալստական երեխային: Ես միշտ ասել եմ, որ նրանք իրավունք չունեն կրոնական որևէ քարոզչություն անել: Եթե որոշ ուսուցիչներ ծայրահեղական զգացումներից էլնելով անում են այդ, մենք հորդորում ենք, որ չանեն, որովհետև սա զուտ հանրակրթական դպրոցի հերթական մի առարկա է, որը, շեշտում եմ, լուսավորության համար է»¹²⁷:

-Մեր Շիրակի թեմի առաջնորդարանի կողմից բավականին մեծ ուշադրություն է դարձվում այս առարկայի դասավանդմանը: Առաջնորդն անձամբ ամեն դպրոցում գոնե մեկ անգամ լինում է: Կրոնի բոլոր ուսուցիչները վերապատրաստվել են Մայր Աթոռի կողմից: Մեր առաջնորդարանում այդ բոլոր ուսուցիչներին անձնապես ծանոթ են, հաճախ այնտեղ հավաքներ են լինում, և մեկ-երկու անգամ ինքս էլ եմ մասնակցել¹²⁸:

-Այո, մենք փորձում ենք 45 րոպեի մեջ տեղավորվելով՝ երեխաներին եկեղեցի տանել: Եթե չենք տեղավորվում, տնօրինությանը տեղյակ ենք պահում ամբողջ օրվա կտրվածքով: Ամիսը 3-4 անգամ պարտադիր ունենում ենք հոգևորականի հետ զրույցներ. երեխաներին դահլիճում հավաքում ենք, իմանում ենք նրանց հուզող հարցերը¹²⁹:

¹²⁷ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

¹²⁸ Ջեմա Ավետիսյան, Շիրակի մարզպետարանի կրթության վարչության գլխավոր մասնագետ:

¹²⁹ Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Գայանե Նարինյան:

-Մեր Գորիսի քահանան՝ տեր Ընծան, հաճախակի այցելում է: Նա հարմար է գտնում դասեր վարել բարձր դասարաններում, որովհետև այնտեղ հետաքրքրասիրությունն ավելի մեծ է¹³⁰:

-Իմ հովվական ծառայության մեջ համարվում է, որ նաև դպրոցն է մի փոքրիկ առանձին համայնք , և ուշադրությունս դպրոցի նկատմամբ կա: Տարվա սկզբում եմ եղել դպրոցում և ժամանակի սղության պատճառով նաև տարվա վերջում եղա և մտա դպրոցները պարտադիր ծրագրով: Քանի որ տարվա վերջն ամփոփող է, պարտադիր բոլոր դպրոցներում եղա՝ տարբեր դասախոսություններով, և ամբողջ տարվա ամփոփումը եղավ¹³¹:

-Ոչ, չեն հաճախում: Նախ հոգևորականները չեն էլ կարող իրենք, կարծում եմ, չունեն այնպիսի հնարավորություն, որ Լոռու մարզի 163 դպրոցներն էլ հաճախեն: Դա լինում է որոշ միջոցառումների ժամանակ: Օրինակ, մենք եթե որևէ մարզային միջոցառում ենք կազմակերպում, պարտադիր կերպով հրավիրում ենք թեմի առաջնորդին: Սեպտեմբերի 1-ին, պարզ է՝ նա 163 դպրոց չի կարող հաճախել: Օրինակ, այս տարի մենք միասին եղել ենք 3-րդ, 4-րդ և 5-րդ դպրոցներում: Տեղերում եկեղեցիների առաջնորդները նույնպես գնում են դպրոց: Բայց դա պետք է ծրագրված լինի և որոշակի նպատակ ունենա¹³²:

-Անպայման: Համարյա ամիսը մեկ անգամ այստեղ լինում են: Դահլիճում էլ է հանդիպում լինում, դասարան էլ են մտնում, դաս էլ են պարապում: Նույնիսկ մենք ենք գնում՝ արտագնա դասեր են լինում: Մեզ մոտ նույնիսկ կիրակնօրյա դասընթացներ էլ են կազմակերպում¹³³:

-Դասերին հոգևորականները երևի մի 4 անգամ եկել են, բայց ոչ վերջին երկու տարում: Եկել են իրենց նախաձեռնությամբ¹³⁴:

¹³⁰ Գորիսի թիվ 1 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Ֆլորա Խաչատրյան:

¹³¹ Տեր Լևոն քահանա Հովհաննիսյան, Լմբատավանքի վանահայր, Արթիկ քաղաքի հոգևոր հովիվ:

¹³² Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

¹³³ Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրեն Էդուարդ Բեգլարյան:

¹³⁴ Մխիթանի թիվ 2 միջն. դպրոցի ուսմասվար Ֆելիքս Դովլաթյան:

-Մենք կապ ունենք մեր եկեղեցու հետ: Մենք ենք հաճախում դասարաններով տոների ժամանակ: Կապը մեծ չէ, բայց ունենք: Դրանք էքսկուրսիաներ են: Ես ունեմ շատ լավ բարեկամ, որ եկեղեցում է աշխատում, և նրան հրավիրում են դասերին¹³⁵:

-Հրավիրում ենք, համատեղ միջոցառումներ ունենք: Մենք ունենք հայրենագիտության խմբակ, որ զբաղվում է հիմնականում հոգևոր դաստիարակությամբ: Մենք ենք հաճախ գնում եկեղեցի: Դասերին էլ են հաճախում: Անցած տարի և նախանցած տարի մենք ունեինք աստվածաբանության ֆակուլտետից ուսանող, որն այստեղ պրակտիկա է անցկացրել¹³⁶:

-Լսել եմ, որ հաճախում են դպրոց և գրույցներ են ունենում, բայց դաս վարելու մասին որևէ բան չեմ կարող ասել¹³⁷:

Գյումրու թիվ 11 և թիվ 41 դպրոցների տնօրենները հաստատել են, որ հոգևորականներն այցելում են դպրոց:

-Հոգևորականները դասերին չեն հաճախում, ես ուզում էի դա նաև տնօրենի հետ զրույցում նշել: Ամեն չորեքշաբթի մի կիսամյակի ընթացքում հատկապես բարձր դասարաններում հոգևորականների ենք հրավիրում: Դասերի ժամանակ տնօրենից թույլտվություն ենք վերցնում ու մի քանի աշակերտի տանում ենք դահլիճ, որտեղ հոգևորականը հատուկ հարցազրույց է կազմակերպում: Հետո աշակերտներն իրենց հարցերը տալիս են քահանային¹³⁸:

-Մեկ-երկու անգամ անցած տարի եկել են: Հենց Աջապահյանն¹³⁹ է եկել: Նա նստել է դասերին ու շատ գոհ գնացել է¹⁴⁰:

-Հոգևորականները մեզնից միջոցառումների հրավերներ են ստանում, հետո իրենք երկու-երեք անգամ եկան, ծնողների հետ հանդիպեցին և սեմինարներ անցկացրեցին¹⁴¹:

¹³⁵ Կապանի թիվ 3 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Մարինա Ղազարյան:

¹³⁶ Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի տնօրեն Կարինե Հովսեփյան:

¹³⁷ Կապանի թիվ 7 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

¹³⁸ Մարինե Ղազարյան, Գյումրու թիվ 41 դպրոցի ուսուցչուհի:

¹³⁹ ՀԱՄԵ Շիրակի թեմի առաջնորդ:

¹⁴⁰ Սվետլանա Մելքոնյան, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցի փոխտնօրեն:

¹⁴¹ Անահիտ Մալխասյան, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցի ուսուցչուհի:

-Առարկայի դասերին տարին գոնե մեկ անգամ գալիս են: Տարին երկու անգամ տնօրենը կազմակերպում է տարրական դասարանների ծնողների ժողով՝ հոգևորականների մասնակցությամբ¹⁴²:

-Ծրագիր ունենք, որ իրենք տարեկան 1-2 անգամ գալիս են, և, ենթադրենք, մի դաս վարում են: Դա լինում է դասերից հետո՝ ոչ դասերի ժամանակ: Շատ ժամանակ երեխաների մոտ հարցեր են լինում, քահանային հարցերը տալիս են, պատասխանում է¹⁴³:

-Օրինակ, տեր Վահանը, ինչքան հասկանում եմ՝ ինքն է պատասխանատու այս առարկայի համար, մանավանդ նախնական շրջանում պարբերաբար այցելել է դպրոց, և՛ դասալսումներ է ունեցել, և՛ միջոցառումների է մասնակցել: Եղել է հոգևորական, որ բարոյականությանը /ուսումնական ծրագրից դուրս/ կամ աղանդների դեմ պայքարին նվիրված դասեր է անցկացրել: Մակայն ոչ մի կրոն չի քարոզվում. անցնում ենք զուտ մեր եկեղեցու պատմությունը: Մարդու իրավունքները պահպանվում են¹⁴⁴:

-Երբ աշակերտներն ունենում են հարցեր, մեր հրավերով հոգևորականներ գալիս են¹⁴⁵:

-Օրինակի համար ես եղա 4-րդ դասարանում, երեխաները անցնում էին Քրիստոսի հարությունը: Հարության թեման խաչելությունն է, և երեխաները ուղղակի, որպես դաս, պատասխանում են, բայց ասում եմ. դու հավատո՞ւմ ես Քրիստոսի խաչելությանը, ինքը պատկերացում չի կազմում: Հենց այդ Լմբատ թաղամասի 8-րդ դպրոցում որտեղ աղանդավորներ են: Աղանդավորների, հարանվանությունների մեջ էլ կա Քրիստոսի հարության գաղափարը, բայց իրենք էլ դեռ այնպես չեն տալիս երեխային, որ երեխան պատկերացում ունենա: Երեխան մոտենում է առարկային, ջրի նման սովորում է, անգիր ասում է, բայց չի պատկերացնում, և խաչակնքելու ձև չի սովորեցնում գիրքը, երեխան չգիտի խաչակնքել, «Հայր մեր» աղոթքը աղոթելու ձևը չգիտի: Նման բաներ ես ավելի շատ եմ

¹⁴² Գալինա Խաչատրյան, Գյումրու թիվ 37 դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

¹⁴³ Դավիթ Մելքոնյան, Վանաձորի թիվ 22 դպրոցի տնօրեն:

¹⁴⁴ Գայանե Ղարազյոզյան, Վանաձորի թիվ 2 դպրոցի փոխտնօրեն:

¹⁴⁵ Ռուզաննա Ավայան, Վանաձորի թիվ 2 դպրոցի ուսուցչուհի:

կարևորում և, ասենք, տեսնելով, որ դա չկա առարկայի մեջ, ես հավելյալ իրենցից ժամանակ եմ խնդրում, տնօրեններից¹⁴⁶:

-Ես հաճախ հոգևորականներին հրավիրում եմ դասերին՝ ամսական մեկ անգամ՝ մեկ-երկու դասարան: Դա հիմնականում ոչ թե դաս վարել է, այլ շփում հոգևորականի հետ¹⁴⁷:

-Գալիս են դպրոց, բայց դասեր չեն վարում: Գալիս են մեր կազմակերպած միջոցառումներին՝ մեր հրավերով¹⁴⁸:

-Մեր դպրոցը տարիներ շարունակ համագործակցել է Գորիսի եկեղեցու սպասավորների՝ տեր Շիրակի, տեր Հակոբի հետ, և միասին իրականացնում ենք «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը: Նրանք էին պարապում առարկան: Մինչև հոկտեմբեր էլի հոգևորական էր պարապում, բայց ինչ-ինչ խնդիրներ ունեցան (ավելի շատ՝ քարոզ տարածել նաև մյուս դպրոցներում), և ժամանակի սղության պատճառով չէին տեղավորվում: Մենք ավելի շատ գերակայություն տալիս ենք այդպես կազմակերպել առարկայի դասավանդումը, քանի որ նախ հոգևորականի մուտքը դպրոց շատ ավելի ճիշտ և ընդունելի է եկեղեցու պատմություն դասավանդելու համար: Աշակերտները ձգվում են, նրանք հասկանում են. ես նույնիսկ նկատում էի աշակերտների մոտ կարգապահության կտրուկ փոփոխություն, երբ նրանք տեսնում էին, որ միջանցքով քայլում է հոգևորականը: Սա յուրահատուկ մշակույթ է, որ մտավ դպրոց: Ես իմ ռազմավարական ծրագրում պարտադիր ուզում եմ ունենալ դա միշտ մեր դպրոցի համար, և մենք տեսել ենք դրա արդյունքը: ԿԳՆ-ն ողջունում է, որ այսպես ենք մտածել և որոշել, և դա իրականացվում է զուտ բարեգործական հիմունքներով. վճարովի ոչինչ չի գնում: Եկեղեցին ինքն է վերցրել նախաձեռնությունը. ճիշտն ասած՝ առաջարկությունն իրենցից եկավ, «որ եթե կարելի է, եթե թույլ կտաք, մենք կուզենք մտնել դպրոց»: Եվ մեր վերադաս մարմնի՝ ԿԳՆ-ի հետ խորհրդակցելուց հետո ասացինք, որ իսկապես ճիշտ կլինի, ոչ մի խնդիր չկա, եթե

¹⁴⁶ Տեր Լևոն քահանա Հովհաննիսյան, Լմբատավանքի վանահայր, Արթիկ քաղաքի հոգևոր հովիվ:

¹⁴⁷ Գոհար Մարգարյան, Վանաձորի թիվ 22 դպրոցի ուսուցչուհի:

¹⁴⁸ Մարգարիտա Հովհաննիսյան, Վանաձորի թիվ 20 դպրոցի ուսուցչուհի:

մարդիկ ուզում են նպաստել, օգտակար լինել այս հարցում, և նույնիսկ ողջունելի է դա: Մեխանիզմն այսպիսին էր. առաջարկն իրենց կողմից, ընդունվեց մեր կողմից, հաստատվեց լիազոր մարմնի կողմից: Այս տարին ավարտելուց հետո նոր ուսումնական տարում մտածում ենք նորից դիմել, որովհետև մենք տեսանք արդյունքը: Մենք նաև մտածեցինք, որ կարող ենք հատուկ դասաժամերը, օրինակ, հայոց պատմության ժամանակ քրիստոնեության ընդունման դասը անցկացնի հոգևորականը և մտնի դպրոց¹⁴⁹:

-Չեն հաճախում, բայց ես հաճախակի դասերին երեխաներին տանում եմ եկեղեցի, որտեղ գրուցում են հոգևորականների հետ: Դա նաև դասղեկների նախաձեռնությունն է, որովհետև նրանց պլանների մեջ մտնում է աշակերտի շփումը եկեղեցականի հետ¹⁵⁰:

Երևանի թիվ 119 դպրոցի տնօրինությունը կրթության նախարարության կողմից երաշխավորվող առարկաներից ընտրել է «Կրոնի պատմություն» առարկան, որը հոգևորական է դասավանդում. «Արարատյան թեմի առաջնորդին ենք դիմել, որպեսզի համապատասխան կադրով ապահովի, քանի որ «Կրոնի պատմություն» առարկան չի կարող դասավանդել եկեղեցու պատմության առարկայի ուսուցիչը: Բնչպես գիտեք, երբ ներդրվեց եկեղեցու պատմությունը, Հայաստանում համապատասխան կադրեր չկային, և ամենատարբեր մասնագետներ են վերապատրաստվել՝ պատմության և այլն: Քանի որ այստեղ գուտ կրոն, կրոնի պատմություն դասավանդելու խնդիր կար, բնական է, որ առաքելությունը պիտի ստանձներ մասնագետը, այսինքն՝ հոգևորականը, և Հայ առաքելական եկեղեցու խորհրդով մենք հրավիրել ենք տեր Նիկողոսին, որը հենց առաջին իր մուտքով պայմանավորեց երեխաների ոգևորությունը: Ծնողների արձագանքն ավելի շատ ոչ թե եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման հետ է կապված, այլ կա երեխաների արձագանք, որն արտահայտվեց հոգևորականի՝ դպրոցում հայտնվելու պահից անմիջապես հետո»¹⁵¹:

¹⁴⁹ Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի տնօրեն Արմինե Շեգունց:

¹⁵⁰ Սիսիանի թիվ 5 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Ալիդա Առաքելյան:

¹⁵¹ Երևանի թիվ 119 ավագ դպրոցի տնօրեն Ն. Կարապետյան:

Այն հարցին, թե՛ «11-րդ դպրոցում տնօրենն ինձ ցույց տվեց մի գրաֆիկ, որով տասներորդ դասարանցիների դասդեղակայան ժամերն էին համաձայնեցված ձեր հետ: Նման պրակտիկան միայն 11-րդ դպրոցի հետ է, թե՛ առավել ընդհանուր է», Վանաձորի ՄԲ Գրիգոր Նարեկացի եկեղեցու քահանան պատասխանեց. «Մի քանի ուսուցիչների խնդրանքով ես ընդառաջ եմ գնացել՝ ասելով, որ եթե հանդիպումներ լինի, մեծ սիրով կմասնակցեմ: Դա զուտ դպրոցների նախաձեռնությունն է: Ժամանակ առ ժամանակ եղել են որոշակի քննարկումներ որոշ հարցերին լուծում տալու համար: Օրինակ՝ հատկապես 11-րդ դպրոցում, երբ այն ավագ դպրոց դարձրեցին, իրենք նոր խնդիրների առաջ կանգնեցին՝ երեխաների դաստիարակության, քրիստոնեական մտածողության հարցերում: Տնօրենը, ինձ դիմելով, ասաց, որ ավագ դպրոց դառնալուց հետո ուրիշ տեղերից երեխաներ են եկել, և դպրոցի որակը սկսել է փոխվել. կարող էք գալ հանդիպման: Անցած տարի ես այդպիսի հանդիպումներ ունեցա: Իհարկե, շատ քիչ է դա. մեկական հանդիպում, իսկ դասարանները շատ են, և երեխաները շատ հարցեր ունեն: Երեխաները շատ սուր են մտածում, կտրուկ հարցեր են դնում, և ընդամենը մի հանդիպումը խնդիրը չի լուծում: ... Իրենք հիմնականում առայժմ գիտակցական մասի վրա են փորձում աշխատել: Հոգևորականն իր մասով՝ քրիստոնեական հիմքերի զետեղումով, շատ ավելի աստվածերկյուղ մարդկանց ներկայությունն ապահովելով կյանքում, ստանում է ավելի բարվոք կյանք, ավելի խաղաղ իրավիճակ: Պետք է լինեն արտադպրոցական միջոցառումներ, որովհետև դպրոցի ծրագրերի շրջանակում շատ դժվար է դա իրականացնել: Դա պետք է իրականացվի, օրինակ, դասդեղի ժամերի և այլ միջոցառումների տեսքով, որոնք գոնե պլանավորված են, բայց էլի արտաժամյա են»¹⁵²:

2009-ին մի այլ ուսումնասիրության շրջանակում մենք հարցազրույց էինք անցկացրել Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 9 միջնակարգ դպրոցի տնօրեն Էդիտա Վարդանյանի հետ. «Երբ մենք փորձում ենք մեր հայոց եկեղեցու պատմության դերը,

¹⁵² ՄԲ Գրիգոր Նարեկացի եկեղեցու քահանա տեր Վահան Ագարյան, Վանաձոր:

նշանակությունը, հեղինակությունը մեր ուշադրության կենտրոնում պահել, չգիտես ինչու, դա դիտվում է որպես հետապնդում, որպես մարդու իրավունքների նկատմամբ ոտնձգություն, վիրավորանք արժանապատվության դեմ, և բազմաթիվ նման պիտակներ են կայցվում: Մինչդեռ, մենք միմիայն մի նպատակ ունենք՝ երեխային զերծ պահել այլ թերի, ոչ լիարժեք և միանգամայն վտանգավոր կրոնական հակվածությունից: Մենք ունենք մեկ եկեղեցի՝ դա մեր Առաքելական եկեղեցին է, մենք ունենք մեր աստվածը, մենք քրիստոնյա ժողովուրդ ենք»¹⁵³:

-Երբեմն ուսուցչուհին երեխաներին տանում է եկեղեցի, ծանոթացնում քահանայի հետ¹⁵⁴:

Այն ամենը, ինչ նշվել է վերը միջազգային սկզբունքների համեմատական վերլուծության և դպրոցներում կրոնական ծիսակատարությունների համատեքստում, օրինակ, աղոթքի մասին, հավասարապես վերաբերում է նաև այս բաժնի ներքո շարադրված պնդումներին: Քանի որ, ինչպես նշվել է, պաշտամունքի ցանկացած առարկա ի ցույց դնելը, այդ թվում՝ քարոզը, համարվում է կրոնի, համոզմունքի արտահայտման եղանակ, որը, որպես այդպիսին, պաշտպանվում է մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքով: Այդուհանդերձ, կրոնական կրթության համատեքստում էական նշանակություն է ձեռք բերում նման պաշտամունքի առարկաների, կրոնի և համոզմունքի արտահայտման եղանակների՝ երեխաների վրա ազդեցություն գործելու համար որպես «արտաքին ազդակներ» հանդիսանալու հնարավորությունը, ընդհուպ այդ ազդակների հոգեբանության դրսևորում հանդիսանալը: Այս տեսանկյունից խիստ կարևորություն է ձեռք բերում այն հանգամանքը, որ եթե խոսքը երեխաների՝ դեռ չկազմավորված և նուրբ «տարիքում» գտնվող անհատների մասին է, նրանց անհրաժեշտ է պաշտպանել, և հենց այս տեսանկյունից է, որ պետությունը կրում է պոզիտիվ

¹⁵³ Մտեփան Դանիելյան, Վլադիմիր Վարդանյան, Արթուր Ավթանդիլյան, Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում, ISBN 978-92-9235-846-4, Երևան, 2010:

¹⁵⁴ Քրիստինե Մանոյան, Աճանա գյուղի դպրոցի աշակերտի ծնող, «Աստծո ժողովուրդ» ավետարանական համայնք:

պարտավորություն կրոնի առարկան անկողմնակալ և ներդաշնակ կերպով մատուցելու համար¹⁵⁵:

Կրթական ոլորտի ներկայացուցիչների մոտ տարածված է այն տեսակետը, որ կրոնների մասին դասավանդումը կարող է և պետք է իրականացնի հոգևորականը: Սա թյուր կարծիք է, քանի որ հենց կրոնի կամ կրոնների մասին դասավանդումն անհրաժեշտ է իրականացնեն աշխարհիկ ուսուցիչները՝ ապահովելու համար անկողմնակալ, օբյեկտիվ գիտելիքներ աշխարհում տարածված տարբեր կրոնական ուղղությունների վերաբերյալ: Այս տեսանկյունից առանձին կրոնական ուղղության ներկայացուցիչ կողմից կրոնի դասավանդումը հղի է սեփական կրոնի դերի ու դիրքի բարձրացմամբ և մնացյալ կրոնների իրական պատմության, իմաստի ու պատմական դեպքերի խեղաթյուրմամբ: Հատկանշական է նաև, որ «Հայոց եկեղեցու պատմության» առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը տեղի ունեցավ Մայր Աթոռի ճեմարանում, իսկ քննական հանձնաժողովի նախագահը Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոսն էր, և հանձնաժողովում Էջմիածինը պատկառելի ներկայություն ուներ: Նման պայմաններում հնարավոր չէ պատկերացնել աշխարհիկության սկզբունքի ապահովումը տվյալ առարկայի վարման շրջանակում:

Քանի դեռ կոնկրետ կրոնի ուսուցումը չի կրում պարտադիր բնույթ, քանի դեռ կրթական համալիրը չի տրամադրում այլընտրանքային համակարգեր այլ կրոնական խմբերի համար, և քանի դեռ գերիշխող (պետական կամ ազգային) կրոնի ուսուցման մեթոդիկան չի կրում դոկտրինացման կամ հոգեբուսության հատկանիշներ, կրոնական պաշտամունքի առարկաների չեզոք ցուցադրումը կրթական համակարգում կարող է համարվել իրավաչափ¹⁵⁶: Այս համատեքստում չի տեղավորվում ցանկացած գործողություն, որ կարող է բնորոշվել որպես կրոնական քարոզ: Սա հզոր արտաքին ազդակ հանդիսացող գործողություն է, որը կարող է երեխաների առումով ունենալ հոգեբուսության հետևանք: *«Երեխա-*

¹⁵⁵ Դահլաբն ընդդեմ Շվեյցարիայի, վկայակոչված վերը, էջ 13:

¹⁵⁶ Լաուցին ընդդեմ Իտալիայի, վկայակոչված վերը, § 74:

ների կրոնական ուսուցումը պետք է իրականացվի խաղաղ միջավայրում, որտեղ բացակայում է հոգեորսության ցանկացած դրսևորում: Պետությանն արգելվում է [կրոնական ուսուցումը իրականացնելիս] հետապնդել դոկտրինացման նպատակ, որը կարող է համարվել որպես [աշակերտների] ծնողների կրոնական և փիլիսոփայական հայացքների նկատմամբ հարգանքի բացակայության դրսևորում: Մա այն սահմանափակող գիծն է, որը պետությունները չպետք է անցնեն»¹⁵⁷: Բացի այդ, կրոնական քարոզի թույլատրումը կրթական համակիրում ինքնին հակասում է աշխարհիկության սկզբունքին, իսկ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է ապահովել կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

¹⁵⁷ Լատուցին ընդդեմ Իտալիայի, § 62:

7. Կրոնական խտրականություն և թշնամանքի սերմանում այլ կրոնական կազմակերպությունների դեմ

Երեխաների իրավունքների կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Երեխայի կրթությունը պետք է ուղղորդվի երեխայի անհատականության, տաղանդի, հոգևոր ու ֆիզիկական ընդունակությունների զարգացմանը իր ողջ պոտենցիալով», իսկ 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը սահմանում են. «1. *անդամ պետությունները պետք է հարգեն մտքի, խղճի և կրոնի ազատության՝ երեխայի իրավունքը: 2. Անդամ պետությունները պետք է հարգեն ծնողների իրավունքներն ու պարտականությունները և, անհրաժեշտության դեպքում, օրինական խնամակալների իրավունքները՝ երեխայի ընդունակություններին համապատասխան երեխային ուղղություն տալու իր իրավունքներն իրագործելու նպատակով:*»:

Կրոնի և հավատքի վրա հիմնված խտրականության և անհանդուրժողականության բոլոր ձևերի վերացմանն ուղղված հոչակագրի 5-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է. «Երեխան պետք է պաշտպանված լինի կրոնի կամ հավատքի հիման վրա խտրականության որևէ ձևից: Նա պետք է դաստիարակվի փոխըմբռնողության, հանդուրժողականության, երեխաների միջև ընկերության, խաղաղության և համընդհանուր եղբայրության, այլոց կրոնի կամ հավատքի նկատմամբ հարգանքի ոգով և համոզված լինի, որ իր էներգիան ու տաղանդը նվիրվելու են մարդկությանը ծառայելուն:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «Միայն ժողովրդավարական հասարակարգում կրթական համակարգում տիրող բազմակարծությունը կարող է հնարավորություն տալ աշակերտներին զարգացնել քննադատական հայացքներ կրոնի հարցերի վերաբերյալ՝ մտքի, խղճի և կրոնի ազատության համատեքստում: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ, ինչպես Դատարանը բազմիցս նշել է այլ գործերով, այս ազատությունը, իր կրոնական շրջանակներով հանդերձ, ամենակարևոր էական տարրերից է, որի շնորհիվ ոչ միայն ձևա-

վորվում է հավատացյալների անձր և կյանքի նկատմամբ նրանց պատկերացումները, այլ նաև կարևոր արժեք է ներկայացնում աթեիստների, ազնոստիկների, սկեպտիկների և անտարբեր անձանց համար»¹⁵⁸:

Վիեննայի եզրափակիչ փաստաթղթի համաձայն՝ ԵԱՀԿ անդամ պետությունները պետք է «հարգեն, ի թիվս այլոց, ծնողների ազատությունը՝ երաշխավորելով, որ նրանց երեխաների կրոնական կամ բարոյական կրթությունը համապատասխանում է նրանց համոզմունքներին»¹⁵⁹: Նմանապես, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածը, ինչպես բազմիցս նշվել է, սահմանում է, որ «անձր չպետք է մերժվի կրթություն ստանալու իրավունքից: Կրթության և ուսուցման հետ կապված որևէ գործառույթի իրականացման ժամանակ պետությունը պետք է հարգի ծնողների իրավունքը, երաշխավորելով, որ նման կրթությունը և ուսուցումը համապատասխանում են նրանց կրոնական և փիլիսոփայական համոզմունքներին»¹⁶⁰:

Թուլեդոյի սկզբունքների համաձայն՝ «կրոնների և հավատքների ուսուցումը չպետք է կրոնական ուղղվածություն ունենա: Այն պետք է ծառայի ուսանողներին կրոնների և հավատքների մասին տեղեկություններ տալուն, սակայն չպետք է պարտադրի նրանց ընդունել դրանցից որևէ մեկը: Սկզբունքները խրախուսում են կրոնների կամ հավատքների ուսուցումը, սակայն ոչ դրանց կիրառումը գործնականում: Այն ուսանողներին հնարավորություն է տալիս ունենալ կրոնական և ոչ կրոնական բազմազան հայացքներ, սակայն չի պարտադրում որևէ տեսակետ»¹⁶¹:

¹⁵⁸ Հասանն ու Էյլեմ Չենգինն ընդդեմ Թուրքիայի, թիվ 1448/04, վկայակոչված վերը, § 69:

¹⁵⁹ 1989թ. ԵԱՀԿ անդամ պետությունների ներկայացուցիչների՝ Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթուղթը, որը կազմվել է կոնֆերանսին հաջորդած եզրափակիչ ակտի սկզբունքների հիման վրա, Վիեննա, 17-ը հունվարի 1989թ. http://www.osce.org/documents/mcs/1989/01/16059_en.pdf: Տե՛ս կետ 16.7:

¹⁶⁰ Թուլեդոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ:

¹⁶¹ Բաժին 1, Բ ենթաբաժին:

Հայաստանի կրթական համակարգն ունի որոշ ընդհանրություններ Ռուսաստանի կրթական համակարգի հետ, որը պայմանավորված է ընդհանուր խորհրդային անցյալով, սակայն կան նաև տարբերություններ: Ռուսաստանի Դաշնության դպրոցներում, օրինակ, հնարավորություն է տրվում աթեիզմի պատմություն, էթիկա, իսլամի պատմություն, բուդդիզմի պատմություն, Ուղղափառ եկեղեցու պատմություն առարկաներից ընտրել մեկը: Եթե վերջին երեքը պայմանավորված են ՌԴ-ում առկա կրոնական համայնքներով ու տարբերվում են հայկական իրականությունից, ապա առաջին երկուսի առկայությունը դիտվում է որպես մարդու ընտրության իրավունքը պահպանելու կարևորագույն բաղադրիչ: Հայաստանի կրթական համակարգը նման այլընտրանք աշակերտների համար չի ապահովում:

7.1. Վերաբերմունքն այլ կրոնի դավանող աշակերտի հանդեպ

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դպրոցական դասագրքի համաձայն՝ «Դասընթացի նպատակն է՝ ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր նկարագրի ամբողջացմանը»¹⁶²: Դասագրքերի հեղինակները գտնում են, որ «վերջին տարիներին Հայաստանի Հանրապետություն են մուտք գործել տոտալիտար, դեստրուկտիվ (ամբողջատիրական, քայքայիչ, ապակառուցողական) միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից բազմիցս քննադատված կրոնական տարաբնույթ հոսանքներ, որոնք լուրջ նկրտումներ ունեն հանրակրթական ոլորտ ներթափանցելու և այստեղ արմատավորվելու: Դասընթացի նպատակն է նաև աճող սերնդին հեռու պահել վերոնշյալ բացասական երևույթներից»¹⁶³:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչներին երաշխավորող և ուսուցիչների որակավորման պատասխանատու ՔԴԿ-ի տնօրեն հայր Վարդանը այլ կրոնի դավանող աշակերտի

¹⁶² «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ծրագիր (V-XI դասարաններ):

¹⁶³ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ծրագիր (V-XI դասարաններ), ԿԳԼ:

նկատմամբ դպրոցի վերաբերմունքի մասին հարցին պատասխանում է. «Ես չեմ մտաբերում նման դեպք, բայց եթե հանկարծ որևէ ուսուցիչ նման հարց տա, ես պետք է թելադրեմ իրեն, որ որևէ ձևով կրոնական երանգ չհաղորդի այդ հաշտեցման ճանապարհին: Այսինքն՝ սխալ ու ճիշտ չպետք է լինի, որովհետև դա խտրականության հարց կառաջացնի ու նաև համաքրիստոնեական դիրքերից ճիշտ չէ: Եթե այդ ընտանիքն այդ սկզբունքների մեջ է ապրում, մեզ համար ցավ է, որ հայ ազգի գավակը նման իրավիճակում է: Ես կարող եմ տասնյակ օրինակներ բերել, որ աշակերտական տարիքի երեխան ինքնասպանության է դիմել կրոնական հարանվանության հարելու պատճառով: Օրինակ, Վարդենիսում 3 տարի առաջ նման դեպք գրանցվեց: 14 տարեկան երեխան ինքնասպան էր եղել Եհովայի վկա ընտանիքում: Դա նկարահանվել է նաև «Շողակաթ» հ/ընկերության կողմից: Նույնը եղավ Կոտայքի մարզում /չեմ հիշում՝ որ գյուղն էր/: Նորից երեխաները հավաքվել էին և փորձել էին իրենց համադասարանցուն տանել պաշտամունքի և հետո սպանել էին նրան, որովհետև չէր ցանկացել գալ: Ինձ համար այս երևույթները շատ ազդեցիկ բաներ են: Ինչո՞ւ պետք է դպրոցահասակ երեխայի մեջ նման մտածումներ առաջանան: Երբեմն կյանքի իմաստի, երջանկության փնտրտուքը երեխաներին բերում է հոգևոր շեղումների, և այդ հարանվանություններն էլ օգտագործում են այդ երևույթը: Ինչ վերաբերում է նշված խնդրին, որևէ ձևով կրոնական երանգ չպետք է տրվի»¹⁶⁴:

Դասերի ժամանակ այլ կրոնական կազմակերպությունների դեմ քարոզչություն տարվո՞ւմ է:

-Դա կախված է ուսուցչի նեղ ընկալումից: Եթե ինքը կրոնական ընկալումներ ունի, բաց չեն թողնում առիթը: Օրինակ՝ իմ աղջիկը սովորում է երկրորդ դասարանում, ուսուցչուհին չունի հատուկ կրոնական ընկալումներ և խնդիրներ չունի երեխայի՝ ավետարա-

¹⁶⁴ Հարցազրույց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արեղայի հետ:

նական լինելու հետ: Երբեք խնդիրներ չեն ծագել, հակառակը՝ նա միշտ փորձել է հարգել այդ հանգամանքը¹⁶⁵:

Եթե դասարանում լինում է աշակերտ, որի ծնողները հաճախում են այլ եկեղեցի, ինչպիսի վերաբերմունքի է արժանանում ուսուցչի և առհասարակ մյուս աշակերտների կողմից:

-Կա երկու ձևի վերաբերմունք: Որոշ դեպքերում՝ արհամարհական կամ ոչ հարգալից: Օրինակ, երբ ուսուցիչը պատմում էր Աստծու մասին և ծանոթացնում էր մանկական Աստվածաշնչին, իմ երեխան ասաց, որ ինքը ծանոթ է դրան և այդ Աստվածաշնչում նույնիսկ գրված է Աստծո անունը: Երբ երեխան ասաց Աստծո անունը, ուսուցիչը բարկացավ և նույնիսկ այսպիսի բառեր ասաց. «Վե՛ր ընկիր տեղդ, դու ի՞նչ ես հասկանում»: Բայց իմ տղան ասաց. «Խնդրում եմ, կարող եք բացել մանկական Աստվածաշնչի հենց առաջին էջը և այնտեղ գրված է, որ ես և իմ տունը աստծուն՝ Եհովային, պետք է պաշտենք»: Ուսուցիչը ներողություն էլ չխնդրեց, բայց էստեղ երևում է նրա վերաբերմունքը երեխայի հանդեպ: Աշակերտների կողմից և՛ հետաքրքրություն կա, և՛ որոշ դեպքերում՝ հակասություններ. տարակարծիք են լինում և այդքան էլ դրական չեն ընդունում¹⁶⁶:

-Կիրակնօրյա մեր եկեղեցու մի քանի երեխաների դպրոցում կրոնի ուսուցչուհին ճնշել է, որ հաճախում են այս եկեղեցի: Հետո երեխաները վախեցան ու կտրվեցին եկեղեցուց: Հիմա էլ չեն գալիս: Ամբողջ դասարանի առջև ասել են. «Էս աղջիկը, էս տղան գնում են էդ եկեղեցի»՝ ձեռք առնելու, նվաստացնելու տոնով, երեխաներն էլ վիրավորվել էին, եկել տուն ու ծնողներին ասել էին: Քանի որ երեխաներն էլ չեն գալիս, նման վերաբերմունքի էլ չեն արժանանում, բայց ինձ թվում է՝ եթե որևէ երեխա նորից շարունակի գալ այստեղ, լավ չեն վերաբերվի և աշակերտների մոտ կնվաստացնեն: Երեխան վախեցած ու ճնշված է, ամաչում է, որ երեխաները նորից կտեսնեն, ուսուցչուհուն խաբար կտան ու ինքը նորից վատ վիճակի մեջ կըն-

¹⁶⁵ «Մեծ շնորհ» Ավետարանական-Մկրտական եկեղեցու հովիվ Վահան Պողոսյան, Գյումրի:

¹⁶⁶ Կապանի թիվ 7 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

կնի: Ուսուցչուհու հետ խոսել չենք փորձել: Ուրիշ երեխաներ էլ կային՝ քույր ու եղբայր, էլի գալիս էին, նրանք էլ նույն դասարանի երեխաներից նույն ձևով ճնշված էին, և իրենք էլ կտրվեցին եկեղեցուց: Հենց կրոնի ուսուցչուհու խոսքերով՝ վախեցան, որ ամբողջ դասարանի դիմաց կկանգնեցնի ու մատնացույց կանի, երեխաներն ամաչեցին ու չեն ուզում, որ իրենց անունը միշտ հոլովվի¹⁶⁷:

-Մեծ կոնֆլիկտ չի եղել: Եղել են մանր-մունր դեպքեր, երբ, ասենք, աղանդավոր ծնողներ են եղել: Ոչ վերջին տարիներին, այլ երբ առարկան նոր էր (մոտ 3-4 տարի առաջ): Լինում էին դեպքեր, երբ երեխաները դժկամությամբ էին մասնակցում այդ դասերին, բայց զրույցների, բացատրությունների միջոցով հարթվել են: Չեմ ասի, որ ամեն ինչ հարթ է եղել: Եղել են դեպքեր, որ աշխատանք են պահանջել, տնօրեններից են մեզ դիմել, մենք ենք խոսել ծնողների հետ: Սակայն վերջին տարիներին նման դեպքեր չունենք: Ինձ թվում է՝ աղանդավորներն են քչացել, որովհետև ես արդեն մեր քաղաքի փողոցներում այդքան շատ չեմ տեսնում իրենց: Կամ գուցե առարկայի երկարամյա դասավանդումն է իր դերն ունեցել, որ աշակերտների մոտ արդեն գիտականորեն է այդ ամենը հիմնավորվում: Չեմ կարող ասել՝ պատճառն ինչ է¹⁶⁸:

-Մեր դպրոցում կա 2 երեխա, որոնց ծնողները աղանդավորներ են, դասերի ժամանակ չեն ընդվզել, աղոթում են, ծնողներն էլ չեն բողոքել: Մենք թեմաներ ենք անցնում, որտեղ սովորեցնում ենք, որ սխալ են այդ աղանդավորական շարժումները: Բարձր դասարաններում երեխաները սովորում են, որ, ասենք, ավետարանական, կաթոլիկ...երեխաները հասկանում են, որ դա ազգը պառակտում է: Երբ անցնում ենք պավլիկյան, թոնդրակյան շարժումները, ես միաժամանակ մեջ եմ բերում հիմնիկվա, այս մեր ժամանակվա աղանդավորական շարժումները՝ եհովականներ, հիսունականներ, հոգեգալստականներ, չգիտես ինչեր, լսել եմ իրենց մասին¹⁶⁹:

¹⁶⁷ Գյումրու ավետարական-մկրտական եկեղեցու անդամ:

¹⁶⁸ Ջեմմա Ավետիսյան, Շիրակի մարզպետարանի կրթության վարչության գլխավոր մասնագետ:

¹⁶⁹ Մատինյան Կարինե, Արթիկի թիվ 4 դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցչուհի:

-Երեխան առանձնացվել է դասարանի մյուս աշակերտներից, և դասերի ժամանակ իրեն որպես օրինակ են օգտագործել՝ փորձելով երեխայից իմանալ ավետարանական եկեղեցիների վարդապետությունը, ուսմունքը, գործունեությունը: Բնականաբար, 13 տարեկան երեխան ի՞նչ կարող է պատմել այս մասին¹⁷⁰:

-Իմ երեխաների հանդեպ աշակերտներն ավելի հարգալից են¹⁷¹: -Նման երեխաների նկատմամբ վատ վերաբերմունք չկա: Աշակերտը մնում է աշակերտ: Նրանց թիվը քիչ է: Դա ծնողներից է գալիս: Մենք ձգտում ենք բացատրել երեխային՝ ինչ է աղանդը, անցնում ենք թեմաներ աղանդների մասին: Հաճախ հարցնում են՝ աղանդավորները վա՞տ մարդիկ են: Մենք բացատրում ենք՝ ո՛չ, մարդը չի կարող վատը լինել, բայց պետք է վերցնել՝ աղանդը ինչ է տալիս կոնկրետ հայ ժողովրդին: Փոքր ազգը եթե պառակտվում է, մեծ վնաս է: Ավելացնեմ՝ որպես պատմության մասնագետ՝ այստեղ մեր եկեղեցու դերը պետք է շատ մեծ լինի: Կարող է Սահմանադրությունը թույլ չի տալիս որոշ կոնկրետ քայլերի գնալ նրանց դեմ, բայց այստեղ կարելի է պրոպագանդայով, ագիտացիայով, մեր աշխատանքներով գործել: Պետական-եկեղեցական համատեղ ծրագիր պետք է լինի: Ես տեսնում եմ, որ քայլեր չեն արվում: Եթե իշխանավորների համար ինչ-որ խոչընդոտներ կան, ապա եկեղեցու միջոցով կարող է պետությունը դա անել¹⁷²:

-Ինձ համար, որպես հոգևոր հովիվ, խոցելի տեղ է Լմբատ թաղամասի 8-րդ դպրոցը, որը նոր է կազմվում որպես դպրոց, առաջ ուսումնարան էր, խոցելի այն առումով, որ Լմբատ թաղամասում ավելի շատ են աղանդավորները: ... Եհովայի վկաներից մեկի գավակը, երբ իրեն բացատրեցինք, որ դու որևէ պարտավորվածություն չունես ծնողներիդ հետևելու: Շատ կոմպլեքսավորված են, որ, ասենք, մյուս աղանդավորական կամ մյուս հարանվանությունների մեջ եղող անդամների գավակները շատ տարբերվում են Եհովայի

¹⁷⁰ «Վերածնունդ» Ավետարանական-Սկրտական եկեղեցու հովիվ Սամիկոն Համբարյան, Գյումրի:

¹⁷¹ Սիլվա Շահբազյան, Կապանի թիվ 2 վարժարանի աշակերտի ծնող, «Աստծո ժողովուրդ» ավետարանական համայնքի անդամ:

¹⁷² Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի տնօրեն Գարինե Հովսեփյան:

վկաների զավակներից մեր մոտ: Շատ կոմպլեքսավորված են Եհովայի վկաների զավակները և իրենց համար այդ «չ» տառը շատ է շեշտված. «չպետք է անես», «չպետք է շփվես», «չպետք է խաղաս»: Ամենից առաջ, մինչև քրիստոնեական գաղափարը ներմուծելը մենք փորձում ենք աշխատել ասել, որ դու հավասար ես¹⁷³:

Կա՞ն, արդյոք, առանձին դասեր՝ ուղղված այլ կրոնական կազմակերպությունների դեմ:

-Ո՛չ: Նյութից դուրս կարող է լինել ուսուցչի նախաձեռնությամբ՝ հարց ու պատասխանի ձևով¹⁷⁴:

Այն հարցին, թե արդյո՞ք դասերի ժամանակ ուսուցիչը հետաքրքրվում է աշակերտի կրոնական հայացքներով, հնչեցին հետևյալ պատասխանները. «Համենայն դեպս, ինձ հայտնի չեն նման դեպքեր: Գուցե եղել են, չեմ բացառում, բայց նման տեղեկատվության ես չեմ տիրապետում: Նախ և առաջ, այդ հարցը չի էլ կարելի քննարկել, որովհետև արքիմատիկ կարգով պետք է ընդունել, որ դու առաքելական եկեղեցու հետևորդ ես ու վերջ: Դրանից է պետք սկսել: Գուցե հնարավոր է նկատել մի ոչ սովորական բան, որ երեխան թաքցնում է, բայց դու քո աշխատանքի շնորհիվ պետք է կարողանաս այդ երեխային ոչ թե դատապարտել, այլ տրամադրել: Դատապարտես, նա ավելի շատ կխորանա: Այսինքն՝ պետք է կարողանալ այդ նուրբ պահերով լուրջ աշխատանք տանել: Հեշտ է այս սեղանի շուրջ նստած խոսել և դատողություններ անել, բայց դպրոցում, դասարանում, որտեղ 35 երեխա է նստած, շատ բարդ է այդ խնդիրը: Ես կարծում եմ, որ այս առարկան, ի տարբերության հայոց կամ համաշխարհային պատմության, կարելի է առանձին պարապել մի քանի հոգու հետ, եթե, իհարկե, ֆինանսական միջոցներ լինեն: Ոչ թե ֆակուլտատիվ, այլ հակառակը: Կարելի է կիսել դասարանը, ասենք՝ չորս մասի բաժանել, որ հեշտ լինի աշխատելը»¹⁷⁵:

Կա՞ն, արդյոք, առանձին դասեր՝ ուղղված աղանդների դեմ:

¹⁷³ Տե՛ր Լևոն քահանա Հովհաննիսյան, Լմբատավանքի վանահայր, Արթիկ քաղաքի հոգևոր հովիվ:

¹⁷⁴ Սխիանի թիվ 5 միջն. դպրոցի տնօրեն Հովիկ Ալեքսանյան:

¹⁷⁵ Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

-Անցած տարի փոխարինող ուսուցիչը երբեմն դասի ժամը հաստ-կացնում էր աղանդների մասին խոսելուն: Հիմնական ուսուցիչն այդ կերպ չի վարվում¹⁷⁶:

Արդյո՞ք դասերի ժամանակ քննարկվում են աշակերտների կրոնական հայացքներն ու պատկանելիությունը:

-Ոչ միշտ, բայց երբեմն լինում է¹⁷⁷:

Եթե դասարանում լինում է աշակերտ, որի ծնողները հաճախում են այլ եկեղեցի, ինչպիսի՞ վերաբերմունքի է արժանանում ուսուցչի և առհասարակ մյուս աշակերտների կողմից:

-Բոլորի նկատմամբ՝ հավասար: Իրենք ավելի նրբազգաց են: Պետք է այնպես անենք, որ իրենք ընդունեն այն, ինչ մենք ենք դասավանդում: Շատ հաճախ ինձ առաջարկում են գրքեր. ես չեմ մերժում, ասում եմ. «Տուր ես էլ կարդամ, հետո կբանավիճենք»¹⁷⁸:

Կա՞ն, արդյոք, առանձին դասեր՝ ուղղված աղանդների դեմ:

-Հայոց պատմության մեջ ունենք մի քանի թեմաներ՝ աղանդա-վորական շարժումների մասին: Ժամանակակից աղանդների մա-սին չունենք, բայց ես ունեմ գիրք՝ «Մոլորեցնողները», որը ես օգտա-գործում եմ բարձր դասարաններում¹⁷⁹:

Արդյո՞ք դասերի ժամանակ քննարկվում են աշակերտների կրոնական հայացքներն ու պատկանելիությունը:

-Ո՛չ: Ես մի դեպք եմ տեսել, որ երեխաները սկսել են քննա-դատորեն վերաբերվել նրանց: Ես բացատրել եմ, որ պետք է ոչ թե այդ ձևով ճնշել /նրանք չէին շփվում նրանց հետ/, այլ պետք է բացատրել¹⁸⁰:

¹⁷⁶ Մերի Մարության, Գորիսի թիվ 3 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

¹⁷⁷ Լուսինե Հարությունյան, Կապանի թիվ 2 միջն. դպրոցի աշակերտի ծնող, «Աստծո ժողովուրդ» ավետարանական համայնք:

¹⁷⁸ Կապանի թիվ 3 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Մարինա Ղազարյան:

¹⁷⁹ Կապանի թիվ 3 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Մարինա Ղազարյան:

¹⁸⁰ Կապանի թիվ 3 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Մարինա Ղազարյան:

Դասերի ժամանակ այլ կրոնական կազմակերպությունների դեմ քարոզչություն տարվո՞ւմ է:

-Այո, օրինակ ես երեխաներին սովորեցնում եմ, որ հեռու մնան դրսում բաժանվող գրականությունից: Ես կարծում եմ, որ ճիշտ կլինի, որ դպրոցներում քահանաները հատուկ դասաժամեր ունենան¹⁸¹:

Կա՞ն, արդյոք, առանձին դասեր՝ ուղղված աղանդների դեմ:

-Մեր հոգևորականն ու եկեղեցու պատմության ուսուցիչն ասում էին, որ մինչև աշակերտները չպատկերացնեն աղանդը, նրանց չենք կարող ասել. «Դու այնտեղ մի գնա»: Դրա շնորհիվ ծնվեց այն ակցիան: Երբ երեխաներին բացատրեցին՝ ինչ է աղանդը, բուռն ցանկություն առաջացավ. «Եկեք Գորիսում պտտվենք ու ակցիա անենք»: Երթն ավարտվեց Գրիգոր Տաթևացու արձանի մոտ, հրավիրված էին նաև քաղաքային իշխանությունները, որից հետո իրենք հասկացան, որ սա մի անգամ պետք է չարվի, պետք է պարբերաբար կրկնել, և այս ձևով կարող ենք շատ շատերի բերել դարձի¹⁸²:

Եթե դասարանում լինում է աշակերտ, որի ծնողները հաճախում են այլ եկեղեցի, ինչպիսի՞ վերաբերմունքի է արժանանում ուսուցչի և առհասարակ մյուս աշակերտների կողմից:

-Աղանդավորական շարժման մասնակից երեխաներ չունենք, որովհետև, ինչպես ասացի, մենք աշխատում ենք այդ ուղղությամբ և սերմանում ենք իրենց մեջ միայն քրիստոնեություն¹⁸³:

-Եղել է ժամանակ, որ քննարկվել է: Ուսուցչի կողմից չի ընդունվել ճշմարտությունը, բայց որևէ պատիժ կամ նման բան չի եղել: Պարզապես կարող են վիրավորական խոսքեր լինել¹⁸⁴:

¹⁸¹ Սիսիանի թիվ 5 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Աիդա Առաքելյան:

¹⁸² Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի տնօրեն Արմինե Շեգունց:

¹⁸³ Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Գայանե Նարինյան:

¹⁸⁴ Մերգեյ Հարությունյան, ՀՔՎՕՍԵ Գյումրու ճյուղի նախագահ:

-Քնականաբար: Նախապատվությունը որ կրոնին ենք տալիս, ինչու ենք Հայ առաքելական եկեղեցուն նախապատվություն տալիս. շեշտը դրվում է դրա վրա: Այդ հարցերը հաճախակի դրվում է երեխաների կողմից: Եթե երեխաների մեջ աղանդավորականներ կան, կարծես իրենք իրենց զսպված են պահում, որպեսզի մյուսները չնկատեն այդ պահը: Ես կարգավորում եմ, որ իրենց ճնշված չզգան: Մի դեպք եղավ, երբ Եհովայի վկա էր ու չէր խաչակնքում և երեխաների ուշադրության կենտրոնում էր ու միշտ նեղում էին: Ես էլ այնպես արեցի, որ էլ նեղություն չտվեցին: Ես առանձին խոսեցի երեխայի հետ, և նա սկսեց խաչակնքել, որպեսզի չտարբերվի մյուսներից¹⁸⁵:

- Ուսուցիչը խոսում է, իմ երեխան ճիշտն է ասում¹⁸⁶:

-Եթե դասի ծրագիրը թույլ է տալիս նման աղանդավորական շարժման հետ կապված որոշակի մոտեցումներ, ինձ թվում է՝ պետք է ճիշտ ուղղության վրա դնել «աշակերտին», բայց էլի շատ նուրբ մոտեցումներով: Ես գտնում եմ, որ պետք է պարզապես ասել. «Երեխաներ, սա աղանդավորական շարժում է, սա մենք ենք»: Այսինքն՝ պետք է իրականացնել իրենց դասարանի կոնկրետ կոմպլեկտավորմանը համապատասխան անհատական մոտեցում¹⁸⁷:

-Քննարկվում է իրավիճակային՝ ըստ աշակերտների հարցերի: Ենթադրենք՝ երեխան դասի մեջ մի բառ չի հասկացել, ու դրանից մի թել է ձգվում դեպի եղ աղանդները, աղանդավորական ուրիշ շարժումները: Իրենք շատ հաճախ պատմում են, թե իրենց ովքեր են այցելել¹⁸⁸:

-Դա նրանց ազատ որոշման իրավունքն է: Խղճի ազատություն գոյություն ունի¹⁸⁹:

-Պատահական մարդիկ դպրոցում չեն կարող լինել: Նրանք չեն կարող դպրոց ներթափանցել: Ի վերջո, դպրոցն ունի իր ներքին

¹⁸⁵ Գյումրու թիվ 37 ավագ դպրոցի ուսուցչուհի Անահիտ Մալխասյան:

¹⁸⁶ Գայանե Գասպարյան, Գյումրու թիվ 28 դպրոց, Եհովայի վկա:

¹⁸⁷ Վանաձորի թիվ 9 դպրոցի տնօրեն Էդիտա Վարդանյան:

¹⁸⁸ Վանաձորի թիվ 9 դպրոցի ուսուցչուհի Անահիտ Վարդանյան:

¹⁸⁹ Վանաձորի թիվ 20 դպրոցի փոխտնօրեն Մարգարիտա Հովհաննիսյան:

կարգապահական կանոնները և ռեժիմը: Նրանք ավելի շատ փո-
ղոցներում և տներում են տարածում իրենց հավատը¹⁹⁰:

-Օրինակ, հարցնում եմ. «Ո՞նց կվերաբերվեիք, եթե այսօր լինե-
ր Ավարայրի ճակատամարտը, ու էլի դրված լինեի հայի լինել-
չլինելու հարցը, էլի ձուլման խնդիր առաջանար»: Աշակերտները
շատ կոնկրետ պատասխանում են, որ երբեք քրիստոնեությունը չեն
ուրանա¹⁹¹:

- Դասին՝ ոչ, բայց միջոցառումներին՝ այո: Դասին նստում են,
բայց եթե նույն ուսուցիչը միջոցառում է կազմակերպում, արշավ
կամ ուխտագնացություն, երեխան չի մասնակցում¹⁹²:

-Մենք ունեցել ենք բազմաթիվ դասղեկական ժամեր՝ կապված
ժամանակակից աղանդների, նրանց առաջացրած խնդիրների
հետ¹⁹³:

- Ըստ ծնողի՝ հիմա դա կատարվում է առավել նրբորեն¹⁹⁴:

Կա՞ն, արդյոք, առանձին դասեր՝ ուղղված աղանդների դեմ:

-Առանձին դասեր չկան, բայց ես համարյա բոլոր դասարանների
երեխաներին տանում եմ եկեղեցի, և հոգևորականը երեխաների
հետ անպայման այդպիսի դասեր անցկացնում է¹⁹⁵:- Ես նպատակա-
հարմար եմ գտնում իմ դասերը մի քիչ խորացնել: Հարցնում եմ.
«Երեխաներ, այսօր ի՞նչ աղանդներ գիտեք»: Իմ պարապած դասա-
րանում կա նման մի աղջիկ՝ Եհովայի վկա ու չպետք է նրան վիրա-
վորել. ամեն դեպքում դա մարդու կամքն է: Միայն երեխաների հետ
աշխատելը քիչ է, պետք է նաև ծնողների հետ աշխատել: Ծնո-
ղական ժողովների ժամանակ մենք միշտ խոսում ենք դրա մասին¹⁹⁶:

¹⁹⁰ Վանաձորի թիվ 20 դպրոցի փոխտնօրեն Մարգարիտա Հովհաննիսյան:

¹⁹¹ Վանաձորի թիվ 18 դպրոցի ուսուցչուհի, փոխտնօրեն Հերմինե Խառատյան:

¹⁹² Վանաձորի թիվ 24 դպրոցի տնօրեն Հասմիկ Հովսեփյան:

¹⁹³ Վանաձորի թիվ 24 դպրոցի ուսուցչուհի Աննա Վարդերեսյան:

¹⁹⁴ Վանաձորի թիվ 20 դպրոցի աշակերտի ծնող, ավետարանական համայնքի
անդամ:

¹⁹⁵ Միսիանի թիվ 5 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Ալիդա
Առաքելյան:

¹⁹⁶ Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի տնօրեն Գարինե Հովսեփյան:

Եթե դասարանում լինում է աշակերտ, որի ծնողները հաճախում են այլ եկեղեցի, ինչպիսի՞ վերաբերմունքի է արժանանում ուսուցչի և ստեղծարարի մյուս աշակերտների կողմից:

-Մեր դպրոցում շատ քիչ են նրանք: Ծնողներ կան, որ այդպիսին են, և մեք վախենում ենք, որ երեխաներն էլ այդ ուղիով կգնան: Հաճախակի գրույցներ ենք վարում նրանց՝ ծնողների և երեխաների հետ: Ես անընդհատ բացատրում եմ որ Հայ առաքելական եկեղեցին մեր եկեղեցին է, աղանդները պառակտում են ժողովրդին և այլն¹⁹⁷:

Կա՞ն, արդյոք, առանձին դասեր՝ ուղղված կրոնական կազմակերպությունների դեմ:

-Անցած տարի փոխարինող ուսուցիչը երբեմն դասի ժամը հատկացնում էր աղանդների մասին խոսելուն: Հիմնական ուսուցիչն այդ կերպ չի վարվում¹⁹⁸:

-Աշխատում ենք, որ մոտեցումը շատ մեղմ լինի, չնկատվի, որ աշակերտները կարողանան փոխվել: Ու փոխել ենք: Օրինակ՝ ընթացքում հաճախելիություն չի եղել, իրենց հեռու են պահել: Հետո ներգրավվել են, մասնակցել են միջոցառումներին ու զգացել ենք, որ այդ աշակերտն ուղղվել է, դարձի է եկել: Մի քանի դեպքեր եղել են: Էլի կան [աղանդավորներ], բայց աշխատում եմ անընդհատ չհիշատակել, որ լարվածություն չստեղծվի¹⁹⁹:

-Հիմա՝ նորմալ: Առաջ՝ խնդիրներ կային²⁰⁰:

-Աշակերտները խնդիրներ էին առաջացնում, բայց դասղեկի միջնորդությամբ հարթվեցին²⁰¹:

-Տնօրենի հրահանգով որևէ բռնություն կամ պարտադրանք չկա: -Գալինա Խաչատրյան, Գյումրու թիվ 37 դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

¹⁹⁷ Սիսիանի թիվ 5 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Աիդա Առաքելյան:

¹⁹⁸ Մերի Մարության, Գորիսի թիվ 3 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

¹⁹⁹ Գյումրու թիվ 37 ավագ դպրոցի ուսուցչուհի Անահիտ Մալխասյան:

²⁰⁰ Գյումրու թիվ 40 դպրոցի աշակերտի ծնող Արթուր Գևորգյան, Եհովայի վկա:

²⁰¹ Գյումրու թիվ 41 դպրոցի աշակերտի ծնող Ելենա Հովհաննիսյան, Եհովայի վկա:

-Ոչ վատ, ոչ էլ շատ լավ: Աշակերտի հարցերը չեն ընդունվում ուսուցչի կողմից: Միակ ճիշտ պատասխանը դասագրքում է²⁰²:

-Ոչ մի բացասական մոտեցում: Մի քանի աշակերտ ունենք, որոնց ծնողներն ավետարանչական եկեղեցու աղանդավոր են, դա էլ Հայաստանում թույլատրված է: Եթե նա ուզում է այդ եկեղեցին գնալ, ես ի՞նչ իրավունք ունեմ նրան ասել՝ այստեղ մի գնա, այնտեղ գնա²⁰³:

-Ուսուցիչը ՀԱԵ-ի դիրքերից փորձում է համոզել այլադավան աշակերտներին²⁰⁴: -

-Նախ՝ դասի ընթացքում անընդհատ համեմատականներ եմ անցկացնում մեր եկեղեցու ու աղանդների միջև, բայց առանց որևէ ագրեսիվության: Գիտեմ 4 ավետարանական աշակերտների: Համեմայն դեպս, ես դասերի միջոցով փորձում եմ ճիշտը ցույց տալ: Մեր ծրագիրը թույլ չի տալիս առանձին դասաժամ նվիրել աղանդների դեմ պայքարին, բայց ցանկացած առիթով երբ ինձ հարց են տալիս, որը մի փոքր առնչվում է աղանդների հետ, ես փորձում եմ համեմատություններ տանել աղանդների մասին, թերություններն ասել²⁰⁵:

-Եթե կան էլ նման երեխաներ, ես չեմ հասկանում, որովհետև նրանք շատ հետաքրքրությամբ դասերին մասնակցում են: Ես կողքից գիտեմ, որ ծնողներն ինչ-որ շարժման, աղանդի մեջ են, բայց երեխան այնքան սիրուն է հարցին պատասխանում, որ ինձ բոլորովին տեղ ու ժամանակ չի մնում, որ հատուկ զբաղվեմ այդ երեխայով (Անահիտ Վարդանյան, Վանաձորի թիվ 9 դպրոցի ուսուցչուհի):

-Չունենք այդպիսիք: Մենք անցած անգամ էլ ասեցինք ուսուցչին, որ ավետարանականներ կան, նա ասաց, որ դա քույր եկեղեցի է (Մարգարիտա Հովհաննիսյան, Վանաձորի թիվ 20 դպրոցի փոխտնօրեն):

-Եթե Սահմանադրության մեջ նշված է, որ բոլորն ունեն իրենց դավանանքի ազատությունը, ավետարանականներն էլ քույր եկեղե-

²⁰² Գյումրու թիվ 28 դպրոցի աշակերտի ծնող, Ավետարանական-Սկրտական եկեղեցու հետևորդ, չի ցանկացել, որ իր անունը նշվի:

²⁰³ Վանաձորի թիվ 22 դպրոցի տնօրեն Դավիթ Մելքոնյան:

²⁰⁴ Վանաձորի թիվ 11 դպրոցի տնօրեն Նարինե Սահակյան:

²⁰⁵ Վանաձորի թիվ 22 դպրոցի ուսուցչուհի Գոհար Մարգարյան:

ցի են: Մենք իրավունք չունենք ազդելու աշակերտների վրա (Մունսանա Մարտիրոսյան, Վանաձորի թիվ 20 դպրոցի ուսուցչուհի):

-Իմ դասարանում չկան «աղանդավորներ», բայց դպրոցում կան, մանավանդ որ դպրոցից մի քիչ ներքև հոգեգալստականների կենտրոն կա: Իրենց նկատմամբ վերաբերմունքը նորմալ է. աշակերտները դասերին նստում են, դասերը նորմալ պատասխանում են, բայց այն, որ այդ երեխաներն արդեն աղանդավոր են ու մի տեսակ խեղված հոգեբանություն ունեն, լավ չէ (Հերմինե Խառատյան, Վանաձորի թիվ 18 դպրոցի ուսուցչուհի):

-Այլադավան աշակերտի հանդեպ վերաբերմունքը հնարավորինս չընդգծված է և հանդուրժողական: Եհովայի վկա երեխա ունենք: Ասեմ ձեզ, որ այդ երեխան հավասարաչափ մասնակցում է դասին²⁰⁶:

-Մենք ունենք մի աշակերտուհի, որը հաճախում է Ավետարանական եկեղեցի: Ծնողների հետ հարաբերությունները շատ լավ են: Եթե նույնիսկ խնդիրներ էլ առաջանան, պետք է առաջնորդվել ճիշտ սկզբունքով՝ չհալածել և միևնույն ժամանակ չնպաստել²⁰⁷:

-Այո, հիմնականում Եհովայի վկաների դեմ²⁰⁸:

Արդյո՞ք դասերի ժամանակ քննարկվում են աշակերտների կրոնական հայացքներն ու պատկանելությունը:

-Միանշանակ: Ուղիղ համեմատական է տարվում առաքելական եկեղեցու և ավետարանական եկեղեցիների ուսմունքների միջև²⁰⁹: -Քանի դեռ գաղափարների բախում չկա, վերաբերմունքը լոյալ է, մինչև որ ուսուցիչները սկսում են բախվել երեխաների մտածելակերպի հետ և տանել նեղ կրոնական քարոզչություն ու երեխաների միջև զանազանություն են դնում: Օրինակ՝ կարող են հարցնել. «Դասարանում քանի՞ աղանդավոր երեխա կա: Քանի՞ աղանդավորի երեխա կա: Աղանդավորների երեխաները թող ոտքի

²⁰⁶ Վանաձորի թիվ 24 դպրոցի տնօրեն Հասմիկ Հովսեփյան:

²⁰⁷ Վանաձորի թիվ 24 դպրոցի ուսուցչուհի Աննա Վարդերեսյան:

²⁰⁸ Միվա Շահբաջյան, Կապանի թիվ 2 վարժարանի աշակերտի ծնող, «Աստծո ժողովուրդ» ավետարանական համայնք:

²⁰⁹ «Վերածնունդ» Ավետարանական-Մկրտական եկեղեցու հովիվ Մամիկոն Համբարյան, Գյումրի:

կանգնեն»: Դպրոցներից մեկում (համարը չեմ հիշում), ուսուցիչն ասել է. «Աղանդավորների երեխաները թող ոտքի կանգնեն»: Փորձել են երեխաներին նվաստացնել ողջ դասարանի առաջ: Իրավիճակը ոչ մի լուծում էլ չի ստացել: Ծնողները չեն բողոքել, որովհետև նրանցից շատերը վախենում են բողոքել, որ երեխաների համար խնդիրներ չառաջանան²¹⁰:

-Երբ երեխաները սկսում են չհամաձայնել ուսուցչի խոսքերի հետ, միանգամից հայտարարվում են աղանդավորների երեխաներ: Օրինակ՝ ուսուցչուհին Հիսուսի մասին անհեթեթ պատմություն էր պատմել, և երբ երեխան հարցրել էր՝ Աստվածաշնչում որտե՞ղ է գրված, նա միանգամից հայտարարվել էր աղանդավորի երեխա: Դրանից հետո երեխաների գնահատականներն իջնում են: Աշակերտների շրջանում հարաբերությունները չեն փոխվում: Եվ ոչ միայն պատմվում է ՀԱԵ պատմությունը, այլ նաև ծեսեր են մեկնաբանվում, իսկ մեկնաբանությունը բուն քարոզչություն է: Ոչ թե ներկայացվում է քրիստոնեական տեսանկյունը, այլ առաքելական եկեղեցու նեղ վարդապետական տեսանկյունը²¹¹:

-Կան այդպիսի դեպքեր, և երբեմն ծնողները ոչ միայն եկեղեցի են հաճախում, այլև փորձում են մտնել դպրոց, այսինքն՝ իրենց հավատքը բերել դպրոց: Նրանք իրենց երեխաներին են դաստիարակում այդ համապատասխան կրոնի ոգով և այլն: Պետք է փորձել այդ երեխային վերադարձնել իր ակունքները, բայց դա շատ դժվար պրոցես է: Ես դա այսպես եմ պատկերացնում. իրոք պետք է լավագույնս մատուցվի մեր սեփական եկեղեցու պատմությունը: Սեփական եկեղեցու պատմությունը մատուցելով և ամեն անգամ ասելով, որ մենք ամենալավն ենք և առաջինը, դա դեռ չի նշանակում, որ նա կսիրի այդ եկեղեցին, մանավանդ որ արդեն իր ուղեծրից շեղվել է մի քիչ: Մենք պետք է կարողանանք դնել կոնկրետ օրինակների վրա և տեսնել, թե ինչպե՞ս է, որ Հայ առաքելական եկեղեցին իր առավելություններն ունի մեկ ուրիշի

²¹⁰ «Մեծ շնորհ» Ավետարանական-Սկրտական եկեղեցու հովիվ Վահան Պողոսյան, Գյումրի:

²¹¹ «Մեծ շնորհ» Ավետարանական-Սկրտական եկեղեցու հովիվ Վահան Պողոսյան, Գյումրի:

նկատմամբ, մանավանդ այն եկեղեցու, որին դավանում են այդ աշակերտի ծնողները: Պետք է կարողանանք այդ համեմատության մեջ դնել և ոչ մեկ անգամ, այլ տասը: Մինչև որ այդ երեխան կսկսի հասկանալ, թե ինչ բան է այս կամ այն եկեղեցին, նրա ուղղվածությունը, նա պետք է իմանա, որ իր սեփականն է իր համար շատ ավելի կարևոր: Քո ազգային ինքնությունը միայն եկեղեցիով չի, բայց եկեղեցիով դու հարստացնում ես քո ազգային ինքնությունը: Դասավանդումն այնքան հայրենասիրական ու դաստիարակչական և բարձր մակարդակի պետք է լինի, որ դուրսից կերպով ընկալվի դրա անհրաժեշտությունն ու կարևորությունը²¹²:

-Հատուկ առանձին դասեր չկան: Օրինակ, անցած տարվա վերջում քահանան եկավ և առանձին դաս պարապեց «Աղանդավորների դեմ պայքար» և մեր դպրոցն անցած տարի պաստառներով դուրս եկավ քաղաք: Ես կոնկրետ դաս չեմ հատկացնում դրան, որովհետև բոլոր դասարաններում եմ խոսում²¹³:

-Բնականաբար: Դա պետք է լիներ էլ: Այսինքն՝ երեխային պետք է ծանոթացնել սխալի հետ, որ ինքը կարողանա տարբերել ճիշտը: Սկզբում ճշտին ենք ծանոթացնում, հետո ծանոթացնում ես սխալին: Ոչ թե երեխայի մեջ գոմբիացված մտցնես, այլ պետք է բացատրես, որ ինքը տարբերությունը տեսնի: Որովհետև այսօրվա երեխան, տարբերակվածության աստիճանը, որ մենք այսօր ունենք (բացարձակ զարգացած երեխաներ ունենք), միայն ասելով չի լինի դա, միայն գոմբիի նման ուղեղի մեջ սառեցնելով չի լինի դա, այլ պետք է բացատրես երեխային, թացն էլ ցույց տաս, չորն էլ ցույց տաս, որ ինքը կարողանա տարբերել երկուսն իրարից²¹⁴:

-Այսօր մեր Հայ առաքելական եկեղեցին պայքարում է աղանդավորական շարժումների դեմ, որոնց հետևից ուղղակի չի էլ հասցնում գնալ: Եթե մենք իսկապես այս առարկան մեր կյանքում շատ ավելի կենսունակ չսարքենք, տարիներ հետո մեր եկեղեցու արժեքը

²¹² Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

²¹³ Գորիսի թիվ 1 միջն. դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչուհի Ֆլորա Խաչատրյան:

²¹⁴ Նուբարաշեն համայնքի հոգևոր հովիվ տեր Նիկողոս քահանա Հովհաննիսյան, Երևանի թիվ 119 ավագ դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչ:

կիջնի. կբարձրանան նրանք, ովքեր այսօր գիտենք՝ ինչպես են հոգեորսությամբ զբաղվում: Մակայն պայքարը պետք է ոչ թե ուժային լինի, այլ առաքելական եկեղեցին պետք է կարողանա դառնալ ավելի հզոր, որպեսզի կարողանա մարդկանց կապել իրեն: Թույլը չի դիմանա այս մրցակցությանը: Ես ուզում եմ, որ մեր եկեղեցին մրցունակ լինի, և այս առարկայի դասավանդումը բխում է նաև մեր եկեղեցու շահերից և, հետևաբար, բխում է նաև մեր ազգի շահերից, որպեսզի նա երբեք իր երկրում չկորցնի իր հեզեմոն դերը²¹⁵:

-Այո, հատկապես մեր կազմակերպության դեմ տարվում է, և ուսուցիչները երեխաներին հորդորում են՝ հեռու մնալ նման անձնավորություններից²¹⁶:

-Հետո երեխաների առաջարկով հետաքրքիր ակցիա կազմակերպեցինք՝ ամբողջ քաղաքով երթ՝ «Հեռու մնալ բոլոր տեսակի աղանդներից»: Դա եղել է 2011թ. ապրիլի 29-ին²¹⁷:

Հայաստանի հելսինկյան կոմիտեն Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի հետ համատեղ Եվրոպական միության/Եվրոպական հանձնաժողովի և Բաց հասարակության ինստիտուտի աջակցությամբ 2007-2008թթ. իրականացրել է «Մարդու իրավունքների կրթություն. քայլ առ քայլ» ծրագիրը: Ծրագրի շրջանակում ներկայացվել է ՀՀ Սյունիքի մարզում կրոնական հանդուրժողականության և խտրականության մոնիթորինգի զեկույցը: Ջեկույցում ասված է. «Հարցումներ են անցկացվել Գորիս, Միսիան, Կապան քաղաքների և Շինուհայր ու Ախլաթյան գյուղերի դպրոցներում: Աշակերտների և ուսուցիչների մեծամասնությունը բացասաբար է վերաբերվում կրոնական համայնքների անդամներին (բացասական՝ 76%, դրական՝ 24%): Հարցման մասնակիցներից ոմանք նշեցին, որ իրենց դպրոցում կան կրոնական համայնքների անդամ աշակերտներ և ուսուցիչներ: Այդպիսի դպրոցներից հարցվածների մեծ մասը նշեց, որ այդ հավատացյալների կողմից քարոզչության դեպքերը քիչ են: Ուսուցիչներից մեկը նշեց, թե ինչպես է արձագանքել աշակերտի

²¹⁵ Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

²¹⁶ Կապանի թիվ 7 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

²¹⁷ Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի տնօրեն Արմինե Շեգունց:

կողմից քարոզչությանը. «Թևից բռնել շարտել են»: Ըստ հարցվածների չնայած կրոնական համայնքների անդամները քարոզչություն չեն անում, սակայն շրջապատը բացահայտ խտրական վերաբերմունք է դրսևորում նրանց նկատմամբ: Ջեկույցում ներկայացված են Շինուհայր գյուղում անցկացված հարցումները. «Շինուհայրի աշակերտներից նշել են, որ մի համադասարանցի ընտանիքով «Ավետարանի հավատքի քրիստոնյաներ» կազմակերպության անդամ է: Նա սովորում է բոլոր առարկաները, բացի եկեղեցու պատմությունից: Այդ դասաժամին որոշակի լարվածություն էր ստեղծվում նրա և ուսուցչի միջև. ուսուցիչն սպառնացել է անգամ նրան հեռացնել դպրոցից»: «Մի քանի ամիս առաջ մի ուսուցչուհի հեռացվեց աշխատանքից իր կրոնական համոզմունքների պատճառով, թեև պաշտոնական բացատրությունն այլ կերպ է ձևակերպված, սակայն բոլորիս համար էլ պարզ է իրական պատճառը»: «Մի անգամ ուսուցիչը մի ամբողջ դասաժամ փնտվում էր կրոնական համայնքի անդամ մի աշակերտի, իսկ նա «կապտած լսում էր...»»²¹⁸:

Որոշ կրոնական կազմակերպությունների անդամներ չեն ցանկանում, որ իրենց երեխաները մասնակցեն «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասերին՝ պատճառաբանելով, որ դասերի ժամանակ նրանց ստիպում են իրենց կրոնական համոզմունքներին հակառակ ձեռքերի մասնակցել: Ըստ Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու հասարակական գործերի տնօրեն Միլենա Գևորգյանի (այժմ արդեն նախկին)՝ 2006թ. ապրիլ ամսին Գյումրու թիվ 28 միջնակարգ դպրոցի տնօրենը իմանալով, որ մի ընտանիքի երկու երեխաներն այդ եկեղեցու անդամ են, կանչել է ծնողներին և պարտադրել, որ նրանց երեխաները հաճախեն «Հայոց եկեղեցու պատմության» դասերին, որի ժամանակ հայտարարել է. «Հավատացյալն իրավունք չունի հաճախելու այս դպրոցը»²¹⁹: Միջադեպի կապակցությամբ եղել է հանդիպում քաղաքապետի հետ, որը կրկնել է դպրոցի տնօրենի պահանջը, և երեխաներն ստիպված են

²¹⁸ Տե՛ս Հայաստանի հելսինկյան կոմիտեի պաշտոնական կայք (<http://www.armhels.org/ArticleIndex.php?id=209>):

²¹⁹ Տե՛ս Monitoring of democratic reforms in Armenia-Report (http://www.partnership.am/files/Democracy%20monitoring_eng.pdf):

եղել փոխել դպրոցը: Ըստ տիկին Գևորգյանի՝ նմանատիպ դեպքեր այլ դպրոցներում նույնպես եղել են:

ԱՄՆ պետդեպարտամենտի «Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույց 2009–Հայաստան» զեկույցում օրինակ է բերվում դպրոցներում անհանդուրժողականության հետևյալ դեպքը. «Եհովայի վկաների հաղորդման համաձայն՝ Երևանի թիվ 94 դպրոցի տնօրինությունն իրենց անդամների երեխաների հանդեպ շարունակվող հալածանքները չի կանխել: Ըստ հաղորդումների՝ 2008թ. նոյեմբերի 24-ին ոստիկանական բաժանմունք են հրավիրվել «մեղավոր» դեռահասները, ովքեր ընդունել են, որ ծաղրել են իրենց համադասարանցիներին, քանի որ իրենց դուր չի եկել նրանց կրոնական տարբերությունը: Տուժողների ընտանիքները հայտնել են, որ ոստիկանությանը դիմելու իրենց գործողությունները դպրոցի տնօրենը դատապարտել է, որի հետևանքով էլ իրենք որոշել են երեխաներին այլ դպրոց փոխադրել»²²⁰:

-Կիրակնօրյա մեր եկեղեցու մի քանի երեխաների դպրոցում կրոնի ուսուցչուհին ճնշել է, որ հաճախում են այս եկեղեցի: Հետո երեխաները վախեցան ու կտրվեցին եկեղեցուց: Հիմա էլ չեն գալիս: Ամբողջ դասարանի առջև ասել են. «Էս աղջիկը, էս տղան գնում են էդ եկեղեցի»՝ ձեռք առնելու, նվաստացնելու տոնով, երեխաներն էլ վիրավորվել էին, եկել տուն ու ծնողներին ասել էին: Քանի որ երեխաներն էլ չեն գալիս, նման վերաբերմունքի էլ չեն արժանանում, բայց ինձ թվում է՝ եթե որևէ երեխա նորից շարունակի գալ այստեղ, լավ չեն վերաբերվի և աշակերտների մոտ կնվաստացնեն: Երեխան վախեցած ու ճնշված է, ամաչում է, որ երեխաները նորից կտեսնեն, ուսուցչուհուն խաբար կտան, ու ինքը նորից վատ վիճակի մեջ կընկնի: Ուսուցչուհու հետ խոսել չենք փորձել: Ուրիշ երեխաներ էլ կային՝ քույր ու եղբայր, էլի գալիս էին, նրանք էլ նույն դասարանի երեխաներից նույն ձևով ճնշված էին, և իրենք էլ կտրվեցին եկեղեցուց: Հենց կրոնի ուսուցչուհու խոսքերով վախեցան կամ մտածեցին, որ ամբողջ դասարանի դիմաց կկանգնեցնի ու

²²⁰ Տե՛ս Հայաստանում ԱՄՆ դեսպանատան պաշտոնական կայք (http://armenia.usembassy.gov/irf2009_arm.html):

մատնացույց կանի, երեխաներն ամաչեցին ու չեն ուզում, որ իրենց անունը միշտ հոլովվի²²¹:

Լինում են, արդյոք, կոնֆլիկտներ:

-Նմանատիպ դեպքեր եղել են՝ միգուցե փոքր, բայց եղել են: Արդյունքում ես էլ եմ ուսուցիչների հետ հանդիպել: Նաև լինում է, որ լրջությամբ չեն վերաբերվում այդ հարցին: Խնդիրը չի լուծվում, որովհետև ուսուցիչների բացատրությամբ՝ դա ծրագիր է, որ իրենք պետք է անցնեն: Խնդիրը հիմնականում ծրագրի մեջ է²²²:

Եթե դասարանում լինում է աշակերտ, որի ծնողները հաճախում են այլ եկեղեցի, ինչպիսի՞ վերաբերմունքի է արժանանում ուսուցչի և առհասարակ մյուս աշակերտների կողմից:

-Ոչ մի խնդիր չի առաջանում²²³:

-Դրական վերաբերմունք է, դասերի ժամանակ էլ խնդիրներ չեն առաջանում²²⁴:

-Առանձնահատուկ վերաբերմունք չկա²²⁵:

Դասավանդման ընթացքում որևէ կոնֆլիկտ գրանցվե՞լ է (դասարանի ներսում կամ ուսուցչի և աշակերտների միջև):

-Կոնֆլիկտ չէ՝ որպես այդպիսին, բայց 1-2 երեխա կա, որոնք, ծնողներին հետևելով, գնացել են որևէ աղանդավորական կազմակերպություն: Մի երեխա ունենք՝ «Եհովայի վկա», և մեկը՝ «Կյանքի խոսք» աղանդից: Պարզապես իրենք սկզբնական շրջանում բացարձակապես ուշադրություն չէին դարձնում առարկային: Բայց պետք է

²²¹ Գյումրու թիվ 28 դպրոցի աշակերտի ծնող, Ավետարանական-Մկրտական եկեղեցու հետևորդ, չի ցանկացել, որ իր անունը նշվի:

²²² Կապանի թիվ 7 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Ավետարանական-Մկրտական եկեղեցի, Եհովայի վկա, չի ցանկացել, որ իր անունը նշվի:

²²³ Նազելի Հակոբյան, Գորիսի թիվ 2 դպրոցի աշակերտի ծնող, Հայաստանյայց Ավետարանական հավատքի եկեղեցի:

²²⁴ Մերի Մարության, Գորիսի թիվ 3 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

²²⁵ Արմինե Բաղդասարյան, թիվ 1 դպրոցի աշակերտի ծնող, Գորիսի Ավետարանական հավատքի եկեղեցի:

իրենց հետ աշխատել, իրենց փոխել, որովհետև իրենք էլ մեր «մուրյալ զավակներն» են: Կոնֆլիկտ՝ այդպիսին, չի գրանցվել²²⁶:

Իսկ ինչպիսի՞ արտահայտություն է ստանում իրենց հետ աշխատանքը:

-Բնականաբար, երբ երեխան ասում է. «Ես ունեմ իմ սկզբունքները», և դու արդեն երեխային և նրա վարքագիծը տեսնելով, հասկանում ես, որ դա իր սկզբունքները չեն, դա աղանդի սկզբունքներն են, որ ինքը վերցրել է: Ու երբ որ մի բան ես ասում, ինքը փորձում է հակառակը ապացուցել, բնականաբար, վիճաբանություն չես սկսում իր հետ: Դու փորձում ես իրեն ճիշտ ուղու վրա դնել: Ավելի շատ բանավեճ, քան թե կոնֆլիկտ²²⁷:

Եղե՞լ է որևէ կոնֆլիկտ այդ առարկայի հետ կապված:

-Եղել է դեպք, երբ եհովականի կամ ուրիշի ծնողը բողոքել է և այլն: Ոչ այս վերջին երկու տարիներին, այլ դրանից առաջ: Հիմա նման դեպքեր չկան²²⁸:

-Կոնֆլիկտ չի եղել, բայց հետաքրքիր բանավեճեր են եղել²²⁹:

Ստորև ներկայացնում ենք մի քանի հատվածներ այս ուսումնասիրությունը պատրաստած կազմակերպության մեկ այլ հետազոտությունից²³⁰:

«Ժամանակ Երևան» օրաթերթը²³¹ տեղեկացնում է. «Լոռու մարզի Մրգահովիտ գյուղի դպրոցի ուսուցիչները կրոնական անհանդուրժողականության արշավ են սկսել: Դպրոցի տնօրենն սպառնացել է քրեական պատասխանատվության ենթարկել Ավետարա-

²²⁶ Նուբարաշեն համայնքի հոգևոր հովիվ տեր Նիկողոս քահանա Հովհաննիսյան, Երևանի թիվ 119 ավագ դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչ:

²²⁷ Նուբարաշեն համայնքի հոգևոր հովիվ տեր Նիկողոս քահանա Հովհաննիսյան, Երևանի թիվ 119 ավագ դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչ:

²²⁸ Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

²²⁹ Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի տնօրեն Արմինե Շեգունց:

²³⁰ Մտեփան Դանիելյան, Վլադիմիր Վարդանյան, Արթուր Ավթանդիլյան, Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում, ISBN 978-92-9235-846-4, Երևան, 2010:

²³¹ Տե՛ս <http://zhamanak.com/news/8698>, 18:13 Yerevan | 14:13 GMT | Thursday 15 October, 2009:

նի հավատքի քրիստոնյաների եկեղեցու անդամներից մեկի երեխաներին այն բանի համար, որ աղանդավորական են: Ուսուցիչները երեխաների շրջանում հարցումներ են անցկացնում՝ բացահայտելու աղանդավորականներին: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչը կոչ է արել մյուս երեխաներին չշփվել աղանդավորականների հետ: Այժմ երեխաները մեկուսացված են ընկերներից: Նման դեպքերը բնորոշ են ոչ միայն Լոռու մարզին, այլև տարածված են ողջ Հայաստանում»:

2009 թ. մայիսի 13-ին «Ժամանակ Երևան» օրաթերթը տպագրել է Մարինե Խառատյանի «Գուգարքի թեմի առաջնորդն ընդդեմ... երեխաների» հոդվածը²³², որտեղ նշված է. «Գուգարքի թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը նախօրեին Վանաձորի նորակառույց եկեղեցու դահլիճում հանդիպել է դպրոցների և մանկապարտեզների տնօրենների հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև մարզպետ Արամ Քոչարյանը, Վանաձորի քաղաքապետը, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետը: Տնօրեններին հրահանգվել է ակտիվ աշխատանք տանել «աղանդավորության», ասել է թե՛ «աղանդավոր» երեխաների դեմ: Ընդ որում, եպիսկոպոսից բացի, ելույթ է ունեցել նաև Լոռու մարզպետը՝ նույն մոտիվներով: Նմանատիպ հանձնարարական տրվել է նաև Սյիսուակի դպրոցների տնօրեններին: Երեկ արդեն Վանաձորի թիվ 9 դպրոցում ուսուցիչներն սկսել են աշակերտների հարցաքննությունը, թե ով ինչ եկեղեցի է հաճախում, այնտեղ մոմ վառո՞ւմ են, թե՞ ոչ: Ուսուցիչները գրանցել են երեխաների անուն-ազգանունները և սպառնացել, որ եթե աշակերտները հաճախեն «աղանդավորականների», այսինքն՝ Հայ Առաքելական եկեղեցուց բացի, այլ եկեղեցիների հավաքներին, խստագույնս կպատժվեն: Բազմաթիվ «բացահայտված» երեխաներ լացելով ու հոգեկան սթրեսի մեջ են դպրոցից գնացել տուն: Մեզ հասած տեղեկություններով՝ ուսուցիչները հետևում են հրահանգներին, քանի որ վախենում են կորցնել աշխատանքը: Ի դեպ, ամիսներ առաջ

²³² Տե՛ս http://religions.am/index.php?option=com_content&view=article&id=523%3A2009-05-14-06-11-17&catid=21%3Azhamanak&directory=19&lang=hy//:

Լոռու մարզի Մպիտակ քաղաքին կից Ջրաշեն և Չիգդամալ գյուղական դպրոցներում նման գործունեությամբ են զբաղվել արդեն ոստիկանները:

Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերությունը 2009 թ. մայիսի 12-ին հեռարձակված ռեպորտաժում լուսաբանել է այդ հանդիպումը. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրինության և Գուգարաց թեմի նախաձեռնությամբ Մպիտակ քաղաքում կայացավ հանդիպում-քննարկում՝ Մպիտակի և տարածաշրջանի դպրոցների տնօրենների մասնակցությամբ: Հանդիպման նպատակն էր՝ դպրոցներում առավել մեծ ուշադրություն դարձնել քրիստոնեական դաստիարակությանը: Նման հանդիպում էր կազմակերպվել նաև Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու դահլիճում, որին մասնակցում էին Վանաձորի բոլոր հանրակրթական դպրոցների տնօրենները: Նպատակը նույնն էր՝ առավել հետևողական դարձնել դպրոցներում քրիստոնեական դաստիարակությունը: Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի խոսքով՝ արդյունավետ քրիստոնեական դաստիարակություն կազմակերպելու համար անհրաժեշտ է հարթել դպրոց և հասարակություն, դպրոց և փողոց հակասությունները, «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի միջոցով աշակերտների ուշադրությունը սևեռել դեպի եկեղեցական տոները, պայքարել աղանդների դեմ»: Ռեպորտաժում Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանն ասել է. «Մեր ինքնության մաս հանդիսացող արժեքներն առավել հստակ, առավել ցցուն ձևով մենք պետք է հետապնդենք միջոցառումների տեսքով անցկացնենք, որպեսզի մեր մանուկները կրթվեն հայեցի ոգով: Մեր քահանաները ևս դպրոցներում հանդիպում են աշակերտության հետ, և է՛լ ավելի շատ հանդիպելու հնարավորություն ենք ստեղծում դպրոց, ուսուցիչ և քահանա հարաբերությունների ծիրում»: Նույն ռեպորտաժում ներկայացվել են Լոռու մարզպետի, դպրոցների տնօրենների խոսքերը: Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը մասնավորապես ասել է. «Աղանդները և

հոգեորությունը տարածված են մեր իրականության մեջ, որն անընդունելի է, որ դպրոցում մենք հանդուրժենք»²³³:

2009 թ. մեր անցկացրած հարցման ժամանակ Վանաձորի թիվ 9 դպրոցի տնօրեն էդիտա Վարդանյանն ասել է. «Այդ երեխաները նախ թաքնված են, որովհետև տանը շատ լավ դաս են անգիր արել, որ երբեք չխոստովանեն դա, ընդհակառակը, մի բան էլ հարձակման անցնեն, ու մենք տեղյակ չենք լինում, որ իսկապես հոգու խորքում նա այլ ուղղության հետևորդ է: Նա կարող է շատ նորմալ, շատ հանգիստ դասը սովորել, պատասխանել, բայց իրականում մարդու հոգին մենք չպետք է բացենք»: Ապա տնօրենն ավելացրեց. «Եթե անգամ համարձակություն ունեցավ և ասաց դրա մասին, այդ դեպքում ի՞նչ է մնում մեզ անելու՝ առանձին գրույցներ երևի: Դասարանային մակարդակով այդ աշակերտները մի քիչ թերարժեքության բարդությամբ են տառապում, որովհետև նրանք գիտեն, որ իրենք մեծամասնություն չեն և իրենց հաստուկենտ նվազ ուժով ոչինչ չեն կարող անել և չեն էլ ուզի իրենց ընկերների ծաղրանքին, հարձակումներին արժանանալ, ավելորդ մականուններ վաստակել, որը երբեմն պատահում է, և դա բնական է: Էդպես էլ պետք է լինի. այն, ինչ մեզ հետ չի, մեր դեմ է, իսկ եթե մեր դեմ է, մենք դրա դեմն առնելու ձևը գիտենք»²³⁴:

Այս դեպքի առնչությամբ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնը նամակով դիմել է ԿԳ նախարար Ա. Աշոտյանին, որտեղ ներկայացվել է տիկին Է. Վարդանյանի հետ այդ հարցազրույցի սղագրությունը²³⁵:

«Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը գերազանցում է իր լիազորությունները և միջամտում է պետության գործերին, և սա առաջին անգամը չէ», - մեզ հետ զրույցում այսպես գնահատեց իրավա-

²³³ Հեռուստահաղորդման տեսագրությունը սույն փաստաթղթի հեղինակների մոտ է: Ստեփան Դանիելյան, Վլադիմիր Վարդանյան, Արթուր Ավթանդիլյան, Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում, ISBN 978-92-9235-846-4, Երևան, 2010:

²³⁴ Ստեփան Դանիելյան, Վլադիմիր Վարդանյան, Արթուր Ավթանդիլյան, Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում, ISBN 978-92-9235-846-4, Երևան, 2010:

²³⁵ Նամակը նախարարություն մուտքագրվել է 09/09/2009-ին: ԿԳ նախարարությունը մեզ չի պատասխանել, դպրոցի տնօրենը, մեր ունեցած տվյալներով, չի պատժվել:

պաշտպան, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը՝ շարունակելով. «Նա իր գործողություններով հրահրում է կրոնական անհանդուրժողականություն և թշնամանք կրոնական այլ ուղղությունների նկատմամբ, և Լոռու մարզում կրոնական պատկանելության հիմքով ունեցողությունների պատասխանատվությունն ընկնում է անմիջապես Մեպուհ Չուլջյանի վրա: Նաև տեղի իշխանությունները՝ մարզպետի, քաղաքապետի, համայնքների ղեկավարների մակարդակով իրենց նման գործողություններով կրոնական անհանդուրժողականություն են սերմանում և պատակտում մտցնում հասարակության մեջ՝ կրոնական պատկանելության հողի վրա»:

Հաջորդ օրը նույն թերթը «Եկեղեցին անցել է «աղանդավոր» երեխաների դեմ պրակտիկ գործունեության: Մարզպետարանը հերքում է, ծնողը՝ հաստատում»²³⁶ հոդվածում շարունակում է լրագրողական հետաքննությունը. «Երեկ մեզ հաջողվեց գրուցել վանաձորի ծնողի հետ, որի երեխաների հետ աշխատանք էր տարվել դպրոցում: Ծնողը, ով չցանկացավ ներկայանալ, մեզ պատմեց հետևյալը. «Սկզբից ցածր դասարանցիների անուններն են գրանցել: Երեխան ասաց՝ ուսուցչուհին երկու-երկու կանչում էր ու հարցեր տալիս իրենց: Հարցրել է՝ որ եկեղեցին եք հաճախում, այնտեղ մոմ վառում եք, այնտեղ ձեզ ինչ են տալիս: Ավելի բարձր դասարանցիներին արդեն բացահայտ, ողջ դասարանի մոտ կանգնեցրել, պախարակել են, թե դուք աղանդավոր եք, եթե մոմ չեք վառում այնտեղ, ուր գնում եք՝ հոգեորսներ են, էլ չեք գնալու էդտեղ: Փոքր երեխաս հուզված, լացելով, վախեցած եկավ տուն, մեծս նույնպես վախեցած է եկել տուն», - ասաց ծնողը՝ շարունակելով. «Իհարկե, շատ վատ եմ գնահատում, երեխաների վիճակը տեսնելով՝ ես ինքս էի արդեն վատ վիճակում: Ո՞նց կարելի էր նման կերպ վարվել երեխաների հետ»: Մեզ հետ գրուցած մեկ այլ ծնող զարմացավ, որ մարզպետարանը հերքում է փաստը. «Ինչպե՞ս թե չի խոսվել: Ամբողջ Վանաձորն է «Լոռի» հեռուստատեսությամբ տեսել: Առաջինն

²³⁶ Տե՛ս «Ժամանակ Երևան», 15 հոկտեմբերի 2009թ.:

ասվել է, որ «Հայ եկեղեցու պատմության» դասավանդումները պետք է ուժեղացնել, հետո՝ պայքարել աղանդավորների դեմ»:

Արդյո՞ք ուսուցիչների գործունեության շնորհիվ եղել են կրոնափոխության դեպքեր. «Ես չեմ կարող ասել՝ նման դեպքեր հստակ եղել են, թե՞ ոչ. նա ինքն ավելի լավ կպատասխանի, բայց իմ ունեցած տվյալներով՝ երեխաներ են եղել, որ հիմա արդեն ընտրել են հոգևոր ճեմարան գնալու տարբերակը: Հավանաբար, դա տեր Նիկողոսի ազդեցությունն է:

Բացի այդ, ընդգծված ագրեսիա կար Եհովայի վկաների կողմից, որոնք հիմա արդեն համակերպված լուռ նստում են և լսում են և չեն հակադարձում: Այսինքն՝ նրանք առաջ անընդհատ խանգարում էին դասը, հիմա լուռ լսում են (ուսմասվարի կարծիքն է):

Բացահայտ դժգոհություն չկա: Ինքը որպես քահանա և որպես մարդ՝ շատ ճիշտ մոտեցում ունի և ճիշտ է՝ մանկավարժական կրթություն չի ունեցել, բայց շատ լավ մանկավարժ է: Այսինքն՝ եթե ինքը կարողանում է այնպիսի ազդեցություն գործել ամբողջ լսարանի վրա, որ իրեն հարգում և լսում են, դա մեծ առավելություն է, և կարծում եմ, որ ինքն իր վերաբերմունքով այնպիսի մթնոլորտ է ստեղծել, որ հազիվ թե իրեն հակադրվեն»²³⁷:

-Նախ ասացի, որ մի 2 հոգի են այն երեխաները, ովքեր դարձի գալու խնդիր ունեն, բայց կան շատ երեխաներ, որոնց համար պարզապես հետաքրքիր չէր եկեղեցին, բայց այսօր ես եկեղեցում պատարագի ժամանակ տեսնում եմ իրենց»²³⁸:

Եղել են, արդյո՞ք, աշակերտների հավատափոխության փորձեր ուսուցչի կամ նրա հրավիրած անձանց կողմից:

-Եղել է այդպիսի փորձ Ջրաշեն համայնքում, նորից մոտ չորս տարի առաջ: Փորձել են երեխաների հետ աշխատանք տանել, հետո մենք միջամտել ենք և վերացրել: Սկզբունքը հետևյալն է. դպրոցում նման պրոպագանդա արգելված է: Մենք դասավանդում ենք եկեղեցու պատմություն, բայց նույնիսկ առաքելական եկեղեցի չենք

²³⁷ Երևանի թիվ 119 ավագ դպրոցի տնօրեն Հ. Կարապետյան:

²³⁸ Նուբարաշեն համայնքի հոգևոր հովիվ տեր Նիկողոս քահանա Հովհաննիսյան, Երևանի թիվ 119 ավագ դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչ:

պրոպագանդում: Դասավանդման ընթացքում երեխան ինքը պետք է հասցնի կողմնորոշվել. եթե շեղված է, հետ գա²³⁹:

-Մեզ մոտ միայն եհովայական կա, բայց դա այդքան արտահայտված չէ, որ դարձի բերելու խնդիր լինի²⁴⁰:

7.2. Դասերին չմասնակցելու խնդիրը

Թուլեղոյի սկզբունքների համաձայն՝ «Կրոնների կամ հավատքների ուսուցման ժամանակ պետությունները բոլոր նրանց, ովքեր ներկայացնում են նման դասընթացներին մասնակցելու հիմնավոր առարկություն, պարտավոր են թույլատրել ազատվել դասերից: Ինչպես նշված է Մաս II-ում, ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն հաստատել է, որ որևէ մասնավոր կրոնի կամ հավատքի մասին ուսուցում պարունակող հանրային կրթությունը կարող է համապատասխանել մարդու իրավունքների միջազգային օրենսդրությանը այն պայմանով, որ «այդ ուսուցումը կատարվում է առանց խտրական վերաբերմունքի կամ այլընտրանքների, որոնք համապատասխանում են ծնողների և խնամակալների ցանկություններին»: Այս պահանջը կարող է բավարարվել՝ ուսանողին այդ դասի պահանջներից ազատելով կամ էլ այդ դասընթացը ընտրովի դարձնելով»²⁴¹:

Եղե՞լ է որևէ դեպք, որ աշակերտը կամ աշակերտի ծնողը չի ցանկացել մասնակցել այդ առարկայի դասերին:

- Իմ երեխան մի պահ չի ցանկացել մասնակցել, որովհետև իրեն օգտագործում էին որպես օրինակ՝ ներկայացնելու այդ կրոնական կառույցը: Դա հոգեբանական ճնշում էր²⁴²:

Եղե՞լ է որևէ կոնֆլիկտ այդ առարկայի հետ կապված:

²³⁹ Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

²⁴⁰ Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի տնօրեն Գարինե Հովսեփյան:

²⁴¹ Թուլեղոյի ուղեցուցային սկզբունքները հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ, Բաժին V, ենթաբաժին գ:

²⁴² «Վերածնունդ» Ավետարանական-Մկրտական եկեղեցու հովիվ Մամիկոն Համբարյան, Գյումրի:

-Բազմաթիվ: Սակայն գրանցված՝ ոչ: Իմ երեխան փորձել է պաշտպանել իր հայացքը, իր հավատքը, իր եկեղեցին և հետագայում գնահատականների անկում է եղել: Երեխան չի գնահատվում ըստ իր գիտելիքների, և նրա գնահատականն արհեստականորեն իջեցվում է²⁴³:

Եղել է որևէ դեպք, որ աշակերտը կամ աշակերտի ծնողը չի ցանկացել մասնակցել այդ առարկայի դասերին:

-Կարծեմ Եհովայի վկաների երեխաների հետ է այդպիսի դեպք պատահել: Ընդհանուր առմամբ, մեր համայնքների երեխաները դեմ չեն ուսումնասիրել Հայ առաքելական եկեղեցու պատմությունը: Մենք չենք կարծում, որ դա վտանգավոր ուսմունք է մեզ համար, բայց երբ սկսում են հակադրությունները և սկսում են դրանով ճնշել երեխաներին, դա լավ չէ²⁴⁴:

- Եղել է, բայց ասել են, որ սա պարտադիր է²⁴⁵:

- Իրենք «աղանդավորները» կարող են չմասնակցել աղոթքին²⁴⁶:

Դասերի սկզբում կամ ընթացքում աղոթում են, կամ որևէ կրոնական ծիսակատարություն կատարո՞ւմ են:

«Այո՛» են պատասխանել Գյումրու թիվ 41 դպրոցի տնօրեն Անահիտ Աթոյանը, Գյումրու թիվ 41 դպրոցի ուսուցչուհի Մարինե Ղազարյանը, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցի փոխտնօրեն Սվետլանա Մելքոնյանը, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցի ուսուցչուհի Անահիտ Մալխասյանը, Գյումրու թիվ 40 դպրոցի աշակերտի ծնող Արթուր Գևորգյանը:

- Մի ժամանակ աղոթում էին, հիմա՝ ոչ²⁴⁷:

-Ուսուցիչն առաջարկել է «Հայր մեր» արտասանել, բայց չի ստիպել: Աշակերտի բացատրելուց հետո խնդիրներ չեն եղել²⁴⁸:

²⁴³ «Վերածնունդ» Ավետարանական-Սկրտական եկեղեցու հովիվ Մամիկոն Համբարյան, Գյումրի:

²⁴⁴ «Մեծ շնորհ» Ավետարանական-Սկրտական եկեղեցու հովիվ Վահան Պողոսյան, Գյումրի:

²⁴⁵ Կապանի թիվ 7 միջն. դպրոցի աշակերտի ծնող, Եհովայի վկա:

²⁴⁶ Գյումրու թիվ 37 ավագ դպրոցի փոխտնօրեն Սվետլանա Մելքոնյան:

²⁴⁷ Գյումրու թիվ 28 դպրոցի աշակերտի ծնող Գայանե Գասպարյան, Եհովայի վկա:

²⁴⁸ Գյումրու թիվ 41 դպրոցի աշակերտի ծնող Ելենա Հովհաննիսյան, Եհովայի վկա:

-Մենք երբեմն նման մեթոդից ենք օգտվում. ենթադրենք՝ ուսուցիչը դասարանին տանում է մեր եկեղեցի: Դասը կենդանի են անցկացնում: Այնտեղ կարող են լսել ժամերգություն, եկեղեցական արարողություններ: Այդ սուրբ երկյուղածությունը, որ նույնիսկ չափահասներինս մոտ է արտահայտվում Աստծո տունը մտնելիս, արդեն ամեն բան հուշում է, քան դասարանի չոր նստարանները: Դասը տեղափոխվում է եկեղեցու կամարների ներքո, և այնտեղ քահանայի հետ հանդիպումն անգամ լիովին փոխում է երեխաներին: Տեր Վահանն ասում է, որ սա միակ դպրոցն է, որ ուզում է նման մեթոդներով հիմնավորի և տարբերությունները ցույց տա: Իսկ աղանդավորները նման բան ունեն, բացի ոռնոցներից՝ չունեն²⁴⁹:

-Դպրոցում եղել են ընդհանուր զգուշացումներ՝ զգույշ եղեք մյուս կրոնական կազմակերպություններից. միակ ճշմարիտը ՀԱԵ-ն է²⁵⁰:

-Պատահական մարդիկ դպրոցում չեն կարող լինել: Նրանք չեն կարող դպրոց ներթափանցել: Ի վերջո, դպրոցն ունի իր ներքին կարգապահական կանոնները և ռեժիմը: Նրանք ավելի շատ փողոցներում և տներում են տարածում իրենց հավատը²⁵¹:

-Աշակերտներ ունենք, որ դարձի են եկել՝ իմ համոզելով, ծնողների վրա կատարած աշխատանքով: Հիմնականում ցածր դասարանում է եղել: 2-3 աշակերտ կա, որ էլ չեն գնում «աղանդավորական միջոցառումներին»: Մեկը հենց իմ դասղեկական դասարանում է, արդեն չի գնում: Հենց ես վերցրի դասղեկությունը, ինքն էլ չի գնում, որովհետև ասել եմ²⁵²:

-Մենք ունեցել ենք մի դեպք անցած տարի, երբ դասարանից մի աղջիկ սկսեց հարել մեկ այլ աղանդի (Եհովայի վկաների հետ էր առնչվում): Դասարանը պարզապես չընդունեց այդ երեխային, և նա ստիպված դուրս եկավ դպրոցից: Ինքը հասկացավ՝ ինքն ինչ միջավայրում է՝ չնայած իմ մեղմելու փորձերին, բայց ինքն ուղղակի այս

²⁴⁹ Վանաձորի թիվ 9 դպրոցի տնօրեն Էդիտա Վարդանյան:

²⁵⁰ Վանաձորի թիվ 20 դպրոցի աշակերտի ծնող, Ավետարանական համայնքի, չի ցանկացել անունը նշվի:

²⁵¹ Վանաձորի թիվ 18 դպրոցի տնօրեն Արմեն Մարաբյան:

²⁵² Վանաձորի թիվ 18 դպրոցի ուսուցչուհի Հերմինե Խառատյան:

տարի դուրս եկավ: Ես նախ խոսեցի ծնողի հետ: Երբ որ հասկացա, որ խնդիրն արդեն ընտանեկան է և շատ խորն է, հասկացա, որ պարզապես հնարավոր չէ: Եվ նաև իր ընկերներն ու ընկերուհիները, խոսելով, բացատրելով փորձեցին հասկացնել: Ամեն դեպքում ելքն այդպես ստացվեց, ինչը ես չէի ուզի²⁵³:

-Հիմնականում դասերի ընթացքում բացատրում ենք, դեպքեր ենք պատմում, որ Հայաստանում շատ բաներ են կատարվում: Իմ դասարանում մի աշակերտուհի «դրա արդյունքում» այլևս աղանդավորների մոտ չի գնում, մեկ այլ աշակերտ նույնպես աղանդավոր էր, հետո հրաժարվեց: Անցած տարի էդ խմբավորման՝ կարծեմ թե ավետարանականների հոգևոր առաջնորդը եկել էր մեզ հետ կովելու, որովհետև ինչ-որ մանկական խմբակներ ունեն, որտեղ երեխաներին են հավաքում, Աստվածաշունչ են կարդում, մեր երեխաները չէին գնում: Ու ոնց որ եկել էին վիճելու, որ՝ Դուք թույլ չեք տալիս: Բայց մենք երբեք չենք ասել: Ուղղակի մի երեխա դասը լսել է ու հասկացել, որ ավելի լավ է դպրոցում սովորի էդ ամեն ինչը (Լատուրա Մամաջանյան, Վանաձորի թիվ 25 դպրոցի ուսուցչուհի):

-Նման խնդիր չի առաջանում, որովհետև եթե այդ առարկայից անբավարար գնահատական ստանան, հաջորդ դասարան փոխադրվելու-չփոխադրվելու խնդիր կլինի: Միբու՛ր է թե չի սիրում, պետք է սովորի: Դա պարտադիր ուսումնական պլանով նախատեսված առարկա է, որը ենթակա է պարտադիր յուրացման: Դա ֆակուլտատիվ չէ²⁵⁴:

²⁵³ Վանաձորի թիվ 24 դպրոցի ուսուցչուհի Աննա Վարդերեսյան:

²⁵⁴ Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետ Մայիս Խաչատրյան:

8. Եզրահանգումներ և առաջարկություններ ՀՀ իշխանություններին

Մույն հետազոտությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները. «Հայոց եկեղեցու պատմություն» դասագիրքը միտված է ուսուցանելու ոչ թե կրոնի պատմությունը, այլ Հայ առաքելական սուրբ եկեղեցու դավանաբանությունը: Այդ երևույթն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, ներպետական նորմերին և միջազգային սկզբունքներին, եթե պահպանվում են ուսուցման նպատակի, մեթոդիկայի, առարկայի մատուցման ժողովրդավարական եղանակները, եթե ուսուցումը կատարվում է օբյեկտիվության և բազմակարծության սկզբունքների պահպանմամբ: Մինչդեռ, տվյալ դեպքում ուսուցման նպատակը և եղանակը մի շարք լուրջ խնդիրներ են առաջացնում ներպետական և միջազգային իրավունքի մի շարք նորմերի տեսանկյունից: Դրանք են՝

Հայ առաքելական սուրբ եկեղեցին ունի բացարձակ մենաշնորհ պետական կրթական հաստատություններում կրոնական ուսուցման իրականացման հարցում,

կրոնական ուսուցման եղանակները հետապնդում են Հայ առաքելական սուրբ եկեղեցու դավանաբանության դոկտրինացման նպատակ, որն արգելվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 2-րդ հոդվածով,

ուսուցման ժամանակ իրականացվում է ակտիվ քարոզչություն Հայ առաքելական սուրբ եկեղեցու դավանաբանության օգտին, որը կրում է համատարած բնույթ և խրախուսվում է պետական իրավասու մարմինների կողմից: Մա խախտում է կրթության աշխարհիկ բնույթը՝ սահմանված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով: Ավելին, կրթության նման եղանակը ծնողների կրոնական և փիլիսոփայական հայացքների նկատմամբ հարգանքի բացակայության դրսևորում է, ուսուցման ժամանակ, ինչպես նաև դպրոցական միջավայրում իրականացվում է ակտիվ հակաքարոզչություն այլ համոզմունքների և կրոնական ուղղությունների և նրանց հետևորդների նկատմամբ, որը վերաճում է անհանդուր-

ժողականության, ընդհուպ ոչ պատշաճ պրոզելե-տիզմի հատկանիշներով: Պետական իրավասու մարմիններն, այս առումով, դրսևորում են անգործություն, որի հետևանքով Հայաստանի Հանրապետությունը խախտում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ, 14-րդ հոդվածներով, 1-ին Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված իր պոզիտիվ պարտավորությունները, դասընթացներին մասնակցությունը պարտադիր է, որը հակասում է վերը վկայակոչված կոնվենցիոն պահանջներին: Թեև Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 2-րդ հոդվածը չի արգելում ազգային պետություններին հանրակրթական դպրոցներում կրոնական ուղղվածության դասընթացներ կազմակերպել, այդուհանդերձ, որպեսզի չառաջանա կոնֆլիկտային իրավիճակ աշակերտների ու ծնողների կրոնական և փիլիսոփայական հայացքների միջև, պետությունները պարտավոր են իրենց կրթական համակարգում կրոնական պարտադիր դասընթացներին սահմանել այլընտրանքային համակարգեր: Մա բխում է այն հիմնարար մոտեցումից, որ երեխայի կրթության և դաստիարակության հարցում առաջնային պատասխանատվությունը կրում է ծնողը, և իր այդ բնական պարտականությունը կատարելիս նա կարող է պետությունից պահանջել հարգել իր կրոնական և փիլիսոփայական համոզմունքները²⁵⁵: Միևնույն ժամանակ, «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցման ընթացքում քարոզվում է ազգային ու կրոնական նույնականացման թեզը, որը խախտում է կրոնական փոքրամասնությունների իրավունքները: Հետևաբար, քանի դեռ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան հանրակրթական դպրոցներում մատուցվում է որպես Հայ առաքելական սուրբ եկեղեցու դավանաբանություն, և քանի դեռ դրա շրջանակում իրականացվում է դավանաբանական քարոզչություն, անհրաժեշտ է հնարավորություն տալ այլ համոզմունքների դավանող աշակերտներին բաց թողնել այդ դասընթացները՝ առանց որևէ հետևանքների կամ այլընտրանքային աշխարհիկ առարկայի ընտրության հնարավորություն ընձեռել:

²⁵⁵ Կելդրսենը, Բուսկ Մադսենը և Պեդերսենը *ընդհեմ Դանիայի*, թիվ 5095/71, 5910/72, 5926/72, § 52:

Հիմք ընդունելով վերոնշյալ եզրահանգումները՝ ՀՀ կառավարությանը ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի ներքո անհրաժեշտ է վերանայել հանրակրթության բնագավառում Հայաստանի Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարման շրջանակները, մասնավորապես, պետական կրթական հաստատություններում կրոնական թեմաներով առարկաների ուսումնական ծրագրերի ու դասագրքերի մշակման, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանման և դպրոցներին ուսուցիչների թեկնածությունների ներկայացման հարցերում:

Անհրաժեշտ է արգելել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հովանու ներքո գործող Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի՝ հանրակրթության ոլորտում որևէ վերահսկողական գործառույթի իրականացումը: Կրոնական մարմինն նման գործառույթով շնորհելը խախտում է եկեղեցու՝ պետությունից անջատ լինելու սահմանադրական սկզբունքը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված՝ կրթության աշխարհիկ սկզբունքը, քանի որ այդ սկզբունքն արգելում է պետությանը որևէ կրոնի կամ համոզմունքի նախապատվություն տալը, և այդ սկզբունքի հովանու ներքո պետությունը հանդես է գալիս անկախ արբիտրի դերում և ապահովում է կրոնի և խղճի ազատությունը: Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի գործունեությունը ներկայումս իրականացվում է այս սկզբունքների կոպիտ խախտումներով, որոնք, ի վերջո, վերագրվում են պետությանը:

Անհրաժեշտ է հիմնովին վերանայել «Հայոց եկեղեցու պատմություն» դասագրքի բովանդակությունը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով պատմական իրադարձությունների լուսաբանմանը, այլ ոչ թե դավանաբանական քարոզին:

Անհրաժեշտ է պետական մարմինների գործուն միջատությունը, որպեսզի դպրոցներում արգելվի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանաբանության քարոզչությունը և այլ կրոնների և համոզմունքների նկատմամբ հակաքարոզչությունը: Այս

առաջարկությունը բնավ չպետք է հասկանալ ՀԱՄԵ-ի դավանաբանության մասին աշակերտներին ուսուցանելուց հրաժարում: Ինչպես արդեն նշվել է, այդ երևույթն ինքնին խնդիրներ չի առաջացնում մտքի, խղճի և կրոնի ազատության, կրթության իրավունքի տեսանկյունից, եթե կրոնական ուսուցումը չի հետապնդում որևէ կրոնի կամ համոզմունքի դոկտրինացման նպատակ, և ուսուցումն իրականացվում է օբյեկտիվության, չեզոքության և բազմակարծության ժողովրդավարական սկզբունքների պահպանմամբ: Ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ավանդույթների առկայությունը պետությանը չի ազատում Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման պարտականությունից:

Անհրաժեշտ է ստեղծել կրոնի առարկայի դասընթացների այլընտրանքային համակարգեր այն աշակերտների համար, որոնց ծնողները ցանկություն են հայտնել, որ իրենց երեխան չմասնակցի տվյալ դասընթացներին: Նման այլընտրանքային համակարգերի կիրառումը որևէ կերպ չպետք է ազդի երեխայի առաջադիմության գնահատման վրա և ոչ էլ պետք է համակարգը այնպես կիրառել, որ դասընթացներից հրաժարվելը հանրային խարանի արժանանա:

Անհրաժեշտ է հանրակրթական դպրոցներում սահմանափակել որևէ կրոնի կամ եկեղեցու ներկայացուցիչների քարոզչական գործունեությունը, այդ թվում՝ առանձին թեմաներով դասախոսությունները, քարոզները, դաստիարակչական ուսուցումները՝ ապահովելով հանրակրթական դպրոցներում աշխարհիկության սկզբունքի պահպանությունը:

Անհրաժեշտ է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան փոխարինել «Կրոնների պատմություն» առարկայով, որտեղ հիմնական ուշադրություն կդարձվի ոչ թե որևէ կրոնի կամ կրոնական ուղղության դավանաբանական ու կրոնական քարոզին, այլ աշխարհում տարածված հիմնական համաշխարհային ու ազգային կրոնների վերաբերյալ համակողմանի ու օբյեկտիվ գիտելիքների փոխանցմանը, որն ամրագրված է նաև Թուլեդոյի սկբունքներով:

Ստեփան Դանիելյան, Արա Ղազարյան, Հովհաննես
Հովհաննիսյան, Արթուր Ավթանդիլյան

**ԿՐՈՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ**

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 8 տպ. մամ.

